



ԵՐԻՒՈՒՆ

1970 - 6

ՈՆԾԵ
ԻԵ ՏԱՐԻ

Մայիս

ԷՂՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՂՄԻԱԾԻՆԻ

Ե

1970




Թ Ե Մ Ա

Ա Խ Ո Տ Ա Ր Ա

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

S. S. Վ Ա Զ Գ Ե Կ Ի Ա Խ Ա Զ Ա Ն Ո Յ

Ա Ե Հ Ա Փ Ա Ր Ի Ե Ւ Ս Ր Բ Ա Զ Ե Ա Գ Ո Յ Ե Ն Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ւ Ի
Ա Մ Ե Ւ Ա Յ Ե Ն Հ Ա Յ Ո Յ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌՈ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԲ
ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՄԱՀՎԱՆ
ԵՐԵՔԱՐՅՈՒԹԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ.**

ՎԱԶԳԵՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ
ԱՍՏՈՒԺՈՅ ԵԻ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՄ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ
ԷԶՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂԶՈ՞ՅՆ ԵԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱԽՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱԶՆՈՅ,
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՄՐԲՈՅ ԵՐՈԽԱՊԵՏԻ Տ. ԵՊԻՉԵՒ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ
Տ. ԾՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵԻ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵԻ ԹԱՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴՈՅ ԵԻ ՊԱՇՏՈՆԷՒՅ ԵԻ ՄԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԽՏԱՑԵԱԼ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Զայնու ժամանակաւ բազում էին երևկի վարդապետք յէջմիածին, քաջաբանք, քանատեղծք աստուածային գրոց, քաջք գիտունք և հմուտք, լորոց մի է և Առաքել վարդապետն վիպասան»:

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵԶԱՑԻ

Յիշենք անցեալը, արդար գնահատելու համար մեր ներկան, և յատակ տեսնելու համար ուղիղ հանապարհը ապագային:

Հազարազանգ Անիի անկումէն և Կիլիկեան հայոց թագաւորութեան կործանումէն յետոյ, հայ ժողովուրդը ապրեցաւ իր պատմութեան ամենամոռալ դարերը: Տաննեօթերորդ դարու սեմին, ան արդէն իր հոգեվարքը կ'ապրեր,

մարմնապէս՝ արինաքամ, հոգեպէս՝ ինքնակորոյս, իմացապէս՝ խաւարի մէջ ընկղմած: Հոգեվարքի մէջ էր նաև Հայաստանեաց եկեղեցին: Հայաստանը ամբողջ աշխարհ մըն էր աւերակներու և փլած հոգիներու, յուսահատութեան ծանր կապարի տակ կրած: Հայր կորսնցուցած էր զգացումը՝ իր ազգութեան, իր քաղաքակրթութեան: Մոոցուած էին գիր ու գրականութիւն: Հանգած էր ոգին հայոց պատմութեան: Խոկ վերջին հարուածը եկեր էր իշեցնելու, մեր անտէր ու թշուած ժողովուրդի գլուխն, Շահաբբասեան բռնագաղթը, երբ տասնեակ հազարաւոր հայ ընտանիքներ քշուեցան դէպի հեռաւոր ափերը Պարսից երկրին: Կը թուէր թէ տասնեօթերորդ դարը տապանաքարը պիտի դնէ հայոց պատմութեան:

Ահա այդպիսի դաժան դարու մը սեմին, այդպիսի ողբերգական մէկ պահուն, մեր պատմութիւնը կ'արձանագրէ ոգեկան ուժերու անհաւատալի ու զարմանալի զարթօնքի մը փալլատակումը: Հայոց աշխարի քաօսին մէջ, շարժիլ կը սկսի լոյսի մը ճառագայթը:

Վանքերու խոլ անկիններէն, դարերու մոխիրը թոթափած, տեսիլք ունեցող հայ վանականներ, կը բարձրացնեն իրենց ճակատները դէպի երկինք, կը սրափին ցեղին մահուան քոնէն, կը զգան հոգևարքը եկեղեցին ու ազգին, ու կը տեսնեն ճանապարհը փրկութեան: Այդ օրերուն սակափին կարելի չէր մտածել իսկ ազգային ազատագրական շարժումի մը մասին, բայց փրկարար լոյսը կը սկսի ճամբայ բանալ՝ կրօնական զարթօնքի և ազգային դպրութեան ուղիով:

Այդ հոգևոր ու ազգային զարթօնքի առաջին դրօշակակիրները կը հանդիսանան հոյլ մը ովատեալ վանականներ, որոնք հիմը դրին Սիւնեաց մեծ Սևապատին, Տաթևի վանքին մօս, ԺԷ դարու սկիզբներուն: Խարխած հին վանքերը վերանորոգելու, դպրանցներ բանալու և «Հայոց ազգը լուսարուելու» շարժումը, տակաւ գետին կը գտնէ ու կը տարածուի: Ու շոտով, շարժումին կերպոնք կը դառնայ Մայր Աթոռ ս. Էջմիածին: Նոր ճառագայթուումով կը զարթնի հայոց քրիստոնէական ոգին, կը սկսի տարածուիլ հայ գիրն ու գրականութիւնը, կը հիմնուին բազմաթիւ դպրանցներ, կը զարթնի հայոց ազգային արժանապատութեան զգացումը և պատմութեան ոգին: Ստրուկ դարձած, յօշոտուած ու յուսալքուած հայը կը սկսի ճանչնալ ու զգալ իսկութիւնը և ազատութիւնը իր հոգիին:

Հայ վերածնունդի այս շարժման կարևոր դեմքերէն ու դերակատարներէն մին կը հանդիսանայ Առաքել վարդապետ Դաւիթիմեցին, միաբանը սուրբ Էջմիածնին, աշակերտը շինարար Փիլիպպոս կաթողիկոսին, որուն հրամանաւ գրի կ'առնէ իր յայտնի պատմագրութիւնը՝ «Պատմութիւն Առաքել Դաւիթիմեցոյ, սակա դիմուածոց Հայաստանեաց ի գաւառէն Արարատայ և մասին Գողթան գաւառի» զոր կ'աւարտէ 1661 թուականին, Յակոր կաթողիկոսի օրով: Առաքել վարդապետ, այդ բախտորոշ տարիներուն, ս. Էջմիածնի հայատաւոր ու հայրենասէր հոգևորականներու առաջին շարքին վոյա կը գտնուի՝ իբրև եկեղեցոյ լուսամիտ ծառայ և քաշախրտ քարոզիչ, իբրև ուսուցիչ և գրող, իբրև հաւատարիմ ու ժրաշան գործակից Հայոց Հայրապետներուն: Զինուրեալ վարդապետը պատուվ կը կատարէ իր պարտը նաև իբրև հայրապետական նորիսակ դէպի Յունաստան, Խապահան, Ամասիա, Սեբաստիա, Ոտիս, Հալեպ և Երուսաղէմ, ամենուրեք ցիրուցան հայութեան տասնելով Ամենայն Հայոց կաթողիկոսի օրինութիւնը և հայրենիքի հայ հոգևոր զարթօնքի աւետիսը, ապահովելով միաժամանակ, պանդուխտ հայութեան

նիւթական օգնութիւնը և Էջմիածնի պայծառութեան և Հայաստանի վանքերու շինութեան ի խնդիր:

Դարիմեցի վարդապետը իր ամբողջ կեանքով ու գործունեութեամբ, համակ Աերշնչում է, համակ նուիրում, անդով աշխատանք, անսակարկ ծառայութիւն, և մարմնացումը իր ժամանակի հայոց վերածնած քրիստոնէական հաւատքին և պայծառ հայրենասիրութեան: Ծննարտապէս առաքելատիպ հայ հոգեորսականն է, սուրբ Էջմիածնի պաշտամունքով ոգեշնչուած: Այսօր ալ, երեք հարիր տարիներու բարձունքէն, աստուածաւը ու հայրենանուէր վարդապետը կը պատգամէ մեզի ամենու՝ «Թ վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»:

Օրինութիւն և լոյս Դարիմեցի Առաքել վարդապետի սուրբ յիշատակին: Այսու Մեր կոնդակով կ'առաջադրենք ու կը պատոփենք, որպէսզի Հայաստանեաց բոլոր եկեղեցիներուն մէջ հանդիսաւոր հոգեհանգստեան արարողութիւններ կատարուին Առաքել վարդապետի յիշատակին, անոր մահուան երեքհարիրամեակի առթի, յառաջիկայ մազիս ամսուան ընթացքին և կենդանի խօսքով ու հրատարակութիւններով ընդգծուին կեանքն ու վաստակը Մայր Աթոռու վաստակաշատ միաբանին:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողը եղերութ հաւատոցն» (Երր. ԺԳ 7): Ամէն:

Կայ Ձե Ա

**ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

Տուա կոնդակս ի 21-ն լունուարի

1970 փրկչական ամի,

ևս ի տումարիս հայոց Ռումի,

ի մայրավանս սրբոյ Էջմիածնի

ՀՄՌ. 673





ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՌԱՋԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑԻ

Լրացավ Մայր Աթոռի միաբան, կաթողիկոսական նվիրակ և պատմազիր Առաքել վարդապետ Դավրիժեցու մահվան 300-ամյակը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 21 հունվար 1970 թվակիր համար 673 կուղակով հրահանգում էր մայիս ամսում՝ Հայաստանյաց բոլոր եկեղեցիներում հանդիսավոր հոգեհանգիստ կատարել Առաքել վարդապետի հիշատակին և կենուանի խոսքով՝ ու հրատարակություններով ընդգծել հրա կյանքն ու գործունեությունը:

Վեհափառ Հայրապետը իր կոնդակում քննորագրելով ժամանակաշրջանը, նշում էր, որ հայ ժողովուրդը ԺԷ դարի սկզբնի ապրում էր իր հոգեվարքը՝ «մարմնապէս արինաքամ, հոգեպէս հիքնակորոյս, իմացապէս խաւարի մէջ ընկղմած»: Հոգեվարքի մէջ էր նաև Հայաստանեաց եկեղեցին: Կը բուէր թէ տասննեօթերորդ դարը տապանաքարը պիտի դնէ հայոց պատմութեան»:

1441 թվականին հայրապետական Աթոռի իր պատմական, բնիկ վայրը՝ ս. Էջմիածին փոխադրվելոց հետո, 1460—1620 թվականները հանդիսացան մեր եկեղեցու պատմության ամենամոռալ և անլյալ շրջանները, մեր երկրում տիրող քաղաքական, տնտեսական դաժան պայմանների բերումով:

Դավրիժեցին սրտի մորմորով գրում է. «Ոչ գիրս գիտէին և զօրութիւն գրոց... տգիտութեամբ խոպանացեալ և կորդացեալ էր ազգն Հայոց»:

Դժվար է պատկերացնել ավելի ճշգրիտ, բայց և նոյնքան դառ բնորոշում՝ բնութագրելու համար մեր ԺԶ—ԺԷ դարերի կյանքը: Հայը կորցրել էր իր պետականությունը:

Արևելքից անքնիտան հորդում էին ավերիչ հոսանքները: Երկիրը դարձել էր անապատ, իսկ ժողովորդը՝ ցիրուցն: Օսմանյան և պարսկական պետությունների միջև մղվող հաճախակի ավերիչ պատերազմների պատճառով, ամայացել էին հայ մշակույցի օշաբները՝ վանքերը, ավերակ էին դարձել մեր շեն քաղաքներն ու գյուղերը, կողոպտվել մեր պայծառ ու «երկնանման տաճարները»: Սղեսն ու ավերմունքը գագաթնակետին էին հասել 1603—1614 տարիների շահարապան բռնագաղթի հետևանքով: «Այս վերջին ավերմունքը վերջին հարյածն է տախի հայոց հին քաղաքակրթությամ»,— գրում է Մամուկ Աբելյանը: Բայց որքան ուժգին էր հարվածը, այնքան մեծ եղավ և արթնությունը: Այս անգամ էլ հայ եկեղեցին և նայ ժողովուրդը իրենց հոգում գտամ կենտրոնակետական և վերակենդանության անթեղված, անսպառ ուժեր ու ուրի կանգնացին՝ նոր հառաջդիմության գաղափարով տպորված:

Ահա այս մոայ ու պայծառ, գալարում և զարթոնքի պատմության արձագանքն է Առաքել Դավրիժեցին, այն համեստ ու սրբակրոն, աշխատատեր ու տեսապաշտ վարդապետը: Նա պարեց այդ անկումն ու սարսափը, բայց և հավատաց իր ժողովրդի կամքին ու տեսիլքը ունեցավ պապա խաղաղ ու քարոզական կյանքին: Հոգու ինչպիսի ուժ էր պետք, հավատքի ինչպիսի ժայռ՝ այդ անդունդ խավարում արյան հոսքի մէջ տեսնելով պայծառ գալիքը հայ ժողովրդի ու հայ եկեղեցու: «Ահա այդպիսի դաժան դարու մը սեմին, այդպիսի ողբերգական մէկ պահուն, մեր պատմությունը կ'արձանագրէ

ոգեկան ուժերու անհատատալի ու զարմանալի զարթօնքի մը փայլատակումը»,—գրում է Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում:

Սուաբել Դավրիթեցին մեծացավ ու կազմակերպվեց հոգեպես, իմացապես Էջմիածնի Սայր Աթոռում: Աշակերտեց հայ հոգևոր զարթոնքի լուսավորիչներին ու նրանցից քաղեց իր հավատքի ուժն ու ոգու արիությունը: Սրապիոն վրդ. Եղեսացին, Պողոս վրդ. Մոնղացին, Կիրակոս քին. Տրապիզոնցին, Մովսես Սյունեցին՝ Հարանց, Շոռորի, Աստապատի վանքերում ամբողջ նվիրումով ծավալեցին լուսավորության և ուսման գործը: «Կանքերը կենդանանալով՝ կենդանություն և թարմ հոսանք են մոցնում ժողովրդի մեջ: Զարթոնում է նոր ոժով կրոնական ոգին: ...Մեր վանքերը մի անգամ էլ կատարում են իրենց պատմական բաղարակրթության ները, որ ունեցել էին ժ դարում» (Մ. Արելյան):

1620-ական թվականներից, սակայն, հիմնական ո մշտական ծաղկող կենտրոն դարձավ Սայր Աթոռ և Էջմիածնը, որ պատրաստեցին «քազում երեկոի վարդապետք, քաջարանը, բանաստեղծը աստուածային գործ, քաջ գիտությ և հնուտ», որոնցից մեկն էր հայ Առաքել վարդապետ Դավրիթեցին, որը եղավ գործակիցը Մովսես Գ Տաթևացի, Փիլիպոս Աղքակեցի և Հանր Զուղաւեցի Եկեղեցաշեն կաթողիկոսների, որոնց իրենց սրտառուչ հավատքով, աններուն կամքով և անսպաս եռանդով և Էջմիածնի վրադարձին իր անցյալի փառքը՝ հավատալով, որ միայն «ի վերա Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ»:

Այս ըմբռնումը «հայկական ազգային դավանանքի արտահայտությունն էր»,—գրում է Լեռն:

Բարենորոգվեցին վանքերը, ամեն կողմ վառվեցին հավատքի և լուսի կանոնեցները: Հոգևոր դպրանցներից բազմաթիվ հոգեվորականներ գնացին ժողովրդին հոգեպատճեր ամրապնդելու, իր ապագայի հանդեպ հավատք ներշնչելու: Այդ վերանորոգիչներից մեկն էր Առաքել Դավրիթեցին:

Նա գտնվում է «ս. Էջմիածնի հաւատաւոր ու հայրենասէր հոգևորականներու առաջին շարքին՝ իբրև Եկեղեցոյ լուսամիտ ծառայ և քաջամիտ քարոզիչ, իբրև ուսուցիչ և գրող, իբրև հաւատարիմ ու ժրաշան գործակից հայոց հայրապետներուն... իր ամբողջ կեանքով ու գործունեութեամբ համակ ներշնչում է, համակ նուիրում, անդու աշխատանք, անսակար ծառապութին, և մարմնացումը իր ժամանակի Հայոց վերածնուած

քրիստոնէական հաւատքին ու պայծառ հայրենասիրութեան»,—գրում է Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում: Վկա՝ Սուաբել վարդապետի «Պատմութիւն»-ը: Այն ընդգրկում է 1600—1660 թվականները՝ իրենց մուայլ ու պայծառ կողմերով. «Զաւեր Հայաստան աշխարհին, զնուազիլն մերոյ ազգին և զշարութիւն մահմետականաց, զապակակին եկեղեցական կարգաց, զաւերն բարձրագահ և բրիստուաքնակ Աթոռուն Սրբոյ Էջմիածնին»:

Առանց այդ հայրենասիրության ու նվիրումին նա իր ծեր տարիքուն հանձն չը առնի գրի առնել այդ սարսահների պատմությունը: Նա ճանապարհորդեց ու հատկապես ուսումնասիրեց վայրերը, իր պատմությունը ճշմարտապատում ընծայելու համար: Երկար աշխատեց ժամանակագրությունը ճշգրիտ գրելու համար: Եթե այդ բոլորին գումարենք նաև նրա գեղարվեստական նորոք գրիչն ու պատկերավոր ու պարզ լեզուն, Դավրիթեցու «Պատմություն»-ը կը դառնա լավագույն ապացուցը վերածնված հայ և արվեստագետ հոգու:

Դավրիթեցու «Պատմություն»-ը մի համագոգային վկայաբանություն և նահատակություն է»,—գրել է Մ. Արելյանը, բայց ու միաժամանակ օրիներգություն՝ «հայոց աշխարհի նորոգության ու պատության մասին». «Այլ և զեղոցին նորոգութիւն և այլ բանք պատմութեանց... ի գիտութիւն յապայ եկելոց» (Դավրիթեցի):

Անցել է 300 տարի պայծառատես վարդապետի մահից: Բայց դարերն ավելի ևս ամրացրին նրա հավերժությունը: Նա իր կենուանությանը պատգամեց և Էջմիածնի ու իր ժողովրդի նոր ու լուսավոր ապագան:

Այսօր այդ ապագան ավելի քան թեղմնավոր է, խոստումնալից ու պայծառ: Հայ հոգը, հայրենի վերածնած աշխարհը աներեր է, ապահով ու բարօր հայ ժողովրդի ուռերի տակ, հայ Եկեղեցին՝ ս. Էջմիածնի օրինության ու ղեկավարության ներքը՝ լուսաշոյ, կենդանի ու ամբողջական:

Երեք հարյուր տարիների հեռվից Դավրիթեցու շիրիմը շունչ է տալիս հայ հոգեվորականության և աններուն կամք՝ շարունակելու մեծ վարդապետի գործը, ավիրաբերել իր կյանքը Եկեղեցուն, հայրենիքին ու ժողովրդի՝ սրտառուչ նվիրումով, պաշտամունքով:

Փա՛ռ Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

Հավերժական հարգանք, խունկ ու աղոթք Մայր Աթոռի լուսամիտ ու հայրենասէր միաբանների հիշատակին, որոնք դարերի հոլովոյթի մեջ սրբությամբ կատարեցին սպասը հայ Եկեղեցու և հայ մշակույթի:



ՀԱՆԳԻՄ

ՆՈՐԻՆ ՄՐԲՈՒԹՅՈՒՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ
Տ. ԱԼԵՔՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ
(1877—1970)

Ռուս պրավուլավ եկեղեցին ծամբ կորուստ կրեց. ս/թ. ապրիլի 17-ին, որքառ օրը, ժամը 21.40-ին, Մոսկվայում, 93 տարեկան հասակում, վախճանվեց Մոսկվայի և համայն Ռուսիայի Տ. Ալեքսի պատրիարքը:

Ռուս եկեղեցու պետի մահվան տիտր լուրը պաշտոնապես հասավ նաև ս. ՀՀմիածին:

Ապրիլի 20-ին ո. Ալեքսի պատրիարքի թաղման արարողությանը անձամբ ներկա գտնվելու համար Ամենալավ Հայոց Հայրապետը մեկնեց Մոսկվա: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին ս. Գեղարդի վաճրի վաճահայր ո. Նարեկ վրդ. Շաքարյանը և Արարատ սրկ. Գալստյանը: Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհելու էին եկեղեց Մայր Աթոռի միաբանները՝ լրաբարապետ ո. Հայկազոն արքեպ. Արքանամյանի զիսավորությամբ: Հայոց Հայրապետին ճանապարհում էր նաև ՀԱՀ Մինիստրների սովուտին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Նույն օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը համեստ է Մոսկվա, որ նրան դիմումում են՝ Ռուսաստանի և Հյուսիսայիշ Կովկասի հայոց թեսի առաջնորդ ո. Պարգևներ. Գնորդյանը, ոս պրավուլավ եկեղեցու սինոդի անունից օդանավակայան եկած Խարկովի և Բոգոտովսկի թեսերի առաջնորդ ո. Լեռնուի արքեպիսկոպոսը:

Վեհափառ Հայրապետին դիմավորողների թվում էին նաև ՍՍՀՄ Մինիստրների սովուտին առընթեր կրթական գործերի խորհրդի ներկայացուցիչ Ե. Ա. Տարասովը:

Վեհափառ օդանավակայանից Վեհափառ Հայրապետն ուղղակի ողերդվում է դեպի Զագորովի ոստական վաճրը, որը գտնվում է Մոսկվայի մոտավորապես 100 կմ հեռավորության վրա: Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է իրեն համար միաբանական թաղում հաստկացված իր հարկարածինը: Ալեքսին Հայոց Հայրապետին բարի գալուստ մաղթելու են գալիս ս. Աֆնոնի անդամ, միտրոպոլիտ Արքազանները՝ գլխավորությամբ պատրիարքական տեղապահ ո. Պիմենի: Վեհափառ Հայրապետը խորին վիշտ է հայտնում գերազնորի սրբազնությանը՝ հայ եկեղեցու ճշմարիտ բարձրակամ Տ. Ալեքսի պատրիարքի մահվան առթիվ:

Այս Վեհափառ Հայրապետը ո. Նիկողոսի միտրոպոլիտի ո. Լեռնուի արքեպիսկոպով ուղեկցությամբ առաջնորդվում է ս. Աստվածածին մեծ եկեղեցի, որ դրվել է հանգույցի դագաղով: Դագաղի շորջ հոգեանձնական երգերն ու աղոթքները, աղոմուների ընթերցումներն անընդմեջ շարունակվում են:

Վեհափառ Հայրապետի հախազանությամբ տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն՝ հայկական ծեսով:

Ապրիլի 21-ին, երեքշաբթի, հանգույցական պատրիարքի թաղման օրն է: Դրում ոժեղ ձյուն է մաղում, իսկ ներսում, ս. Աստվածածին եկեղեցում, պատուագում է պատրիարքական տեղապահ ո. Պիմենը՝ ընկերակցությամբ մյուս միտրոպոլիտների ու բարձրատիճան եպիսկոպոսների: Վեհափառ Հայրապետը խորանում է, ձախակողմյան դա-



սում Հոռի Պավլոս Զ Պապի ներկայացուցիչ, կարդինալ Վիլդբրանցի նետ, համայնք Վրաց պատրիարք-կաթողիկոս Եփրեմ Բ-ը, բոլոր օրթոդոքս եկեղեցու Տ. Կիրիլ պատրիարքը և մյուս պրավոլավ եկեղեցիների պետքի ներկայացուցիչները՝ աշակողմյան դասում:

Ալեքսի երանելի Պատրիարքի լուս հոգին, այսօր կյանքից դեպի կյանք է գնում, դեպի հավերժական խաղաղության երկնային աշխարհը, որ վերապահված է բոլոր սուրբ հոգիներին: Մեծն Ալեքսի Պատրիարքը իսկապես եղավ մեծ իբրև եկեղեցւագլուխ, իբրև ժողովրդի հոգեւոր Պատրիա-



Հոգեհանգստյան արարողությունից մի պահ

Ս. պատարագը շարունակվում է երեք ժամ, որից հետո սկսվում է հոգեհանգստյան արարողությունը, ապա՝ թաղման կարգը: Հոգեհանգստյան արարողությունից առաջ պատրիարքական տեղապահ սրբազնը հանդես է գալիս դամբանական ճառով:

Հոգեհանգստյան արարողության ընթացքին հանդես է գալիս նաև Վեհափառ Հայութեալ հետևյալ դամբանական ճառով.

«Երանի որ սուրբ են սրտիք, զի նորագլուխության մեջ»:

Սգավոր եղբայրներ,

Մոսկվայի և համայնք Ռուսաստանի Պատրիարքը Նորին Սրբություն Ալեքսին, Մեր սիրեցյալ Եղբայրը ոչ ևս է, Ռուսաց մեծ Հայրապետը փառավոր կյանք ապրելուց և փառավոր գործ տեսնելուց հետո, իր աշքնը փակեց և հանգչավ ի Տեր:

րակ և Առաջնորդ, մեծ եղավ իբրև հայրենասեր, ոուս ժողովրդի հերոսական ոգին մարմնավորող, մանավանդ Լենինցը պաշարման ղուցազնական օրերին: Ալեքսի Պատրիարքը մեծ եղավ նաև իբրև աշխարհի խաղաղության համար աղոթող ու գործող Կրոնապետ, պայծառ օրինակ հանդիսանալով բոլորին և շատ-շատերին:

Մենք երեք չենք մոռանա Իր պայծառ հիշատակը, Իր բարի անոնը և Իր մեծ վաստակը:

Այս տխուր պահին, Մենք հանուն Հայաստանյաց առաքելական եկեղեցու, աննեանարազատ գացումներով մասնակցում ենք ոուս պրավոլավ քուր եկեղեցու մեծ սգին և աղոթում ծնկաչոր, որ Տերը քարցրաթյամբ ընդունի Ալեքսի Պատրիարքի հոգին. անվախճան լուսի արքայության մեջ:

Թող հավերժ փառքով հիշատակվի Ալեքսի Պատրիարքի սուրբ անունը այստեղ, և կը թարձունքներում և այստեղ՝ երկրի վրա:

Թող անսասան ու միշտ փառքի մեջ ապրի ու ծաղկի Ծուսաց պրավուագ մեծ եկեղեցին և իր աստվածաեր ժողովուրդը: Ամեն»:

Դամբանական են խոտում նաև կարդինալ Վիլյարանցը, Տ. Կիրիլ պատրիարքը, Եփրեմ Բ Վրաց պատրիարք-կաթողիկոսը և որիշ-ներ:

Մյուս օրը, ապրիլի 22-ին, Վեհափառ Հայրապետը օդանավով վերադառնում է Մայր Աթոռ:

Կենսագրություն Տ. Ալեքսի պրազան պատրիարքի

Տ. Ալեքսի պատրիարքը ծնվել է 1877 թ. Յոյնմբերի 9-ին Մոսկվայում, բարեկայտ ծնողների ընտանիքում: Փոքրիկ Սերգեյը 11 տարեկան հասակում ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարան, ապա անցնում



Թաղման թափորը

Դրսում դեռ շարունակվում է ձյունը: Սգավոր և հանդիսավոր հնչում են մեծ աշուարակի և մյուս եկեղեցիների զանգերի դողովանշները: Ահա թափորը, խաչով ու խաչվառով, մոմերով ու բորբաներով դորս է գալիս քակ, եկեղեցու շորջ և ողդվում ու Աստվածածին եկեղեցու ներքևահարկ մատուցը: Թաղման հոգևոր վերջին երգերը ավելի հոգիչ են և ավելի խորհրդավոր... Դագաղը դրվում է սեղանի վրա, օրինում և ցանում են հողը, ծածկում կափառիչը և հանդիսավոր կերպով համձնում են հողին մեծ Հայրապետի աճյունը:

Ժամը 17-ին, հոգեճաշից հետո, Վեհափառ Հայրապետը հրամեցած է առնում և վերադառնում Մոսկվա:

Նիկոլական լիցեյ, որը և ավարտում է արձաթե մեդալով:

1896 թվականից սկսած նա իր ուսումը շարունակում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

1900 թ. նա Մոսկվայի հոգևոր ճեմարանի ան է և իր կյանքն ընդմիջու կապում է ուս պրակտուալ եկեղեցու հետ: Չորս տարի անց նա ընդունում է կուսակրոն քահանայի աստիճան Ալեքսի անունով և հշանակվում Պակով քաղաքի հոգևոր ճեմարանի տեսուչ և ապա Տոլայի և Նովգորոդի հոգևոր ճեմարանի վերատեսուչ:

1913 թ. ճեմադրվում է եպիսկոպոս: Թեմակալ առաջնորդ է հշանակվում Տիֆլիսի թեմում:

20-ական թվականներին նա անցնում է Պետրոգրադ և արքեպիսկոպոսի աստիճանով վարդում Նովգորոդի թեմը ևս: Պետր է հշել, որ նենց այս օրերից էլ Ալեքսի արքեպիսկոպոսի կանքը կապվում է ներոսական քաղաք Լենինգրադի հետ: 1933 թ. նոյն պաշտոնի վրա էր Ալեքսի սրբազնը, եթե ստանում է միտրոպոլիտի աստիճան: 1941 թ., Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, Լենինգրադի պաշարման ծանր օրերին, նա որպես քաջ ու հայրենասեր հովիվ, իր ժողովրդի հետ է, մեծ հավատով լցված դեպի հաղթանակ:

1944 թ. վահճանվում է ոուս պրավոլավ եկեղեցու Սերգեյ պատրիարքը: Սուրբ սինոդը Լենինգրադի միտրոպոլիտ Ալեքսիին շշանակում է պատրիարքական տեղապահ:

1945 թ. փետրվարի երկուսին նա միաձայնությամբ ընտրվում է համայն Ռուսաստանի և Մոսկվայի պատրիարք:

Նվիրապետական այս բարձր պաշտոնում

Ալեքսի պատրիարքը ոուս եկեղեցու հավը վարեց խաղաղ ու անվրդով 25 տարի: Նրա պատրիարքության շրջանին ոուս եկեղեցին ապրեց մեր օրերի իր հոգևոր վերազարթութը՝ մեծ արդյունավորությամբ:

S. Ալեքսի պատրիարքի գահակալության տարիներին սրտագին բարեկամական կապեր հաստատվեցին S. Գևորգ Զ և ապա S. Վազգեն Ա. Հայոց Հայրապետների միջև:

S. Ալեքսի պատրիարքը եղել է նաև խաղաղության պայքարի մեծ և անվեհեր զինուոր, ժողովուրդների և պետությունների միջև համագործակցության, արդարության, ազատության և իրավունքների դասի չերմ պաշտպան: Այս անդաստանում նրա կատարած խաղաղասեր և հայրենանվեր գործունեությունը մեծապես կիշշվի միշտ երախտագիտությամբ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղից»:

ՆԱՐԵԿ Վ.ՐԴ. ԾԱՀԱՐՅԱՆ



ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑԻ

Ծնվել է, ինչպես ցուց է տալիս մականությը, Թավրիդ քաղաքում, հավանորեն 16-րդ դարի վերջերին: Ուստի ստացել է Փիլիպպոս կաթողիկոսի մոտ Էջմիածնում, ձեռնադրվել է վարդապետ և, իբրև Էջմիածնի վարդապետ, կատարել է զանազան պաշտոններ, որոնցից հիշատակելի է մասնավորապես նվիրակի պաշտոնը, որ նա կատարել է Փիլիպպոս կաթողիկոսի հրամանով, ինչպես ինքն է ասում, «Յունաց աշխարհում», այսինքն Փոքր Ասիայում: Այսպիսով նա առիթ է ունենում ճանապարհորդություններ կատարելու, շատ տեղեր տեսնելու: Լինում է նաև Սպահանում: Աշխարհաւանդյունն, անշուշտ, շատ է օգնում նրան պատմական տեղեկություններ ժղովելու և նրանցով իր գիտությունն ավելի և զարգացնելու համար: Ինչպես երևում է, նա հմտու պատմագետի համբավ ուներ իր ժամանակակիցների մեջ և այդ ընդունակության իբրև ապացուց՝ նա տվեց իր «Պատմագրությունը», մի գործ, որ ունի իր փոքրիկ, բայց հետաքրքրական պատմությունը, որ ինքն, Առաքելը, Աերկայացնում է այսպիսի գծերով:

Փիլիպպոս կաթողիկոսը և նրան շրջապատղները մեծ փափագ ունեն, որ պատմագրության հյութ դառնա այն ահեղ հարվածը, որ հայոց երկիրն ստացավ Ծահ-Արքայից: Հայոց գերկարությունը, նրան հետևած վայրենացումը, բարքերի և բարեկարգության անկումը, վերածնության շանթերը, մի խոսքով՝ այն ամենը, ինչ կազմում էր 17-րդ դարի առաջին կեսի բովանդակությունը,—այս ամենը շատ ցանկալի էր համարվում, որ արձանագրվի ի գիտություն ապագա սերունդների: Այսպիսի համեմարտություն կաթողիկոս արակ շատերին, նույնիսկ իր աշակերտներից այնպիսիներին, որոնց համարում էր հմտու և պատրաստված այսպիսի մի աշխատանքի համար: Սակայն ոչ ոք հանձն չառավ: Ամենքը գիտեին, որ

այդ գործը պահանջում է տաժանելի աշխատանք, ուստի հրաժարվում էին նրանից: Վերջապես կաթողիկոսը կանգ է առնում Առաքելի (որ ինքն իրեն անվանում է Առաքյալ, «Նուաստ և տրուայ յամենեսին՝ սպասարության») վրա, որը չի կարողանում ազատել իր գործին այդ ծանրությունից: «Եւ որպէս զուկար կենդանի ոմն ըմբռնեալ ի վարժից և յորդայթից և ոչ կարից զերծանիլ,— ասում է նա,—ամին սարասի գոգչիք և զեղկեիս ըմբռնեալ ի վարմ գործոյս այսմիկ»: Մեր հեղինակը բացարում է կ այն պատճառները, որոնց շնորհիվ նա այնքան հեշտ բնավեց այդ «թակարդի» մեջ: Առաջինն այն էր, որ նա չկարողացավ ետ դարձնել Փիլիպպոս կաթողիկոսի հրամանը, թեն շատ միշնորդներ գցեց՝ աղաչելու համար, որ իրեն շիանձնվի այդ գործը, որի համար նա իրեն միանձնամայն անպետք և անկարող էր համարում: Երկրորդ՝ որ հարկադրողը միայն Փիլիպպոս կաթողիկոսը չեղավ, այլև Հակոբ կաթողիկոսը, եթք առ հաջորդեց Փիլիպպոսին և տեսավ, որ Առաքելը, օգտվելով իր ուսուցիչ մահից, դադարեցրել է սկսած գործը: Երրորդ՝ հարկադրողը հենց իր, Առաքելի գգացմունքն էր, որ թելադրեց նրան արձանագրել հայրենիքի դժբախտությունները: Նա ասում է. «Եւ ես ինձեն իսկ տեսանելով զաներս Հայաստան աշխարհին, և զետաղին մերոյս ազգին, և զշարութիւնն մահմետականաց, կոկալի մորմոքմամբ այրիւր սիլլուհիմ, վասն որոյ յօմարեցայ յարձանագրութեան տցին»¹: Խակ չորրորդ դրդապատճան էլ այն էր, որ Առաքել վարդապետը, ինչպես իր դարի հարազատ զավակ, հավատացած էր, թե այդպիսի մի դաման աշխատանք կատարելով, նա ազատված կլինի իր բոլոր մեղքերից, և այս՝ ընթերցողների բա-

¹ Դավրիմեցի, եր. 517:

րեխոստթյամբ և աղոթքներով: «Վան զի, — պէտքացնում է նա, — և ես այսու դիտարութեամբ և լուսով յանձն առի զալսպիս լորնաշխատ և զբագլածերկ և զտածանելի գործն՝ և առուր լոլով ի ամին դեգերելով և ի լոլով երկիրս և յաշխարհս շրջագայելով ի խնդիր զրուցաց պատմութեան, ոչ միայն ի քրիստոնէից, այլ և յայլոց ազանց հարցանելով, և ամեննեցունց զասացեալսն գրելով, և վասն զատուգորիին բանին գտանելոյ, եղի զի զի պատմութին, տասն անօրան և այլ աւելի կրկնելով գրեցի»:

Այս պատմությունները ցուց են տալիս, թե մեր հեղինակը որքան լորչ վերաբերմունք ուներ դեպի իր գործը, որքան բարձր էր գնահատում պատմական ճշմարտությունը: Ծերության հասակում էր նա, հիվանդուուր բայց չանք ու աշխատանք չխնալեց, թեև մենակ էր, ոչ ոք չօգնեց, ոչ ոք նոցնիսկ նյութական աշակցություն չարավ նրան: Գրական աշխատանքի այդ ալլանդակ պայմանները դարերից ի վեր գոյություն ունեին, և եթե, այնուամենայնիվ, մենք կարող ենք պարծենալ Առաքել Դավիթնեցու նման հեղինակներով, այդ բացառապես այն հանգամանքի շնորհիվ, որ այդ մարդին ընդունակ են եղել անձնագործության: Ծեշված, ինչպես ինքն է ասում, «ողորմելի ծերության» տակ, «ցավագար մարմնով», նա սկսում է այդ գործը 1651 թվականին: Չորս տարուց հետո վախճանվում է Փիլիպպու կաթողիկոսը: Առաքելը, թեև արդեն բավուկան բան արել էր, թողնում, լրում է իր գործը, նկատի առնելով նրա հետ կապված դժվարությունները: Բայց Հակոբ կաթողիկոսի ստիպմամբ՝ 1658 թվից վերսկսում է աշխատանքը և վերջացնում է 1662 թվին: Այսպիսով ամբողջ աշխատությունը տևում է ինը տարի և այս ժամանակամիջոցում Առաքելը գործ է 60 տարվա պատմություն (1602—1662): Այս աշխատանքը նա կատարել է մասամբ այն ճանապարհորդությունների միջոցին, որ նա կատարել է պատմական նյութեր հավաքելու համար, բայց գրիխափրապես Էջմիածնում, որի հետ նև կապված էր իր սրտի ամբողջ կարողությամբ: Նկատենք այդ պատմագրական աշխատության կատարման և մի այլ նանգումները: Իր գործի առաջարանի (նախադրության) մեր հեղինակը շատ ճիշտ կերպով նկատում է, որ պատմագրության հիմքը պիտի կազմի ճիշտ ժամանակագրությունը. և այդ պատճառով ինքն ամեն շանք թափել է թվականներ գտնելու և լորաքանչյուր դեպք իր թվականի տակ արձանագրելու համար: Բայց այս բանը միշտ չի հաջողվել նրան, չնայած որ 17-րդ դարի առաջին կեսի անցութարձին ականատես է եղել նա ինքը

և նրա հետ նաև շատ մարդիկ: Այս հանգամանքը մեր հեղինակը բացարձում է շատ գեղեցիկ կերպով: «Քանզի, — ասում է նա, — ազգու մեր յաւարառուաց և ի գերչաց և ի հարկապահանցողաց ցիր և ցան եղեալ են, կոչկոմեալ և կաշկանդեալ, տառապեալ և կապեալ յառքատութեան որպէս յերկարու բան Սաղմոսին, և հազի ամենայն ոք զայրուս իրոցն կենաց հայթայթէր, ոչ գտաք դիտող այլ պանփիս, որ զի ընդ պատմութեան և զուուկանն և ծանուցեալ էր: Բայց մեր լոլով աշխատութեամբ խոյց պարենայ՝ զորս գտաք, կարգեցաք ընդ պատմութեամն և գթուականն ևս, և զորս ոչ գտաք, առանց թուականի պատմեցաք»:

Այս են այն մեզ ծանոթ հանգամանքները: որոնց մեջ լուս տեսավ Դավիթնցու աշխատությունը: Որքան և համեստ լինի նրա կարծիքն իր ընդունակության և կարողության մասին, նրա կատարած գործն ըստ ինքան ապացուց է, թե որքան պատկեռավագի գրական ուժ էր այդ թալրիզեցի ծեր վարդապետը: Նա տվել է մեզ մի սովոր հատոր, որի մեջ ամեն քայլում մենք նաւոփակում ենք գրական կիրոր ճաշակի, որ կարող էր պատիվ բերել մեր գրականության ավելի հին շրջաններին, երբ հայ մատենւազդությունը դեռ չեղ հասել թաթարական ժամանակների սուկալի անկման: Խև երբ վերցնում ենք այս անկման շրջանը, այսուղ Առաքելը համդիսանում է առաջնակարգ գրական մի աստղ, որ չունի իր նմանը թե՛ նախորդ դարում և թե՛ իր ժամանակավիցների մեջ: Նրա լեզուն պարզ ու հասկրանալի է, որը վայելու, թեև ոչ քիչ ճապառ, նկարագրությունների մեջ կարողանում է պատկերացնողի ընդունակություն ցուց տալ: Այս կողմից նա շատ աշքի է ընկնում մանուկանդ Շահ-Աքքասի գերեվարության և սրան հետեւած նյութական և մոտավոր վայրենացման խորապես ազդող նկարագրությունների մեջ: Ընթերցողի աշքի առջև շարունակ կանգնած է հեղինակի հճնատիկ պատկերը: Դա մի հավատացյալ վանական է, լոցված մի վառ միրով դեպի հայրենի աշխարհը, դեպի ազգային մտավոր-կուլտուռական ստացվածքը ներկայացնող եկեղեցին: Այդ սերը դարձնում է նրան երկարաբան, ուշադիր դեպի բոլոր մանրամասնությունները, դեպի ամեն մի հանգամանք, որ հարազատ ժողովոյի նահատակության փաստերն էր ցոլացնում: Բացի այս բոլորից՝ մի լավատելյակ մարդ է նա, որ ուզում է իր ընթերցներին շատ օգտակար տեղեկություններ հաղորդել և այդ պատճառով մտցնում է իր գործի մեջ և շատ կողմնակի նյութեր, նույնիսկ այնպիսիները, որոնք իր հեղինակությունը չեն:

Ինչպես երևում է, Առաքելը իր ժամանակ հնուտ և գիտուն պատմաբանի համբավ էր լայելում: Այսպես, Զաքարիա Քանաքեղին երկու տեղ հիշում է, որ ինքը, պատմական խնդիրների մասին լուսաբանություն ստանալու համար, դիմեց Առաքել վարդապետին և ստացավ նրանից հեղինակավոր բացատրություններ: Իսկ թե որքան հարգի էր նրա գրած աշխատությունը դեռ նրա կենդանության ժամանակ, ցուց է տալիս այն, որ այդ գործն ամբողջովին տպագրվեց Ամստերդամում հշանավոր տպագրիչ Ուկան վարդապետ Երևանցու ձեռորդ 1669 թ.: Իր պատմագրական հմտությունը Դավիթեցին ցուց է տվել և այն ժամանակագրությամբ, որ կազմում է նրա Պատմագրության 55-րդ գլուխը և որ, սկսվելով Հայոց Ժ (10) բարգուխը և որ, սկսվելով Հայոց Ժ (10) բարգուխը (=561), վերջանում է ՌԾԺԵ-ով (=1666 թ.):

Էջմիածնի միաբանության գերեզմանուում, Եփրեմ կաթողիկոսի գերեզմանի մոտ, Առաքել Դավիթեցու գերեզմանն է, որի վրա դրած գորշ և հասարակ քարը կրում է հետևյալ արձանագրությունը. «Պատմագրին այս է տապան Առաքել վարդապետին ՌԾԺՄ (1119-1670) թուին»: Ուրեմն, Դավիթեցին երկրորդ հայ հեղինակն էր, որի կենդանության ժամանակ տպագրվեց նրա աշխատությունը:

Հոգևորական գործեր: Տառապանքների մրցակած ծովի մեջ ծփացող հայ ժողովորդը, իր դժբախտ պատմության բերմունքով, ուրիշ առաջնորդ և հավատարմատար չուներ, բացի հոգևորականությունից: Թե ինչ հշանակություն ուներ մանավանդ հայոց ընդհանրական Մայր Աթոռ Էջմիածնին, այդ ցուց է տալիս այն հանգամանքը, որ Ծահ-Արքաքը, կամենալով կապել իր գերի վարած հայությունը նրան հատկացրած նոր հայրենիքի հետ, միտք է հղանում քանդել Էջմիածնի տաճարը, նրա քարերը բեռներով փոխադրել Սպահան, ինչպես նաև շատ հող

տանել և այդ նյութերից մի նոր Էջմիածնին շինել իր մայրաքաղաքում, որ և փոխադրել կաթողիկոսական Աթոռը: Այս միջոցով հայերը, մասնավորապես այնքան հարկավոր ջողայեցիները, պարսկական հողի հետ ընդմիշտ կապված կլինեին և իրենց սիրոն ու միտքը Արքաքի հովտի վրա, Մասսի ստորոտներում չեն պահի: Այս բազմածիս և շատ դժվար ձեռնարկությունն, իհարկե, չեր կարող անհնարին լինել Ծահ-Արքաքի պես մի մեծ բռնավորի համար: Եվ եթե նա չկատարվեց, պատճառը Ջողայի հայ վաճառականներն էին, որոնք իմաստություն ունեցան համոզելու քաდավորին, որ տաճարի փոխադրությունն ավելորդ է, և այս միջոցով ազատեցին հայոց նվիրական Էջմիածնիը քանդումից:

Այսպահ կարևոր էր Էջմիածնի, նրա հետ, իհարկե, և հոգևորականության հշանակությունը հայերի ազգային գգացմոնքի տեսակետից: Եվ Առաքել Դավիթեցին, անշուշտ, իր ժամանակի ընդհանուր հայկական ազգային դավանանքն է արտահպտում, ասելով. «Քանզի ի վերայ Աշոյն լուսարշի】 և Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան»²: Ուստի և շատ կարևոր է այն հարցը, թե Ծահ-Արքաքան սարսափների այս սև տարիներում ինչ էր ներկայացնում հայ հոգևորականությունն իրեն բարոյական ուժ, իրեն անսահման հեղինակության տեր մի տաշնորդ, որ պիտի շատ ազդու դեռ ունենար մողովոյի կրած անհուն տաճառների մեջացման մեջ:

Այս կարևոր հարցը լուսաբանելու համար մենք առատ հյութ ունինք այն բազմաթիվ գանգատների և սրտաքաց նկարագրությունների մեջ, որ բերում է Առաքել Դավիթեցին իր մանրամասն տարեգրության մեջ:

(Առաքել Հայոց պատմություն, երրորդ հատոր, էջ 266, 360—364):

² Դավիթեցի, եր. 151:





ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑԻ

Առաքել Վարդիթեցի¹: Առաքել վարդապետ, Թավլիկ քաղաքից, Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտներից, և Էջմիածնի միաբանությանից, սևլած (երկի մանկությունից) և «վարժեալ» Մայր Աթոռում, և ծերության օրերը հասած, և այնուղիւն, ինչպես ինքը «ակն ունէր ընդ նովանեան նորին ամփոփիլ ի հող», մեռած ու թաղված միաբանության գերեզմանատանը ԾճԺԹ=1670 թվին. (տապանագիրն է—«Պատմագիրն այս է տապան Առաքել վարդապետի ԾճԺԹ»): Իր ժամանակակիցների վկայությամբ՝ քաղական անոն ստացած, անշուշտ իր ուսման կամ հմտության համար. «Ստեփանոս Անհացի իր մեկ թարգմանության (Դիոնիսիոսի Արիսպագվոյն գրոցը) հիշատակարանի մեջ Էջմիածնի ուսումնարանի վրա խոսելով՝ կզրուցե—«Զայնո ժամանակաւ քազում էին երեսի վարդապետք (լԷջմիածնի), քաշարանք, քանատեղձը աստուածային գրոց, քաջը գիտունք և հմտուք, յորոց մի է և Առաքել վարդապետն վիպասան, որ զգամանակագրութիւն հայրապետաց և թագաւորաց գեղեցիկ յարմար քանի դրոշմեալ».

(Զարբի. եր. 172), որի պատճառով նույնիսկ կենդանության ժամանակ հայտնի էր Առաքել պատմագիր անոնվ:

Այս վկայությունից երևում է, որ Առաքել վարդապետը ժամանակի հշանավորներից մեկն է, շատ ճանապարհորդած Արևելքում և Արևմտուքում, նվիրակ Փիլիպպոս կաթողիկոսի Հունաց աշխարհում, Ասպահան, Ամասիա, Սերասիա, Ուրիա, Հալեք:

Առաքելի ծննդյան թիվը հայտնի չէ: 1651 թ. սկսել է գրել իր Պատմությունը Փիլիպպոս կաթողիկոսի նորդորով. նրա մասից հետո դադարել է գրելուց, և այնուհետև Հակոբ կաթողիկոսի հրամանով վերջացրել է 1662 թ.: ԾճԺԱ=1662 թվին, երբ նա իր Պատմությունը վերջացնում է, հիշում է և (գլ. Ժ), որ ինքը ծերացել է և «Կարի պականալ ի զօրոթեանց, և մահն եկեալ հանապազօք իմոց աչացս կանգնեալ»: Խոկ հիշատակարանի մեջ (ԺԶ) «այլև դիպեցան պատահել ինձ այս գործ, ոչ ի ժամանակս առողջ երիտասարդութեան, այլ յողորմելի ծերութեան, վասն զի ծեր էի, նաև լոյժ ցաւագար մարմնով, և ի լուսոյ աչքս պակսեալ և ի պնդութենէ ձեռքս թուլացեալ դողայր. տյենաւ և յայլոց ամենայն կարողութեանց տկարացեալ, և մահու հրաէրք ամենեքեան հանդէկ աչացս եկեալ կացեալ»:
Պատմագրի անձնական վկայությունն իր ծերության համար ոչ թե նրա գրության

¹ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիթեցւոյ սակա դիպուածոց Հայատանեաց և գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի, սկսեալ ի ԾՃԺ թուականէն Հայոց մինչ ի ԾճԺ թ.», Վաղարշապատ, 1884:

վերջին տարու 1662 թվականի համար պետք է հասկանանք, այլ ավելի՝ Պատմությունը գրելու ամբողջ ընթացքի համար և դրույթ նույնիսկ սկզբնավորության ժամանակի համար, որ է ՌԾ=1651: Արդ, եթե ընդունենք իր Պատմության ընթացքի կեսին 1656 թ. ևս ծեր է եղել, և ուժից ընկած և աշքի լուսից պակասած, իսկ այդպիսի ծերության համար պետք է ընդունենք առնվազն, որ 60—65 տարեկան է եղել այդ ժամանակ, իսկ 1670 թվին, որեւն, 74—79 տարեկան հասակում մտնել է, որ և մի անհավանական թիվ չէ: Ուստի քան այսն ևս ծննդած կիմին 1591—1596-ին: Այս հաշվով, ևս Շահնարակ առաջին արշավանքի ժամանակ, ՌԾԲ=1603 թվին 7—12 տարեկան պիտի եղած լինի: Եվ այս հարմարվում է խոսքին. «Ես ինձէն իսկ տեսանելով զաւերս Հայաստան աշխարհին և զնուազին մերոյս ազգին, և զջարութիւնն մահմեդականաց», իսկ երկրի ավերումը եղել է Շահնարակի բոնի գաղթից, Ջղալօղու և Շահնարակի կոփեներից և նոցանից հետո եկած Զալլալոց և սովոր ձեռից, որ տիրել է ՌԾԵ=1606—1609 թվականներին, երբ «եղեն ցիր և ցան ազգն Հայոց և զնացին հրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իրոց գտանել տեղի կելու և ապրելոյ... Զի ազգէն Հայոց՝ որքան դարդականը կան բասացեալ գաւառու, յայս ժամանակին և յաս պատճառէն են զնացեալը» (եր. 65, գլ. Է):

Որեւն Հայաստանի ավերունքը, քան Առաքելի 1603—1609 թթ. լինելով, որ և պատմում է սրտառուց գրչով (այնուհետև եղած ավերունքը մասնակի է և հայրենիքից դրսի համար և պատմում), պետք է ենթադրենք, որ ականատես համարվելու համար այդ դեպքերը (1603—1609) կատարվել են նրա գոնե 7—13 կամ 12—18 տարեկան հասակի ընթացքում, որ համապատասխան է մեր ենթադրած թվականին:

Սակայն այս տարիքը հակասական է թվում, Առաքելն իրեն Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտ է անվանում, իսկ Փիլիպպոս կաթողիկոսի համար գրում է. «Գոյով սրբ ի տես տղայութեան չորեքտասան ամաց աւելի կամ պակաս», երբ ոյք ամսից հետո սա հանդիպում է Մովիւսին, երբ սա դեռ կաթողիկոս չէր²:

² Կաթողիկոս եղել է 1629 թվին, և Սարգսի պարոն տերը (մեռած ՌԿԹ=1720) հանձնում է սրբան քարոզության ժամանակ: Մովիւս քարոզության է ելնում Մրապինի մահից հետո (մեռել է ՌԾԵ=1606), որեւն շուրջ 1610—Փիլիպպոս 15-ի մոտ պիտի լինի, որով ևս ծննդած պիտի լինի 1590-ի մոտերը, որեւն Առաքելը հասակակից է Փիլիպպոսին: Այս ասենք անսովոր չէ:

Եթե 1606-ին Փիլիպպոս 15 տարեկան լիներ, որեւն ևս ծննդած պիտի լիներ 1591 թվին և հասակակից Առաքելին: Այս ժամանակի համար մի անսովոր բան չէ հասակակից մոտ ուսում առնելը, երբ ֆորբերն էլ մեծերից ուսում էին առնում: Այլ մանաւանդան թե Առաքելն իրեն Փիլիպպոսի աշակերտ է անվանում ըստ «կարգի վարդապետաց, սկսեալ ի Գօշէ Միմիթարայ գաւազանաւան» որ իշանէ Եջմիածնի դասաստունն»:

Համենայն դեպք ինչ որ է լինի՝ Առաքելն Եջմիածնի դպրոցի վարդապետն է, որեւն բավականան մեծ հասակում Եջմիածն եկած և Փիլիպպոս կաթողիկոսից ստացած վարդապետական գավազան: Եվ իրեն Եջմիածնի դպրոցի գիտուն աշակերտ՝ հետաքրքիր է նրա հայացքն ու զարգացումը տեսնել թե որքան է: Ինչպես երկում է, այդ դպրոցը կարողացել է կարճ միջոցում բավական ուսում տալ իր աշակերտներին, թեպես և գրաքարի ոչ կատարյալ ուսումը, ինչ գրաքարի, բայց և այնպես գրեթե անսխալ պարզ շարադրություն կարողացել է անել և, որ գլխավորն է, իրու Միմեն Զուղայեցու քերականության աշակերտ, լատինացած լեզվին ենթարկվելու տեղը, ավելի հետևել է ժողովրդական պարզ շարադրասությանը, կենդանի ժողովրդական ձևերին ու դարձված ներերին, շխորշելով, ճշության ու պարզության համար, նույնիսկ գավառական ու թուրքերն բառերից, որ և ոչ թե պատմագրի պակասություն, այլ առավելություն պետք է համարել, զի ամեն պատմություն կամ գրուցների ժողովածու, ինչպես է Առաքելի Պատմությունը, որը կենդանությունը, գոյնն ու երանգը ստանում է միայն ժամանակի կենդանի լեզվով պատմվելով: Առաքել պատմագիրը, անշուշտ, ոչ շատ անգամ հասկանալով, գեղեցիկ գործադրել է մանաւանդ որիշեների խոսքերը մեջ բերելիս, շխորշելով նույնիսկ զուտ աշխարհաբարից: Բայց ևս նույնիսկ այդ հասկանալով է անում, քանի որ թուրքերն և գավառական բառերի դիմաց հաճախ գրաքար բառեր է դնում փակագծի մեջ: Այս լեզուն լատինացած հայերենով գրողների համար, հարկավ, ինչպես Ուկանի, որ առաջին տպագրողն է Ամստերդամում, պիտի համարվեր «աղաւաղեալ ի գրչաց անհմտաց և անուղաց արանց և բանաստեղծից»:

Սակայն այդ դպրոցը, մյուս կողմից, տվել է ս. Գրոց բավական ծանոթություն և իին սովորությամբ Առաքելն ևս իր գրաքարի մեջ ցուց է տալիս, որ ինքը գիտե սուրբ Գիրքը, թե ս. Գրքի ձևերից օգտվելով և թե, որ ավելի հաճախ է պատմում, խրատական կամ նկարագրական օրինակներ բերելով սուրբ Գրքից:

Եկեղեցու հարազատ գավակ, եկեղեցական ոգլով սնիված, առանց աշխարհական գաղափարների մասնակցության: Կրոնախրության և անարատ քարոյականության հետ՝ ավելի գորեղ է պատմագիր մեջ հայրենասիրության ոգին, որից հրա պատմությունն ավելի շունչ է ատանում, ինչպես է բոնի գաղղի նկարագիրը:

Խորենացու հայրենասիրության ոգին անցել է այդ վարդապետին. Խորենացին այդ «Դասատան» սիրելի դասագիրը պիտի եղած լինի, որ և Սուաքելի մահից 25 տարի հետո իբրև «շընաղավէս և գեղեցկաշար պատմութիւն նախնեաց մերոց», որ թոնմա եպիսկոպոս «ընծայէ ծայիկ բերլորտեան ցանկալի ազգին Արամեան»: Խորենացու հայրենասիրությամբ, բայց և առանց Խորենացու ճարտաանության, պարզ ու բնական, Խորենացոց ավելի սրտառուց է ողբում յոր հայրենիքը, որից ավելի գեղեցիկ չէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանասեղ ողբա:

Եվ կամ հետևյալ կտորը (43—44), որի մեջ շողայեցոց³ բանալիները գետը ձգելն է նկարագրում, որին կարծես ինքն էլ մասնակցում է: Որքան սրտառու և տխուր իր պարզության մեջ, կարծես ամրող վիշտ լինի և, իրավ, արտասուրով գրված, մի բնասատեղծության կենդանի պատուիք է: Եվ ի՞նչպես չմորմոքվեն, քանի որ նրանք պիտի թողենեին ամենայն քարությամբ լի աշխարհը (եր. 150), որը «փոխթիւն և առատութիւն է», որը են «գերեզմանասությօք հառոց և նախնեաց նոցա, վանորայք և ոխտաւեղիք, որը դամբարանը են սրբոց, և մասնաւանդ մեծահանդէս Աթոռն սուրբ Էջմիածին, որը կա սուրբ Աշճն Գրիգոր Լուսատորչին, որով օրինի սուրբ մեռուն, ուստի գնացեալ սփորի յազգու Հայոց յամենայն աշխարհ որ և իցեն. վասն որոյ ամենայն ազգն Հայոց հնազանդին սրբոյ Աթոռոյն Էջմիածին և կաթողիկոսի նորա՝ որ անդ նատի... Քանի վերայ աջոյն և Էջմիածին ամենայն ազգն Հայոց կապեալ կան»: Եվ այդ հիշելով ուզում էին գերեները դառնալ հայրենիք: Սակայն անհոյս, զի «նորա երթալով երթային և լային», և «ո՞չ եղան տեսանելի» որ ասէ, գալով եկեսցեն և ցնացեն» (32):

Կարծես թէ Խորենացու, մեր այդ ամենամեծ հայրենասեր մատենագիր խորերն ենք լուս, որ անաշառ կերպով խարազանում է հայ ազգի քաղաքական անհեռութեալությունն ու անմտությունը. «հսկ արքշիո, և անագորդն, և անիմսատ, և անանաքարոյ ազգու Հայոց՝ ոչ ի սկիզբն խորհեցան, և ոչ ի վերջն հայեցան՝ թէ զինչ է լինելոց վերջ

գործոյս այսորիկ»: Մի գործ նրանց դեմ լարված՝ օրինակորության քողի տակ՝ նրանց դեմ կրոնական հաղածանք հանելու և դեպի հոգևոր ու ազգային կրորուստ տանելու:


Ժամանակի վիճակն էր այդ. կրոնի պատճողով հայ ազգը հաղածվում էր, - և կարելի է ասել, որ Սուաքելի ամբողջ գրվածքը գրեթե մի համազգային վկայաբանություն և նահատակություն է, ինչ որ ընդհանոր ազգին է վերաբերում, բայց և մասնավոր նահատակություններով էլ իի է Սուաքելի Պատմությունը (գլ. ԽՌ—ԽԸ), որոնք մի տեսակ հավելված են Սուաքելի Պատմության, և կարևոր հավելված՝ ժամանակի վիճակը լավ ուրուելու համար: (ԻՌ—«Վասն նահատակութեան տէր Սննդիւս քահանային»), որ և ամենից գեղեցիկն է, և նախնի վկայաբանությունների հետ կարող է մրցել:

Սակայն այդ վկայաբանությանց մեջ՝ մեզ պատմագիրը չի տալիս երևակայական կամ պատակական զարդարյալ պատմություն, այլ մի իրական թշվան աշխարհի նկարագիր, որի մեջ եթե պատմելու ձկը ժողովրդական պատմողների և մեծ մասմբ ականատեսների բերանից առած լինելով՝ ժողովրդական բնավորություն է ստացել, հիմքը իրական է: Այստեղ մենք տեսնում ենք մոլանեների, մահմեդական սուստաների և մուֆթինեների կատաղությունը, թե ինչպես մահմեդականը քրիստոնեան անպատվել կարող է ամեն տեսակ, և քրիստոնյան պետք է լին, թե չէ նահատակությունը նրա համար պատրաստ է: Զոր խմելիս կամ լվացվելիս աղբյուրից՝ եթե մահմեդականը զայ հայը պիտի հեռանա, եթե չի ոգում նահատակվել: Նոյնիսկ լամուկները կարող են նեղել հային, և հայը պետք է լիի, եթե չի ոգում նահատակվել: Բավկական է մի հայի համար սուս ասեն, թե նա ցանկացել է մահմեդական դառնալ, և պիտի դառնա, եթե չի ոգում նահատակվել և այն էլ ինչպես և ինչ շարշարանքներով:

Եվ Սուաքելը, ինչպես յոր ժամանակակիցները, իրենց կենդանի հավատքով չեին կարող անտարբեր մնալ այդ ազգայինների բազմաթիվ նահատակությունների առաջ:

Եվ այսպիսով, վկայաբանական պատմությունը գրավել է մեր հայրերի մոռքերը հնուց ի վեր, թե թարգմանությամբ և թե ինընուրույն հեղինակությամբ, թե օտար և թե մանավանդ հայ վկաների: Այդ տեսակի ընթերցանությունը սիրելի էր ազգին այն ժամանակ, և Սուաքելը չէր կարող յոր Պատմության մեջ չառնել այդ պատմությունները պետք է նրա ժամանակակիցների վրա մեծ տպավորու-

³ Մորացանի վեպը:



բյուն թողնեին, և Առաքելի Պատմությունը մի սիրելի և ժողովրդական նիբը դարձնեին, ինչպես եղել է իրոք:

Ժամանակի ոգին հերոսական էր, որը բոնի գաղթի ժամանակ ծնեցնում էր դյուցազներ և դյուցազնուհիներ. «Կանայք և տղաք և աղջկունք... իբրև տեսին զինքեանս մատնեալս ի ձեռւ անիրաւ մարդաշէս գազանց, որ վարեն զնոսա ի գերութիւն և պէս պէս աղտեղութեամբ ապականեն զարդութիւն նոցա... պատէին զերեսս փակեղամբ և ծործով իրեամբ և յամբա բարձրութեալն ի յայրէ անտի ի վայր արկանէին զինքեանս և մեռանէին» (Եր. 37):

Այսպես և բազմաթիվ քաջ հահատակներով ավելի և զորանում էր ժողովրդի մեջ ազգային եկեղեցու հավատը, շերմեռանդ փափագանոր համբուրելով «զոտրքս», նըրանց մարմնի մասունքը եկեղեցիների մեջ դնելով և բոլոր բազմությամբ դիմելով սրբի ժաղմանը, մի ազգային մեծ հանդես կատարելով այն տխոր ժամանակին, երբ հայր զրկված էր ամեն հանդեսից ու մի տեղ

խմբվելով հնարավորությունից, թեսես և մահմեղականներն ալդասի տխոր հանդեսներ կատարելն անգամ արգելում էին (Եր. 417): Մինչդեռ ազգային միմիարդությունն այդպիսիների գլխին լուս է իշեցնում, չարչար պատճում է հավատորացներին, որ մինևույն է՝ ազգությացներին:

Այսպիսի բաների հավատքով և հասկացողությամբ Առաքել վարդապետը ոչնչով բարձր չէ ուսմիկ ու տգես ժողովրդից: Բայց և այնպես, չնայելով յուր մեծ միամըստությանը, նա լավ կերպով ըսրուել է ժամանակի ոգին և մանավանդ Շահարասի քաղաքականությունը, ձգտումներն ու հաստակը, գործ դրած խորամանկ միջոցները, մինչդեռ իր ժամանակակիցները չեն հասկացել այդ թագավորին, և նա զանազան գրուցների հերոս դարձած, նույնիսկ քիստունեան է համարվել:

(Մանուկ Արելյան, Հալոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, էջ 442—444, 448, 449—450, 451):





Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ

Առաքել Դավրիժեցին Գրիգոր Կամախեցու և Զաքարիա Քանաքեցու հետ միասին ժիշտ դարի հայ պատմագրության հայտնի Աերկայացուցիչներից է: Ծն. Աստրատականի Դավրեծ (Թավրիզ) քաղաքում, հայաբնարա ԺԶ դարի վերջերում: Եղել է Էջմիածնի միաբան և, վարդապետական կարգով, Փիլիպպո Աղբակեցի կաթողիկոսի աշակերտը: Սույն կաթողիկոսի հրամանով 1651 թվականին սկսել է գրել իր Պատմությունը և ավարտել է Հակոբ Զուտանցի կաթողիկոսի օրով 1662 թվականին, թեև նրանց հետո ել դեռ ավելացրել է որոշ գլուխութեր ու հատվածներ: Մեռ. 1670 թվականին Էջմիածնում ու թաղվել այնուհետ: Առ. Դավրիժեցին ստուգապատում մատենագիր է և իր ժամանակի պատմության համար փառահետի աղբյուր: Նրա երկը հիմնականում ընդգրկում է ԺԷ դարի սկզբից մինչև 60-ական թվականները մասամբ ներառյալ ժամանակաշրջանը՝ արժեքավոր տեղեկությունները հաղորդելով այդ շրջանի քաղաքական դեպքերի, հասարակական երևությունների և ազգային լյանքի մասին (թուրք-պարսկական պատերազմները, ջալայինների շարժումը, սովը, գաղթականությունները, արևմտահայ բորբոքագիայի ներքանակարգային կովկասուրը, լեհահայ գաղութի դեպքերը, լուսավորության ու գրական վերածնության ճգնաբերը, ժամանակի հայ հայտնի գործիչները, և այլն):

Առ. Դավրիժեցին ինքնի ականատես է եղել շատ դեպքերի և դրա հետ միասին իր շրջագայությունների ընթացքում գրի է առել նաև ականատեսների պատմածները, ինչպես ինքնի է ասում. «Ի յորով երկիրս և յաշխարհս շրջագայելով ի խնդիր զրուցաց պատմութեան, ոչ միայն ի քրիստոնից, այլև յայլոց ազանք հարցանելով, և ամենեցունց զասացեալսն գրելով»¹: Սակայն Առ. Դավրիժեցին ունի մի շարք գլուխներ, որոնք բովանդակությամբ ավելի նին շրջաններ ևս ընդգրկում են. այդպիսիներ են՝ Լ, ԼԱ, ԼԲ, ԼՉ, ԾԱ, ԾԲ, ԾԴ և ԾԵ գլուխները: Այս գլուխների համար ևս հեղինակն օգտագործել է փառահետի աղբյուրներ. այսպէս, օրինակ, Լ գլուխ Գրիգոր Լուսավորչի աշի պատմության համար ևս թերում է մի շարք հիշատակարաններ. ԱԱ գլուխ հայոց կաթողիկունների գավազանացանկը կազմելիս օգտվել է նին ժամանակագրություններից, կոնդակներից և ձեռագրերի հիշատակարաններից, ևն: Առ. Դավրիժեցին իր Պատմության մեջ մուծել է նաև ուղղակի որիշներից գրի առնված կոտրներ. օրինակ՝ ԾԴ գլուխը Հովհաննես Ծարեցու «Պատմութիւն Աղուանից աշխարհին»-ն է, իսկ ԾԳ գլուխ մի մասը Սարգիս Բերիացու «Վասն ան-

¹ Տպ. Վարարշապատ, 1896, էջ 670:

ուանց և որպիսութեանց պատուական ականց»-ը է. ուրիշներից են նաև ԾԵ գրովը կազմող անխորագիր ժամանակագրությունն կը. «Ի Հայոց բուհականին Փ. Կարզեցա հինգ հարիւրակն») ու «Պատմութիւն անցից Հրեց ազգին և Սապէթայ անուն շինին»-ը: Առ. Դափիթեցու Պատմության առաջին տպագրությունը լուս է տեսել իր կենդանության օրով՝ 1669 թվականին Ամստերդամում: Նրա անունով կամ երկու տաղեր ևս:

Ա.—ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա տպ.—Գիրք Պատմութեանց. շարադրեալ վարդապետին Առաքելոյ Դարեժացոյ: Սակա դիպուածոց Հայաստանեաց և և գաւառին Արարատոյ՝ և մասին Գողթան գաւառի, սկսեալ ի բույն Հայոց 1054 էն, մինչև հաւարտ պատմագրութեանս. այս ի լիշումն ածեալ մասնառորաբար, աստի և անտի: Տպագրեալ ներ տպարանում սրբուն Էջմիածնի և սրբուն Սարգսի օրավարի: Ի հայրապետութեան տեառն Յակոբայ կաթողիկոսի սրբուն Էջմիածնի: Եւ վերակացութեամբ տեառն Ուկանայ Երևանցոյ բանի սպասարորի: ՅԱՄԱՐԵԼՊՐԱՄՈՒՄ: Ներ թուոց փրկչին 1669 ին, Յունուարի 1: Խսկը ըստ Հայոց 1118 ին, Սահմի 29:

650 էջ (19×11.5 սմ): Պատմության բնագիրը բաղկացած է «Նախադրութիւն»-ից և 56 գլուխներից, բայց հրատարակիչ Ուկան Երևանցին ԾԷ և ԾԸ համարներով ավելացրել է երկու գլուխներ և հետևյալ վերևագրելով. «Պատմութիւն կենաց Ուկանայ վարդապետի Երևանցոյ տպագրողի գրոյն և այլոց», որը Ուկան Երևանցոյ կենսագրությունն է, և «Յաղագու միութեան և միասութեան, Եղինք են երեւ զանազանք, արարեալ նունյ Ուկանայ վարդապետի»: Վերջում՝ տպագրության հիշատակարանը. «Ծնորիօք և ողորմութեամբ ամենազօրին աստուծոյ շարատպեցեալ յաւարտ ժամանեաց մատեան Պատմնագրական ներ թուոց փրկչին ՌՈՒԿԹ (=1669), համսեանն Մայիսի, որոյ ասուրք էին Զ: Խսկ ըստ Հայոց ՌԾԺԸ, համսեանն Արեգի, որոյ ասուրք էին Դ: Սրբագրութեամբ և ընչիր Ուկանի վարդապետի Երևանցոյ ի տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյ Սարգսի, ի հայրապետութեան տեառն Յակոբու Հայոց կայտողիկոսի: Ներ քաղաքում հոյակապում Ամստերդամում» ևն: Բնագրի սրբագրության մասին Ուկանի կենսագրության մեջ գրված է, որ նա «նաև զարդարություն նոր՝ զարարեալն յԱռաքեալոյ վարդապետէ, զորս ո՞չ միան տպագրեաց, այս սրբագրեալ ողինեաց ըստ բերականութեան արհեստի, զաղաւա-

դեալն ի գրչաց անհմտաց, և անոպայից արանց և բանատեղծից» (էջ 637—638):

Այլ տպագրություն.—Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիթեցոյ: Սակա դիպուածոց Հայաստանեաց և գաւառին Արարատավ և մասին Գողթան գաւառի, սկսեալ ի ՌԾԴ բուհականէն Հայոց մինչ ի ՌԾԺԸ թ: Ըստ ձեռագիր օրինակին արտագրելոյ ծախիր և հսկողութեամբ հեղինակին: Տպեալ հրամանաւ Սինորի Ս. Էջմիածնի: Ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1884—ՌՅԼ:

Բ+524 էջ (25×18 սմ): Հրատարակել է Էջմ. Մատ. № 1714 ձեռ. օրինակի հիման վրա, ընդորինակած՝ 1663 թ. Աթանաս դարի ձեռքով, համեմատությամբ նոյն Մատ. № 1713 ձեռ. օրինակի, որն ընդորինակած է 1666 թ. Ավետիսի երեցի ձեռքով, և Ուկան Երևանցու հրատարակության: Այս հրատարակության մեջ չկան Ուկանի հավելվածները. դրա փոխարեան ԾԵ և ԾԶ գումաների միջն կա հիմարակալված մի նոր գուման՝ «Պատմութիւն անցից Հրեց ազգին, և Սապէթապ անուն շինին» ևն (էջ 503—514): Ըստ Ավետիսի երեցի օրինակի, և օգտագործված երկու ձեռագիր օրինակների գորիների հիշատակարանները: Հրատարակների գեկուցման մեջ տեղեկություն է տրվում այն մասին, որ հիմք ընդունելով Աթանաս դարի օրինակը՝ «ի տպագրութիւնս յայս փոյթ կալաք ողηեա միայն զվրիպակ գորին և զտառախալասն, զուոյ տարբերութիւն յօրինակէն Աւետիք երիցու և զթեռութիւնն Ուկան վարդապետի՝ ցուցանելով ի ծանօթութեան» (էջ Ա):

Գրախոսություն. Fr. Müller, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, Bd. 11, 1888, S. 259—262, հաներն բարգմ. Հանդէս Ամսորեայ, 1889, էջ 139—141:

Այլ տպագրություն.—Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիթեցոյ: Սակա դիպուածոց Հայաստանեաց և գաւառին Արարատավ և մասին Գողթան գաւառի սկսեալ ի ՌԾՍ. թուականին Հայոց մինչ ի ՌԾԺԸ թ: Երբորդ տպագրութիւն: Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1896—ՌՅԼ:

ԺԴ+711 էջ (25×16 սմ): Արտատպել է համարդ հրատարակությունից: Հրատարակի, Դ. արեկավագը խոսելով նախորդ՝ 1884 թվի հրատարակության մասին, նշում է. «Այս հրատարակութեան ժամանակ հրատարակիչը ձեռագրի քերականական ձևերը և ոճերը փոփոխել է բայ իր հասկատողութեան. այդ պատճառով Ա. [=№1714] ձեռնագրիը նոյնութեամբ ընծայելու, այսինքն քերականական ձևերը, դարձուածքները և

բառերը վերականգնած լինելու համար համեմատեցինք ամբողջ ձեռագիրն այս Գ. հրատարակութեան հետ և այդ տարրերութիւնները մանրամասն նշանակեցինք գրքիս վերջում» (էջ Ժ): Հասորի վերջում գտնվում է ընդարձակ ցանկը՝ «Առաքել վարդապետի Պատմութեան գրչագիր օրինակի (Աթանաս դպրի № 1714) և տպագիր օրինակի (Վահագաղապատ, 1884 թ.) մէջ եղած մանրամասն տարրերութիւնները» (էջ 695—711): Հասորը ունի նաև «Յանկ յատուկ անուան» (էջ 675—694):


Առ. Դավիթիմեցու Պատմության ձեռագիր օրինակներից ծանոթ են Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1773 (էջ 3ա—437ա), № 1772 (էջ 3ա—418ա), № 5025 (էջ 1ա—378թ, վերջից թերի) և № 7296 (էջ 1ա—393թ, վերջից թերի), որոնցից №№ 1773 և 1772 օրինակները 1884 և 1896 թթ. տպագրությունների համար օգտագործվածներն են (նախկին Էջմ. Մատ. № 1714 և № 1713): Նրանցից դուրս կան նաև նույն մատ. № 4998 (էջ 136թ—405ա) օրինակը, որ 1669 թ. ամստերդամյան հրատարակույթումից է ընդորինակված, և № 5959 (էջ 95ա—103թ) օրինակը, որ միայն հատվածներ է պարունակում: Մի օրինակ ունի նաև Վիեննայի Միիթ. Մատ. ձեռ. № 137=հին № 83 (էջ 1ա—428ա): Բնագրաբանական տեսակետից նշելի է, որ Երևանի Պետ. Մատ. ձեռագրերի շարքում 5081 համարի տակ գրությունը է Ուկան Երևանցու 1669 թ. հրատարակությունից մի օրինակ, որի թերթերին կացված թերթիկների վրա նշանակված են

մի ձեռագրի տարրներցվածներն ու հավելվածները՝ մի նոր տպագրություն պատրաստելու հպատակով:

Առաքել Դավիթիմեցու Պատմության ֆրանսերեն լրիվ թարգմանությունը ծանոթագրություններով՝ „Livre d'histoires, composé par le vartabied Arakel de Touriz“, հետևյալ ժողովածովի մեջ. M. Brosset (հրատ.), „Collection d'historiens arméniens“, t. I, St.—Pétersbourg, 1874, p. 267—608. Առ. Դավիթիմեցու ԾԵ գլուխ ֆրանսերեն թարգմանությունը առանձին, ավելի ընդարձակ ծանոթագրություններով, տես M. Brosset, „Des historiens arméniens des XVII^e et XVIII^e siècles: Arakel de Tauriz, Registre chronologique“, St.—Pétersbourg, 1873, p. 22—60. Վրաց պատմության վերաբերող որոշ հատվածների ֆրանսերեն թարգմանությունը՝ „Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle, traduite du géorgien par M. Brosset“, II^e partie, 1^{re} livraison, St.—Pétersbourg, 1856, p. 421—445. „Extraits de l'Histoire d'Arakel de Tauriz, relatifs aux règnes de Siimon 1^{er} et de Giorgi X“, ԾԳ գլուխ ուսուերեն թարգմանությունը տես K. П. Патканов, „Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке“, С.-Петербург, 1873.

(Հայկական մատենագիտություն, հասոր Ա, էջ 1144—1148, 1151—1152):





ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՑՅԱՆ

ՅԱՂԱԳՍ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԼՈՒՍԱԿԱՌՈՅՑ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՑՆ ԷԶՄԻԱԾՆԻ

«Ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն
ազգն հայոց կապեալ կան»:

Ա.Խ.Ա.ԲԵԼ. ԴԱՎ.ՈՒԺԵՑՑԻ

Հայրապետական սրբատառ կոնդակի հրահանգով մայիս ամսվա մեջ ոգեկոչվեց անոնն ու գործը և հիշատակը Մայր Աթոռի միաբան, հայրենասեր պատմագիր ու «կիպասան» Առաքել Վարդապետ Դավիթիծցու, նրա մահվան 300-ամյակի առիթով (1670—1970):

Դավիթիծցին ժԷ դարի Մայր Աթոռի «երեխելի, քաջ գիտուն և հմուտ», հավատավոր ու լուսամիտ վարդապետներից մեկն էր, որը «յուղորմելի ծերութեան» հասակուն, «ցաւագար մարմնով», 1651—1662 թվականներին, Երևանի ու Կաթողիկե եկեղեցու հովանու տակ, Տ. Փիլիպպոս Աղքակեցի և ապա Տ. Հակոբ Դ. Չուղալցի կաթողիկոսների օրինական և թելադրությամբ, գրի է առել իր պատմությունը, «Լուկածակի մորմորմամբ սրբադի, տեանելով զաւերս Հայաստան աշխարհին, զնուագիլն մերոյս ազգին և զշարութիւն մահմերականաց, զպակասիլն եկեղեցական կարգաց, զաւերն բարձրագան և քրիստուաբնակ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի, այլ և զնոցին նորոգութիւն և այլ բանք

պատմութեանց ի գիրս, յիշատակի, ի գիտութիւն յապայ եկեղեց»¹:

Դավիթիծցու պատմությունը, որ բովանդակում է 60 տարվա մի շրջան, 1602—1662, «մի համազգային վկայաբանություն և հաճատակություն է»², և միաժամանակ ու Էջմիածնի խոստումնալից ու խանդավառ վերածննդյան ու հայ կյանքի մտավոր վերակենդանության օրիներգությունը:

Սույն հոդվածի վերնագիրը՝ **Էջմիածնի լուսակառուց սուրբ Աթոռի նորոգության մասին**, վերցվել է Դավիթիծցու պատմության հԴ գլխի վերտառությունից³:

1441 թվականին հայրապետական Աթոռի իր պատմական բնիկ Վայրը ու Էջմիածնի փոխադրվելուց հետո, 1460—1620 թվականները, հանդիսացան մեր եկեղեցու

¹ Պատմութիւն Առաքել Վարդապետի Դավիթիծցոյ. 1) աղարշապատ, 1896, էջ 667—669:

² Մանուկ Արեղյան, Հայոց նին գրականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946, էջ 449:

³ Առ. Դավիթիծցի, նոյնը, էջ 284—313:

պատմության ամենամուալ և անկյալ շրջան-ները, մեր երկրում տիրող քաղաքական, տնտեսական դաժան պայմանների բերումով:

Այդ ժամանակահատվածում մեր եկեղեցին և ժողովուրդը դատնորեն հեծում էին պարսկական և օսմանյան մասմեջական ծանր լին տակ: Մեր երկիրը թատերաբեմ էր հանդիսացել երկու մորգակից պետությունների միջև հաճախակի մղված ավերիչ պատերազմների, որոնց ընթացքում ավերակ էին դարձել մեր շեն քաղաքներն ու ավանները, ամայացել՝ հայ մշակույթի պայծառ և հոյակապ կենտրոնները՝ վանքերը, կողոպտվել՝ փարթամ եկեղեցիները և գերեվարվել՝ հայ ժողովուրդը: Այդ ծանր, որբերգական տարիներին Մայր Աթոռ ու Հջմիածինը հավասարապես քաժանում էր իր հարազար ժողովուրդի ցավն ու տառապանքը. Հջմիածինը նոյնպես կողոպտվում է, քանիվում և անշքանում:

Աղետն ու անկումը իրենց գագաթնակետին են հանում շահաբայան բոնագալթի հետևանքով՝ 1603—1620 թվականներին: «Այս վերջին ավերմունքը վերջին հարվածն է տալիս հայոց հին քաղաքակրթության, որ արդեն նվազած էր շատ»⁴:

Բայց այս անգամ էլ հայ եկեղեցին և մեր ժողովուրդը իրենց հոգում գտնում են կենակության և կենդանության անթեղված, անսպառ ոտեր ու ոտքի են կանգնում՝ նոր հառաջիմության գաղափարով տղորոված:

Ժէ դարի 20-ական թվականներին էլ սլիքը է առնում հայոց աշխարհի՝ ու Հջմիածնի հովանու և օրինության ներք, եկեղեցական, հոգևոր, մշակութային ու հայրենական վերակենդանության խոտումնալից ժամանակաշրջանը, մեծ լուսավորիչ վարդապետների սրտագին շանքերով:

Դավիթեցին, ժամանակակից և ականավոր պատմիչը, դատությամբ է հաստատում այդ ժամանակի հոգևորականության կանքում տիրող տիրող ու անկյալ քարքերը, տգիտությունը, հոգևոր, մտավոր անկումը, որպես հետևանք ժամանակի օտար բոնակալությունների ծանր քաղաքական և տընտեսական ճնշման:

Հոգևորականությաց շատերը և հասարակ ժողովուրդը «ոչ գիրս գիտէին և զօրութիւն գրոց», որովհետև ընդհանրապես «տգիտութեամբ խոպանացեալ և կորդացեալ էր ազգնայց»⁵:

Եկալ մի պահ, երբ պետք էր, սակայն, ի գին ամեն զոհության, փրկել հայ եկեղեցին և ժողովորդին ու նաև մեր դարավոր

մշակույթը: Անա օրվա հրամականը, որ ծանր մղամային հայութ էր ժամանակի կրթված ու հայրենասեր վանականների մոտքերը: Ու հրապարակ իշան տեսիլք ու հավատք ունեցող հոգևորականները, լուսամիտ ու ժողովրդանվեր հոգիներ՝ վերակենդանացնելու համար նախ եկեղեցին և ապա եկեղեցու միջոցով՝ հայ ժողովրդի հոգևոր, մտավոր կանքը:

Սոյն վերակենդանության հիմնական օշաբները հանդիսացան նորից հայ վանքերը, հիշական եղել էր միշտ անցյալում:

Եվ ահա մեծ թափով սկավում է որպես ամոր հիմք և խափիս վերածնության, հին վանքերի վերանորոգությունը, և նորերի շնորհյունը: Վանքերը հանդիսանում են նուսալից հենարանները Ժէ դարի մեր վերաբնական ժամանակական քաղաքակրթության դերը, որ ունեցել էին Ժէ դարում:

Այս մասին Մանուկ Աբեղյանը նշում է. «Վանքերը կենդանանառվ՝ կենդանություն և թարմ հոսանք են մտցնում ժողովրդի թքմության մեջ: Զարթնում է նոր ուժով կրոնական ոգին: ..Մեր վանքերը մի անգամ էլ կատարում են իրենց պատմական քաղաքակրթության դերը, որ ունեցել էին Ժէ դարում:

Հնի մեռելության մեջ վերածնությունն առաջ են բերում ո՞չ թէ Միհիթար Աբբան և Միհիթարյանները»⁶ (Ընդգծում՝ Ս. Հ.), այլ՝ հայ ժողովրդի ծոցից ծնած, նրա վիշտն ու տառապանքը հարազատորեն բաժանած՝ Հայաստանում ապրող ու գործող մի խումբ վանականներ, որպես լուսավորիչներ և վերանորոգիչներ:

«Տառապանքների մրրկած ծովի մեջ ծփառող հայ ժողովուրդը,—նշում է Լեռնա,-- իր դժբախտ պատմության բերումով, ուրիշ առաջնորդ ու հավատարմատար չուներ, բացի հոգևորականությունից: Թէ ինչ նշանակություն ուներ մանավանդ հայոց ընդհանրական Աթոռ Հջմիածինը... Առաքել Դավիթեցին, անշուշտ, իր ժամանակի ընդհանուր հայկական ազգային դավանանքն է արտահայտում, ասելով. «Քանզի ի վերայ Աջոյն (Լուսատոշի) և Հջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»: Ուստի և շատ կարեւոր է այն հարցը, թէ շահաբայան սարսափների պա ու տարիներում ինչ էր եկեղեցացնում հայ հոգևորականությունն իրեն բարութական ուժ, իբրև անսահման հեղինակության տեր մի առաջնորդ, որ պիտի ազդու դեր ունենար ժողովրդի կրած անհուն տանջանքների մեղմացման մեջ»⁷: (Ընդգծում՝ Ս. Հ.):

⁴ Մ. Աբեղյան, նոյնը, էջ 437:

⁵ Առ. Դավիթեցի, նոյնը, էջ 255:

⁶ Մ. Աբեղյան, նոյնը, էջ 438—439:

⁷ Կա, Հայոց պատմություն, հասոր Գ, Երևան, 1946, էջ 266:

Այս անգամ ևս համատավոր ու հայրենական հայությանը կատարեց իր նվեր հայ վաճականությունը կատարեց դեռ հայ կյանքի կարարար և քաղաքակրթից դեռ հայ կյանքում:

Ժամանակի լուսավորիչների, վերանորդիչների մեջ հիշվում են, ըստ Դավիթի Տեղեացու.

Սրբապիոն Վրդ. Եղեացի, տիեզերապուս վարդապետը. ապա կաթողիկոս, Գրիգոր ծգ անոնով, որն իր սեփական միջոցներով վճարեց Մայր Աթոռի պարտը և սկիզբ դրեց նրա «Յորդության» (1601—1603): Դավիթի մեջոց պատմության Բ և Գ գլուխները նվիրվել են Սրբապիոն Եղեացու կյանքին ու լուսավոր գործունեությանը (Տես նաև Հո. Աճառյան, Հայոց աճանանունների բառարան, հաստոր Գ, էջ 680):

Սարգիս Եպս. Պարոնտեր-Ամբերդյան.

Կիրակոս քին. **Տրապահոնցի⁸**, որոնք համադաշան հիմնադիրները Սյունյաց Անապատի՝ Տարօնի հիմ վաճիք մոտ, «որք եղեն սկիզբն շինելոյ և հաստատելոյ անապատաց».

Գրիգոր Կեսարացի, «այր գիտուն և բանիբուն»¹⁰, «ապրկեցու և սրբակրօն վարուր, պահեցող» մեծ հոգևորականը, ապա պատրիարք Կ. Պոլսի, աշակերտը՝ Սրբապիոն Եղեացու.

Պողոս Վրդ. Մոլկացի, որը վաճական կրթական մեծ գործունեություն ծավալեց Շոռոյի և Աստապատի վաճեցրում: Դավիթի մի մարտող գլուխ է նվիրվել նրան, իր պատմության մեջ: Ընկերն ու գաղափարակիցը Մովսես Սյունեցու.

Ներսես Վրդ. Մոլկացի. Ամրտոլու և Հարաց վաճիք աշակերտ և ապա հիմնադիրը Լիմ անապատի (Վասպորական).

Մելքիսետեկ Վրդ. Երեացնի, Վժան գյուղից, աշակերտ Մոլկացու: Գործեց Հարաց վաճերում, Լիմ անապատում: Երեար ժամանակ Էջմիածնի վաճերում դասախուեց քերականություն և փիլիսոփայություն: (Աճառյան, հաստոր Գ, էջ 306):

Մովսես Վրդ. Սյունեցի, ապա կաթողիկոս Մովսես Գ Տաթևացի անոնով, որոնք ըստ Դավիթի մեջում հանդիսացան ծգ դարտմ հիմնադիրներն ու սկզբանվորդները «Անապատի և կրօնաւորական կարգաց», «որովք և պատճան՝ ամենալայ բարեկարգութեան վանօրէից և եկեղեցեաց և նոցին բնակուղաց»:

Դավիթի մեջին իր պատմության մեջ մասնավոր գլուխներ է նվիրվել Մայր Աթոռի Եր-

կու մեծագործ հայրապետների՝ Մովսես Գ Տաթևացու, Փիլիպպոս Ա Աղբակեցու, ինչպես նաև Սարգիս եպիսկոպոսի, Կիրակոս քահանայի և Պողոս վարդապետ Մովսես գործունեությանը¹¹:

ԺԷ դարում հայ վերածնության օշաբներ հանդիսացան Սյունյաց մեծ Անապատը կամ Հարաց վաճիքը, Նոր Զուղայի Ամենափրկիչը, Սաղմոսավանը և մանավանդ Էջմիածնը, որը որպես մնայուն կենտրոն և հոգևոր վերին գլուխ դեկապարում և առաջնորդում էր վերանորոգչական լուսավորական այդ մեծ շարժմությունը: Փակվում է հայ եկեղեցու պատմության ու էջը և սկսվում է լուսավորության շրջանը: Խավար դարերին հաջորդում են գիտության և հառաջդիմության դարերը:

ԺԷ դարում, Մայր Աթոռի, հայ եկեղեցու վաճերի արմատական «Յորդության» գործը, սակայն, սերտորեն կապվում է Մովսես Գ Տաթևացու անվան և գործունեության հետ¹²:

Այդ «Յորդությանը» կամ վերազարդումը շարունակվում է Փիլիպպոս Աղբակեցի և Հակոբ Դ Զուղայիցի կաթողիկոսների գահակալության տարիներին՝ հասնելով խանդական ու մնայուն իրագործումների:

Ստորև ներկայացվում է Մայր Աթոռի երեք մեծ հայրապետների գործունեության համառոտ պատկերը, ըստ Դավիթի մեջում, Սիմեոն Երևանցու և Օրմանյան սրբազնի:

ՄՈՎՍԵՍ Գ ՏԱԹԵՎԱՑԻ (1629—1632)

Մովսես Տաթևացին ծնվել է ԺԶ դարի 80-ական թվականներին Սյունյաց աշխարհի Բաղը գավառի Խոտանան գլուխում, այժմ Աճոնան: Նախնական կրթությունը ստացել է Սրբապիոն Եղեացի մեծ վարդապետի և կաթողիկոսի մոտ¹³ և ապա նրա աշակերտ, «ժիր ու գործունյա» Գրիգոր Կեսարացու մոտ:

Եղեացին վաղ վախճանվելով, Մովսեսի կրթության և դաստիարակության գործը հանձնում է Գրիգոր Կեսարացուն: 15 տարեկան հասակում Մովսեսը կրտսելու քահանա է ձեռնադրվում Կեսարացուն և ապա նոյնպես նրանից է ստանու վարդապետական աստիճանը «մեծ հանդեսով» Կ. Պոլսում, նրա պատրիարքության օրով: Տաթևացին ապա գնում է Երուաղեմ՝ «յոխտ և

⁸ Հռ. Աճառյան, Հայոց աճանանունների բառարան, հաստոր Գ, էջ 456:

⁹ Նոյն տեղ: Նաև Առ. Դավիթի մեջնորդ, էջ 249—260:

¹⁰ Հռ. Աճառյան, նոյնը, հաստոր Ա, էջ 624:

¹² Նոյնը, գլ. ԵԲ, ԵԶ:

¹³ Մայր. արքեպ. Օրմանյան, Ազգապատում, հաստոր Բ, էջ 2318:

յերկրպագութիւն տնօրինական տեղեացն», անցնում՝ Եգիպտոս՝ «շրջեալ յամենայն վաճառայս» ուսումնասիրելու համար վաճական տիպար կամքը և, «զկարգաորդութիւն ամենայն իրաց, ժամատեղեաց, սեղանատեղեաց, զգեստոց և խցացութեան և կրօնական ժումկալութեան և այլ ամենայն գործոց»¹⁴, հետագայում, «վասն ապագայից ժամանակաց», նույն ձևով վաճական կազմակերպություն առեղծելու համար Հայաստանում:

Յայն եկեղեցին զԱւետարանն Քրիստոսի վճրու և պայծառ քարոզութեամբ վասն փըրկութեան աշխարհին հայոց և ի պայծառութիւն եկեղեցեաց»:

Ժողովուրդը, որ կարիքն ուներ հոգեւոր խոսքի, հավատի ու հայրենասիրության քարոզի ու մխիթարության, «խնդրութեամբ սրտի» ընդունում էին այդ բոցավառ խորերն ու պատգամները և «յօժարութեամբ կատարէին»:

Սյունեցին քարոզելով, մխիթարելով ժո-



Մի մասնաքարտել վրդ. Դավթիթեցուց (ասեղնագործ վակաս, XVII դար)

1606 թվականին Մովսես Սյունեցին Երուսաղեմում հանդիպում է ժամանակի Հայաստանից ուխտի եկած երկու մեծ այլ վերանորդիչների՝ Սահմանավանքի առաջնորդ Սարգիս եպս. Պարունատեր-Ամբերդցուն և Կիրակոս Տրավիզոնցուն, որոնք նոյնակեն հայ եկեղեցու վերածնությունը արդարութեն կազում էին Հայաստանում կազմակերպված, տիպար վաճականության պատրաստույթան և գործունեության հետ:

Երեք մեծ լուսավորիչները Երուսաղեմում ուխտում են վերադառնայ Հայաստան ու միասիրու նվիրվել իրենց ժողովութիւն հոգեւոր մտավոր դաստիարակության գործին:

Սահմանական և Արևմտյան ու Արևելյան Հայաստանի պատմական վանքերի ուխտագնացություններից վերադառնալով հոգեւութավարարված և պատրաստ՝ իր մեծ առաքելության ու կոչմանը, Մովսես Սյունեցին քայլ առ քայլ թափառում է աշխարհն հայոց, որ խախտվել էր «քարեկարգութիւն ի վերին աշխարհիս հայոց և փոխանակ նորա արձանացեալ և արմատացեալ էր անկարգութիւնն». քարոզում, մխիթարում, պատգամում մեր հոգեւոր ու մտավոր զարթոնքի անհրաժեշտությունը, սթափվելու «ի նեշման» ծանրութեան, ամենազգաստ արթնութեամբ, հոգեւորոց զորաթիւնութեամբ» (Գրիգոր Նարեկացի): Դավթիթեցին վկայում է, որ Սյունեցին «անխափան քարոզէր յամե-

լովորդին, այցելում է Կ. Պոլիս, Տիգրանակերտ, Վան, Դավիթի, հասնում Սյունյաց աշխարհը, Տաթեկի հին վանքի մոտ մեծ Անապատ, կամ Հարանց վանք, որ իրենց առաջ եկեղեցատառվել ու իրենց կրօնական-վաճական մեծ առաքելությունն էին սկսել 1608 թվականին Սարգիս Պարունատերն ու Կիրակոս Տրավիզոնցին՝ բազմաթիվ աշակերտներով և վաճականներով միաբանություն կազմաւ:

Դավթիթեցին իր պատմության իմ և իբ գլուխները նվիրել է մեծ Անապատի և նրա վարդապետների գործունեությանը: Դավթիթեցին հարազատորեն ներկայացրել է մեծ Անապատի վաճական, առանձնական կյանքը, կրոնավորական կենցաղը, «ծածուկ առաքինութիւնն», ժամակարգության, աղոթքի և աշխատանքի կարգը, կրոնավորական զգեստի ձևը: «Ծառ զորավոր էր ճգնավորական կյանքը... գործնական կյանքն այ խնամքով մշակված, մանավանդ ուսմամբ ու քարոզությամբ և ժողովութիւն հոգածությամբ, որուն համար նոր ճյուղեր ալ կհաստատեին»: (Օրմանյան, Ազգ. Բ, էջ 2248):

Մեծ Անապատում եռամեծ երեք հոգեւորականները խանդավառորեն նվիրվում են իրենց վերանորդչական մեծ գործին: Մովսես Սյունեցին երկար տարիներ գործելով Տաթևում, կոչվում է նաև Տաթևացի:

Սյունեցին միաժամանակ, հաճախ ուսումնա-դաստիարակչական գործից բացի, նըւիրվում է նաև ժողովրդական քարոզության

¹⁴ Առ. Դավթիթեցի, նոյնը, էջ 285:

աշխատանքներին: Նա Պողոս Մոկացի վարդապետի հետ, որպես մտերիմ, գաղափարակից ընկեր՝ «իբրև զուրբ առնը առաքեալս Պետրոս և Պողոս, լեալը ամոլք հաւատոյ», առաքելաբար, հետիոտն շրջագայում են ողջ աշխարհը հայոց՝ որպես ճշմարիտ սերմնացաներ հավատի, լոյսի և գիտության. «Քացաներ ամենեցուն զճմարուութիւն, շինէին զեկեղեցիս, կարգէն քահանայս, հաստատէին, ոսուցանէին մանկունս»¹⁵, եկեղեցու և ժողովոյի համար պատրաստում ոսունաւեր և արժանավոր հովիվներ ու մշակեր:

Երկու լուսավորիչների հոգեբոլիս քարոզյան, քարելորն վարքի ու կենցաղավարության և «ոսուի վարդապետութեան» քարոզյան իմարավը տարածվում է ժողովոյի լայն խավերի մեջ:

Ժողովորդը մեծ հոյսեր է կապում երկու վարդապետների վերանորոգչական, քարոզչական գործունեության հետ և քարոզյան ու նյութապես օգնում նրանց եկեղեցաշեն, կրթանվեր ձեռնարկների հաջողության համար:

Սյունեցին Երևանի ժողովոյի սրտառուցիմունների վրա, հաճճ է առնում տեղի և Անանիա առաքյալի անապատի վանահայրությանը, ժողովոյի հերթակուն նվիրատրվությամբ նորոգում է վանքը իր հարակից շենքերով, դպրատուն է բացում, միաբանություն է հաստատում, և նրա շինարար գործունեության խանուալան իրագործումներն իրեն են կապում ողջ հայության սիրտն ու զգացումները: Սյունեցին Երևանի և Անանիա վանքին տալիս է «կատարելապես մեծ Անապատի ձևը, կրոնավորական քարելարդ միաբանություն կազմա»¹⁶:

Սյունեցին Անանիայի վանքում եպիսկոպոս է ձեռնարկվում և, ընդառաջելով նորոշույթեցիների բոլոն ցանկությանը, մեկնում է Զուլա՝ միխթարելու համար բոնությամբ գաղտեցված հայ ժողովոյի տարագիր քեկորներին, որոնք մաշվում էին հայրենիքի կարոտով և ս. Էջմիածնի սիրով:

«Ազգ և ժողովորդ մեր խելալը տեղեաց և անշատեալը ի հայրենի և ի քնիկ ժառանգութեանց, յօրինեալն ենրկու, որ լի էր նըշխարոք սրբոց սրբոց, ոռոգեալ արեամբ վկայից»: (Դավիթնեցի):

Սյունեցին այցելում է Պարսկաստանի հեռավոր գաղթօջախները, քարոզում, հուսադրում, ափոփում ու միխթարում, որ հիշեն ամենայն քարոզյամբ լի հայոց աշխարհը և մասաւանդ շնորհանան «մեծահանդէս Աթոռու և Էջմիածնի»:

¹⁵ Առ. Դավիթնեցի, նոյնը, էջ 291:

¹⁶ Օրմանան, նոյնը, էջ 2364:

Սյունեցին Պարսկաստանում եղած ժամանակ ձեռք է բերում նաև արքունի և պետական բարձրաստիճան պաշտոնատարների վատահորդության ու համակրանքը և 1627 թվականի ամուսնը արքունի հրովարտակությունը բարձրագույն նոմունի նշանակվում է ս. Էջմիածնի ավերակ տաճարի փակակալ, լուսարարավել:

1627 թվականից մինչև 1632 թվականը Մովսես Սյունեցու կանքն ու գործունեությունը անխօնիորեն կապվում է Մայր Աթոռու վերանորոգության մեծ ձեռնարկի հետ:

Դավիթնեցին պայծառ լավատեսությամբ, սրտառուց հավատով պատմել է Մայր Աթոռու հոգևոր, մշակութային, վանական-շինարարական վերազարդունքը, որին մեծ սիրով և սրտառուց անհամբերությամբ սպասում էին բոլոր հայերը¹⁷:

Երկար տարիների տխուր դեպքերից հետո, գրում է պատմիչը, վերջապես աստվածային մասնավոր հախախնամությամբ, որովհետև «աստվածային կամքը քաղցրացել էր» դեպի ս. Էջմիածնն ու հայ ժողովորդը, և ժամանակի մի խումբ լուսավորիչ, հայունավեր ու ժողովրդասեր վարդապետների ջանքերով սկիզբ է առնում վերազարդունքը: «Ծինարարությունն ու վերանորոգությունն» Մայր Աթոռուն, սկավեցին 1627 թվականին, Վարդապատի պահի երկուշարթի:

Մեծ պատմիչը սրտի մորմորով նախ նըշկարագրում է ահավլորությունն ու մեծությունը «աւերածութեան եկեղեցեաց և հայրենեաց», և շեշտում, որ ընթերցողը լսել է մեծ «նորոգութեան» մասին, «քայց չգիտես թէ ինչպիսին էր ավերածությունը, և դրա համար էլ ստիպված եմ գրել ավերածության մասին, որով և (այս) ցավն ու կվիճը, որ ունեին ամբողջ հայ ժողովորդը և ժամանակի վարդապետները սուրբ Աթոռի մասին... որ կան սրբերի դամբարաններ, և մասավանդ՝ մեծահանդէս սուրբ Աթոռ Էջմիածնը, որ գտնվում է Գրիգոր Լուսավորչի սուրբ Աջք, որով օրհնվում է սուրբ մեռնը և որտեղից զնալով սփռվում է հայ ժողովորդի մեջ ամբողջ աշխարհում՝ որ էլ լինեն. դրա համար ամբողջ հայ ժողովորդը հնազանդվում է Էջմիածնի սուրբ Աթոռին և այնուեղ նստած իր կաթողիկոսին.. որովհետև ամբողջ հայ ժողովորդը Աջք և Էջմիածնին է կապված»¹⁸:

Չահ-Արասի հրամանով 1614 թվականին Մայր տաճարի կառուցից 15 համայնքու քարեր բռնի հանված ու տարված էին Սպահան, այնուեղ նոր մի Էջմիածնի շինելու դիվային հայտակություն:

¹⁷ Առ. Դավիթնեցի, նոյնը, էջ 667:

¹⁸ Առ. Դավիթնեցի, նոյնը, էջ 199:

Տիտր էր շատ էջմիածնի վիճակը: «Աստվածաբնակ սուրբ Աթոռը ամբողջովին պարպած էր ունեցվածքից և կողոպտված՝ զարդերից. գիրք իսկ չկար, որովհետև այնտեղ ժամանացրիլուն չէր լինում. զգեստ ու շորշառ չկար, որովհետև ժամերգություն և պատարագ չէր կատարվում. մինչև իսկ Քրիստոսի հիման տեղը և սուրբ Սեղանը ծածկոց չունեին. չկային կանոնական մեջ... իբրև կարկություն չէր արփում, որովհետև իտեւկ ու բուրփառ չկար... եկեղեցու սպահատակը քարութանդ եղած՝ զեռունեների և սողունների որք էր դարձել «ծոտովք, ծղովք և այլ գուխովք» լցված: Դրսի կողմից կաթողիկեն գլուխը, ամբողջ տանիքը և պատերի երեսները քանդված էին... եկեղեցու շորջը աղբակույտն ու հողը լորժ կանգուն բարձրացել էին և ծածկել հիմքերը...» (Դավիթիցի):

Մովսես Սյունեցին «Նորոգության գործը սկսում է Մայր տաճարի ընդարձակ բակի բարեկարգությամբ: «Ծորչանակի բլրացած հողի և մոխրի կույտերը վերացվեցին». Քասաղ գետի «հորդ և վարպած շորը բերեցին, կապեցին հողի կողմը և շատ մշակների գործի դրեցին, որոնք սկսեցին փորել հողը և տրորել ջրի մեջ. և այսպես անելով, շորն առավ տարպավ հողը... թիզ օրեր հետո բոլոր կողմերից հողը շոտով վերացավ, ամբողջ տեղը բացվեց, գետինը հարթվեց և մնացած բարերը շարվեցին կառուցի պատերին»:

Այս բարեկարգման աշխատանքից հետո շինարար Տաթևացին վաճիքի շորքը «լայն ու ընդարձակ պարհապ» քաշել տվեց, «Երամեջ կառուցելով ութ բորգեր: Եվ ապա պարպացի ներս՝ արևմտան կողմում շինեցին դարպաներ և խցեր «ի բնակութիւն միաբանից» և տներ՝ «հնորերի կարիքների համար». և ապա հարպացին կողմում սեղանատուն, փոռ, տնտեսատուն, շտեմարան: Առանձին խնամքով և հիմնովին վերանորդվում են Մայր տաճարի տանիքն ու կաթողիկեն, որով տաճարը ստանում է իր նախկին վեհաշոր տեսքը:

Այնուհետև, նյութական շինարարությունից հետո, մեծ վերանորոգիչ հայրապետը մտածում է մայրավանքի հոգևոր, բարոյական և մտավոր կյանքի շինության մասին: Շատ ճիշտ և գեղեցիկ արտահայտությամբ է խոսում Դավիթիցին Մայր Աթոռում խախտված եկեղեցական կարգ ու կանոնի վերահաստատման մասին. «Օրեցօր նորոգվում, հաստատվում էր սուրբ Աթոռը, քրիստոնեական հավատի ամբողջ կանոնը»: Տաթևացին վանըը «պայծառացոյց միաբանը և վարդապետը, յարմար և հաստատուց

ժամակարգութեամբ, փարթամացոյց եկեղեցին անօթովք»¹⁹:

Լուսամիտ հայրապետը դպրոցներ բացեց, և Աջմիածինը նորից դարձավ «քացեալ աղբիւն գիտութեանն Աստուծոյ», որին դիմում էին աշակերտական մեծ խմբեր «ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհի, յորդեալը և դրեալը, քանզի յԱյրարատեան գաւառին բղխեցին հայոց շնորհը պատուիրանաց Աստուծոյ»²⁰:

Տաթևացին «Հովհաննավանքի մեծափառ սուրբ ուստատելիում դպրատուն հաստատեց», որ հավաքեց ուսումնատենչ հայ երիխաներին՝ հայ եկեղեցու ապագա սպասավորության կանչվածներին և «բոլորի ծախսերն ու կարիքները ինքն էր հոգում, իսկ երիխաները խելամտորեն և անխափան եկեղեցական ուսում էին ստանում և Աստվածաշնչին ու հմաստափրական գրքերին ծանոթանում»:

Լավ կազմակերպված ուսումնա-դաստիարակչական գործը, հայոց հայրապետի անմիջական հովանավորության և ղեկավարության ներքո տվեց իր բարի արդյունքները: Երեկով անկազմակերպ ուսանողները դարձան եկեղեցու, Մայր Աթոռի, հայ մշակույթի արժանավոր սպասավորներն ու ժառանգորդները:

«Հոգեսեր եկեղեցականությունը աստ ու անդ վանքերու մեջ առանձնացված, կախին եկեղեցական բարեկարգության աշխատի, ժողովրդի բարոյականը բարձրացնել, ուսում տարածել, դպրոցներ բանալ»²¹:

Հայ եկեղեցու «Նորոգության», հոգևորականության դերի և առաքելության բարձրացման ու մեր ժողովրդի հոգևոր, մտավոր մուսավորության ի հապատ տարված մեծ գործի արդյունավորությունը, այն հավատն ու վրատահությունը ներշնչեցին ամբողջ հայ ժողովրդի, որ հանձին Մովսես Եռամեծ Տաթևացի վարդապետի հայ ժողովուրդը ունի իր ամենանիշտված և զոհաբերվող լուսավորիչներից մեկին: Ամեն կողմից դիմում էին ըրան, որ «Մովսես վարդապետն, սուրբ հայրն մեր, լիցի կաթողիկոս»: Բովանդակ հայ ժողովուրդը, երևելի ազգայիններ և հոգեվորականներ գորավոր աղաշանքներով՝ դիմում էին նրան, ու նախորդ կաթողիկոսների անկարգություններից ձանձրացած և Մովսեսի բարեկարգություններից միխթարված, և սիրով ու հոժարությամբ, կաթոգին սրբով ցանկանում էին, որ նա լինի կաթո-

¹⁹ Առ. Դավիթիցի, նոյնը, Էջ 312:

²⁰ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, Էջ 107:

²¹ Օրմանյան, նոյնը, Էջ 2342:

դիկոս, «վասն հաստատոթեան հասասոյ և կարգի եկեղեցեաց» (Դավթիթեցի):

Պաշտոնը, արոռոք չէ, որ փառավորում է մարդուն, այլ մարդը՝ իր գործունեությամբ փառավորում է իր Սթոռք: Այդպէս էլ եղավ նաև պարագան Մովսես Տաթևացու: Նա բան անգամներ հրաժարվեց այդ բարձր և պատասխանատու, ծանր պարտականությունից, «իրեն անարժան գտնելով առաքելական աստիճանին»,—գրում է Դավթիթելական աստիճանին:

«Դավթիթելական աստիճանին»,—գրում է Դավթիթելական աստիճանին:

Բայց եկավ մի պահ, երբ չկարողացավ մերժել կոչման և ծառայության բարձրագույն Չայճը և ստիպված եղավ «պայծառ ու պանծածայի ժառանգորդը բարձրագան Աթոռոին և Եշմիածնի»:

Մովսես Սյունեցին 1629 թվի հունվարի 13-ին բարձրացավ Լուսավորչի Աթոռու: Նրա կարճանու հայրապետության տարիներին (1629—1632) «սփուեցան համբաւ պատութեան և նորոգութեան սրբոյ Աթոռոյն լընդինուոր աշխարհ յազգ հայոց» և երեկովան հուսահատ և անտերունչ հայ սրտերը լցվեցին «անպատում ուրախութեամբ»:

Մովսես Գ Տաթևացու վերանորոգչական լուսավորչական սրտառուց գործունեությունը ժողովորի մեջ վերահաստատեց հույսն ու վատահությունը դեպի Մայր Աթոռի դերն ու առաքելությունը, դեպի հայ հոգևորականության ծառայության և կոչման ասպարեզը: Տաթևացին հայրապետական նվիրակների հշանակումով ողջ հայության սիրու կապեց իր Աթոռոին: Պետական ֆերմանելով հաստատեց և ապահովեց վանքապատկան այգիներն ու կաղվածները:

Մովսես Գ Տաթևացու աշակերտներն ու գործակիցները՝ հայոց ողջ աշխարհով մեկ և ժամանակի հայ գաղթօչախներում մատցրին կենդանության շունչ, ծավալեցին եկեղեցաշեն և ժողովրդանվեր մեծ գործունեություն, և «հոգեբուխ բարոգությամբ և բարեկրոն վարքով հաստատում էին Քրիստոսի հավատի և եկեղեցական ավանդության կարգ ու կանոնը, ...եկեղեցներ էին կառուցում, բահանաներ էին կարգում, կործանում էին ճշմարտության հակառակորդներին, ահա թե ինչո՞ւ ճշմարտությունը գորանալով առաջ էր գնում»: (Դավթիթեցի):

Մեծ վերանորոգիչ վարդապետը շատ կարծ ժամանակով միայն կարողացավ մնալ կաթողիկոսական գանի վրա, բայց այն ճաճկեց նոր փարորի և անմոռաց եկեղեցանվեր, սրտառուց մեծագործություններուի:

Երբ Մովսես Գ Տաթևացին իր աշքերը փակեց 55 տարեկան հասակում, երեք ու կես տարիա գանձակալությունից հետո (1629 հունվար 13—1632 մայիս 14), Մայր Աթոռի «նորոգության» և «ազատության» աշխատանքը դրված էր ամոր և մնալուն նիմիթե-

րի վրա, և ամենքը լցվել էին «անպատում ուրախութեամբ և ի ձայն ցնծութեան գոհանային զԱստուծոյ»:

Սիմեոն մեծագործ Երևանցի կաթողիկոսն իր «Զամբո» գրքում Մովսես Գ Տաթևացու մասին գրում է:

«Աստուծոյ նախասահմանութեամբն և Հոգուն սրբոյ սուշութեամբն առնու զլսարարութիմ սրբոյ Աթոռոյ»:

«Սա էր այր հոգեբնելիալ, առաքելազարդ և բնակարան շնորհաց Հոգուն սրբոյ»:

«Սա որպէս թէ ի նորոյ ի հիմանէ նորոգեաց գուրքը Աթոռու, պայծառացոյց հոգետրական կարգօր և մարմնական պիտոյիթը»: Սիմեոն Երևանցին շատ բարձր է գնահատում Տաթևացու շինարարությունն ու վերանորոգությունը: «Ալլոց հայրապետացն ո՛չ որևէ եղև երահատար և բարերար սրբոյ Աթոռոյն և Ազգին մերոյ նման սորին»²²:

Մովսես Գ Տաթևացու աշակերտներից մեկն պատես է նկարագրում իր ուսուցիչ մեծ հայրապետին:

«Բարքով՝ պարզ, մորով՝ ազատական, գեղեցկագիր, և փառապանծ դեմքով, վայելու, միջին հասակով, ներքին և արտաքին մարդը նրա մեջ պայծառ, կարծես և. Սահակ Պարթևն էր, բայ ամենայնի կրոնական շրջորիներու և փիլիսոփայական գիտությամբ պայծառ»:

Տաթևացին մահացավ 1632 թվականին մայիսի 14-ին, Երևանում, իր սիրած և. Անանիա անապատում և թաղվեց հասարակաց գերեզմանատանը՝ Երևանում, Կողեն բլի վրա, որ գտնվում էր նաև Հովի. Կողենն վարդապետի գերեզմանը, և որ թաղված էր նաև նրա մեծ ժամանակակիցը՝ Մելքոնեթեկ վրդ. Վժանեցին 1631 թվականին:

Մովսես Գ Տաթևացին, «մեծահատա, սրբանուն, մաքրակենցաղ, երկայնամիտ և ողորմած» հոգևորական էր, աղոյեցիկ՝ «աստուծաշնորհ վարդապետութեամբ» և իր «քաղցր բարոգութեամբ» իրեն էր գրավում հոգիները, «ողոյելով ի ճանապարհ արդարութեան»²³: (Եշ 239):

«Իր կաթողիկոսությամբ հայ եկեղեցին համար դարագուիս մը կկազմէ»,—եզրակացնում է Օրմանյանը, որովհետո «իհոր ալ իրմով կիխակի այն աղեստայի և եղկելի շրջանը», որն սկսվեց Հայութապետական Աթոռուի Եշմիածնի փոխադրվելուց հետո: Օրմանյանը հշում է, որ հայ եկեղեցին «մեծազոյն և բացառիկ պատիվը տվալ Մովսես Գ Տաթևացին, անոր անունը հիշելով հանա-

²² Սիմեոն Երևանցի, «Զամբո», Վաղարշապատ, 1874, էշ 21:

²³ Առ. Դավթիթեցի, Յոյնը, էշ 312:



Հոգեմանգիստ Սռաբել վրդ. Դավթիմեցու գերեզմանի վրա

պազր պատարագի մեջ, եռամեծ հովվաց և հովվապետաց կարգին, և կցելով զայն որիշ լուսավոր անոնին մը հետ, և զոյզ հիշատակելով Գրիգորի և Մովսիսի Տաթևացեաց անոնները»²⁴:

ՓԻԼԻՊՈՍ Ա. ԱՂԲԱԿԵՑԻ (1633—1655)

Մովսէս Գ Տաթևացուն հաջորդում է նրա աշակերտ և գործակից Փիլիպոս Ա. Աղբակեցին:

Դավթիմեցին իր պատմության ինե գլուխ նվիրել է Փիլիպոս Ա. Աղբակեցու կյանքին և գործունեությանը, «վասն վարդապետութեան և կարտողիկոսութեան տեան Փիլիպոսի, յորում և վասն նորդութեան եկեղեցեաց սրբուինի կուսանացն Գայիանեայ և Հոփիսիմեալ»²⁵:

Փիլիպոս Աղբակեցին ըստ ամենայնի շարտնակեց իր մեծ ուսուցչի և նախորդի

«նորոգութեան» գործը և այն արդյունավորեց ավելի մեծ իրագործումներով:

Դավթիմեցին նշում է, որ Փիլիպոս Աղբակեցու չանքերով «քարձրագաճ Աթոռն Սուրբ Էջմիածին սովու առաւել հաստատեցաւ և փարթամացաւ եկեղեցական անօրով, ոսկով և արծաթով և մեծագին զգեստոր, պատուական գրենօր, վարդապետականօր բազմօր, սոյնպէս և մարմնաւոր և սպասիւր»²⁶:

Փիլիպոս Աղբակեցին ծնվել է 1593 թվականին Վասպորականի Աղբակ գավառի Էրնեկան գյուղում: Փոքր հասակից մեծ սեր է ունեցել դեպի վանական կյանքը և 14 տարեկան հասակում դիմել է մեծ Անապատ՝ սովորելու: Սակայն Սարգիս Պարոնտեր եպիսկոպոսը նրան չի ընդունում, «վասն տղայական հասակին և անմօրութ գորյն»: Ուստիմնատենչ պատանին, սակայն, չի հուսահատվում և մեծ Անապատի մերձակայքում ուժ ամփաներ «ի մէջ մայրեացն» անցկացնում է իր օրերը, հոգում վաս սեր և երազ՝ ընդունվելու Հարաց մեծ վանքը:

Մեծ Անապատի վանահայր և առաջնորդ Սարգիս Պարոնտեր եպիսկոպոսը, ապա

²⁴ Ժամագիրը, Երևանիմ, 1956, էջ 619, նաև Օրմանական, նոյնը, էջ 2421:

²⁵ Առ. Դավթիմեցի, նոյնը, էջ 314—345:

²⁶ Նոյնը, էջ 342:

խղճանարթելով, 1609 թվականին ընդունում է Փիլիպոսին, որպես «առ ոտու աշակերտ», նրա դաստիարակության գործը հնաձնում է Մովսես Սյունեցուն:

Փիլիպոսն այնունետև իր կանքը ու գործունեությունն ընդմիշտ կապում է Մովսես Սյունեցուն հետ:

Փիլիպոսը երբ ավարտում է վաճական ուսման իր ընթացքը «ճգնալական վարուց և գործոց ստարժենութեան, լրմտերցուն և յուտուն աստուածային գրոց» և հասնում «ի տես երիտասարդութեան», կուսակրոն քանան է ձեռնադրվում Մովսես Սյունեցուն: Ապա կատարելագործվելով և խորանալով աստվածաբանական, եկեղեցագիտական և մեկնողական գիտելիքների մեջ, վարդապետական իշխանություն է ստանում նույնական Մովսես Սյունեցուն:

1630 թվականին Մովսես Սյունեցին, արդեն որպես կաթողիկոս, Փիլիպոսին եպիսկոպոս է ձեռնադրում:

Փիլիպոս Աղրակեցին Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովում կաթողիկոս է ընտրվում և 1633 թվականի հունվարի 13-ին օծվում և հաջորդում իր մեծ ուսուցչին:

«Փիլիպոսը Մովսեսին հաջորդելով նոր քան մը ընելու չձեռնարկեց, այլ յամենայնի և ըստ ամենայնի շանաց լրացնել Մովսիսի սկսած՝ բայց արագահաս մահուամբը լրացնել չկրցած ձեռնարկները»²⁷:

Փիլիպոս Աղրակեցին գահակալեց 22 տարի, 1633—1655 թվականներին և Մայր Աթոռում և հայ եկեղեցու պատմության մեջ թողեց հիշատակության արժանի հոգևոր, կրթական, վաճական, վերանորոգչական աշխատանքներ:

«Էր լոյժ տօնասէր, պայծառացնող տօնից, զարդարող եկեղեցեաց» (Դավիթեցի): Կաթողիկոսը անձամբ սիրում էր վաճական կանքը ու ապրում ճգնավորական խատակեցությամբ:

Աղրակեցու առաջին գործն է լինում շարունակել և ամբողջացնել Տաթևացու շինարարական աշխատանքները և վերանորոգումներ կատարել: Հատկապես նա Մայր Աթոռում նախկինում եղած և իր ժամանակի թուրք-պարսկական պատերազմների ընթացքում ավերված ու քանդված փայտաշեն շենքերը փոխարինում է քարաշեն կառուցներով:

«Արդ ի լԱթոռոջս որքան փայտեայ շինարածք գոյին՝ յառաջմանէ աւերեցեալք էին, զամենեւեան շինեաց սա և վերստին նորուեաց», —գրում է Սիմեոն Երևանցին²⁸:

²⁷ Օրմանյան, նոյնը, էջ 2424:

²⁸ Զամրո, էջ 22:

Այնունետև նորոգում է Մայր տաճարի տաճիքը, ամբողջ Մայր տաճարը, ամառան կոչված բարաշեն սեղանատունը, վաճական խուցերը, «քարի, աղիսով և գեղեցիկ յօրինուածովք», նաև երկու ձիթահանք և կատարում այլ շինարարություններ²⁹:

Աղրակեցին հիմնական վերանորոգություններ է կատարում մանավանդ և Հոփիսիմեի և ս. Գայանեի տաճարներում:

Հայ ճարտարապետության չքնաղ գոհարը՝ և. Հոփիսիմե տաճարը, լրջորեն վնասված էր և կարիք ուներ արմատական նորոգության: Բայց, գրում է Դավիթիծեցին, և. Գայանե տաճարը ևս քանդված էր. «ասաւել աւերեալ» էր: Աղրակեցին հիմնական նորոգություններ կատարեց երկու տաճարների վրա և «մեծափառ կարօտի, շանի և քազում գանձ ծախսելով նորոգեաց գեղեցկաշեն ի հիմանց մինչև ցգագարն գմբեթին»³⁰:

Երկու վանքերում էլ գոյություն ունենալու դաշտել էր միաբանություն, եկեղեցական պաշտամունք: Աղրակեցին տաճարները «նոր ի հիմանց շինեց» և հաստատեց միաբանություն³¹:

Աղրակեցու վաճական-նորոգչական աշխատանքները կատարվում են 1652—1653 թվականներին: Նույն տարիներին Աղրակեցին նորոգում է նաև Երևանի և Անանիա վանքը՝ իր հարակից շենքերով՝ փայտա շինավածքները փոխարինելով քարաշեն կառուցներով:

Աղրակեցին հասուկ ուշադրություն է դարձնում նաև վաճառապատկան այգիներին ու Վաղարշապատի բոլոր արտերը և նաև Արարատան դաշտը ողոգելու հարցի վրա. Արագածից բխող ու Ծիրակի դաշտը հոսող հորդանաս աղբյուրի ընթացքը շրջել է տալիս դեպի Քասաղ գետ և սպահովում ջրի մեծ քանակ, ողոգման կարիքների համար:

Աղրակեցին ողոգման նպատակներով ավելացնել է տալիս նաև Հրազդան գետի ջրի քանակը, խորացնել տալով Սևանա լճից սկիզբ առնող ակունքը, «մեծա աշխատութեամբ և դրամածախսութեամբ» (Զամրո, էջ 23):

Աղրակեցու գործունեության անմոռաց հիշատակներից մեկը Սպահան գերի տարված և. Գրիգոր Լուսավորչի Սահի պատմական վերադարձն էր Մայր Աթոռ:

1614 թվականին Ծահ-Աքասը գերի էր տարել Աջը, Էջմիածնի տաճարի 15 նշանավոր քարերի հետ: Աջը գերության մեջ մնաց մինչև 1638 թվականը:

«Մայր Աթոռը,—գրում է Օրմանյանը, —չէր

²⁹ Նոյնը, էջ 22:

³⁰ Ա. Դավիթեցի, նոյնը, էջ 326:

³¹ Զամրո, էջ 22:

կարող գրելիք մնալ իր գլխավոր զարդն ու նվիրական սրբություն եղող Լուսավորչի Սջեն, որ աղբյուրն էր օրինավորաց և կինը բայրապետական իշխանության»³²:

Ս. Լուսավորչի Աջը Ծահ-Արքափ հրամանով պահ էր դրված Սպահանում՝ խոչա Սաֆարի տաճը: Սղբակեցին գնաց Սպահան և Նոր Զուղա և բազում դժվարություններով և իր հայրապետական ազդու միշամտություններով, նաև «առատաձեռն նվերներով» պետական մարդկանց սիրութ շահեց, բագավորական հրամանով կարողացավ ազատել Աջը, այցելեց հայրենացորդ իր գաղթական հոգևոր զավակներին, միփթարեց, սփոփեց:

Մեծ համեմետով 1638 թվականի սեպտեմբերին, 26-ամյա գերեվարությունից հետո, ս. Լուսավորչի Աջը վերադարձավ Մայր Աթոռ, ի մեծ ուրախություն հայ ժողովոդի. «Եղի անպատճ ուրախութին ամենայն Հայոց», —գրում է Դավիթիներին, և կատարվում է համաժողովրդական տռն և ցնծություն:

Աչի հետ Մայր Աթոռ են վերադարձվում նաև 1614 թվականին Էջմիածնի Մայր տաճարից տարված 15 քարերը³³:

Ս. Գրիգոր Լուսավորչի Աչի վերադարձ Մայր Աթոռ, մեծացնում է վատահությունն ու խորացնում հրագանքը դեպի Փիլիպառու կաթողիկոսի անձն ու գործունեությունը, և բոլոր սրտերը կապվում են սիրով ու պատամունքով դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածնը:

Սղբակեցին գրավում է նաև կրթական գործով: Մովսես Տաթևացու օրով Հովհաննավանքում բացված դպրատունը նա նաւատակահարմար է գտնում տեղափոխել Էջմիածն՝ իր անմիշական հսկողության և դեկավարության ներք առնելու համար:

Սղբակեցու օրով Էջմիածնի դպրանոցը ապրում է իր փայլուն շրջաններից մեկը: Նա կազմում է կայուն ուսումնական ծրագիր ու պյան, հրավիրում է նշանավոր ու գիտական հայ վարդապետներին որպես ուսուցիչ. Էջմիածնի դպրոցի տեսուչ է նշանակում ժամանակի նշանավոր գիտական Միմեռն Զուղայիցի վրդ.-ին, Մելքիսեդեկ Վժաննեցու տաղանդավոր աշակերտին: Սղբակեցու քրիստոնեական և կրթական լայնամտնության պայծառ վկայությունն այն փաստն է, որ նա Էջմիածնի դպրանոցի համար հրավիրում է նաև կաթողիկ Բ. Պողոս Բիրումալլուն՝ դրմինիկան կրտսավորին, որպես «ուսուցիչ օտար լեզվաց և իմաստափառական գիտությանց»³⁴, թեև Բիրումալլին չարդարացրեն լուսամիտ և ազատամիտ հայոց հայրապետի

կրթական հույսերը: Բիրումալլին Էջմիածնի դպրենավանքում ավելի շատ գրավվում էր կրթության պրոպագանդայով, քան աշակերտության գիտելիքներով շամբելով. «Հայոց ծիսական և վարդապետական գիրքերը ուսումնասիրելով անոնց մեջեն իր մորին հարմար վկայություններ կիավաքեր, որպեսզի հայոց եկեղեցին բաղկեդոնական և հովվմադավան ցուցեն»³⁵:

Սղբակեցին Մայր Աթոռից դորս գրավվում է նաև արևմտահայության, Կ. Պորփ և լեհահայերի ազգային-եկեղեցական գործերով, ինչպես նաև Մայր Աթոռի և Սսի կաթողիկոսության հարաբերությունների հարցում:

Այս նապատակով նա 1651 թվականին այցելության է մեկնում Երուսաղեմ, Կ. Պոլիս, տեղապահ նշանակելով Հակոբ Զուղայիցի եպիսկոպոսին:

Սղբակեցին ամեն տեղ, որպես ընդհանրական հայրապետ և ս. Էջմիածնի մեծ վերանորոգիչ, արժանանում է բացառիկ հարգանքի և սրտագին ընդունելության:

Հայոց հայրապետը երբ համեմում է Կարին, օսմանյան իշխանությունների ոչ միայն հոգում են հայոց հայրապետի և նրա շքախմբի անդամների ուղղության ճանապահածությունը, այլև կաթողիկոսի կյանքի սպահովության համար՝ բարձրաստիճան մի պաշտոնյա «քագաւորական ծառայ ի դրանէ թագաւորին» նշանակում են որպես պահապան, որը երկու տարի ուղեկցում է հայոց հայրապետին, որպեսզի ամեն տեղ նրան ընծալվի պատշաճ հրագանք ու խնամք:

Արևմտյան Հայաստան կատարած իր ուղևորության ժամանակ Սղբակեցին նախ ուխտի է գնում Երուսաղեմ՝ Ս. Հակոբյան վանքը, մեծ խմբով «վարդապետօք, եպիսկոպոսօք, քահանայիր և սպասատօք»:

Այս ուղևորության ժամանակ, որպես քարտուղար, Սղբակեցուն է ընկերանում նաև Առաքել վրդ. Դավիթինեցին:

Սղբակեցին չորս ամիս մնաց Երուսաղեմում, վայելեց Աստվածատուր պատրիարքի և միարանության սերն ու Երուսաղեմի քուր եկեղեցիների հոգերով պետերի հրագանքը: Ենքն Էլ հիշատակներ թողեց Ս. Հակոբյան վանքում, այն Ս. Հակոբյանց Մայր տաճարի հատակին սալարկը «գեղեցիկ յօրինուածքով և նկարակերս յարմարութեամբ, երանգ երանգ վիմօք»³⁶:

1651 թվականի մայիսին Սղբակեցին Երուսաղեմում գումարում է մի ժողով՝ եկեղեցական մի շարք ցավոտ խնդիրների շուրջը

³² Օրմանյան, նոյնը, էջ 2434:

³³ Զամրո, էջ 22:

³⁴ Օրմանյան, նոյնը, էջ 2438:

³⁵ Օրմանյան, նոյնը, էջ 2438:

³⁶ Առ. Դավիթինեցի, նոյնը, էջ 331:

մտածելու և համաձայնության գալու: Ժողովին մասնակցում են Սով. Տերը և Սեբաստիան Աստվածացի կարողիկուրը, Երուսաղեմի Աստվածառուր Տարոնացի պատրիարքը, ուր եպիսկոպոսներ, 18 վարդապետներ, 35 արքաներ, 60 քահաններ և քազում այլ իշխաններ՝ շուրջ 1000 հոգի:

Ժողովում սահմանվում են 13 կանոններ, որոնցով երկու Աթոռների միջև սեր և միաբանություն հաստատելուց հետո, վերջնականորեն սահմանագծով են Մայր Աթոռի ընդհանրական Հայրապետության և Սով. Տեղական, մասնավոր կաթողիկոսության վարչական իրավասության սահմանները Արևմբրդյան Հայաստանում և Թուրքիայում, մեր եկեղեցական կանոնների լույս ներքը:

Երուսաղեմի ժողովում սահմանված սերն ու միաբանությունը դառնում են կանոն Մայր Աթոռի և մեր Եփիրապետական մյուս Աթոռների հետագա հարաբերությունների համար, թեև մերթ ընդ մերթ Սով. Կաթողիկոսները հետագայում էլ փորձում են ոտնձգործուներ անել այս կանոնի դեմ:

Փիլիպոս Աղքակեցին Երուսաղեմից անցնում է Կ. Պոլիս: Պատրիարքարանը ընկել էր ծանր պարտքերի ներքը: Պառակտվել էր նաև ժողովուրդը: Աղքակեցին իր քարձը հեղինակությամբ կարողանում է մեղմել կրքերը, հանգանակությամբ վճարել պարտքերը, քարոզում բոլորին սեր և համերաշխություն և ամրապնդում հայ եկեղեցու միասնությունն ու միությունը Մայր Աթոռի շուրջ և 1653 թվականի ամռանը վերաբանում Մայր Աթոռ:

Աղքակեցին Էջմիածին էր վերադառնում յավատես, նաև Մայր Աթոռի հետագա շինարարությունների համար նյութական մեծ միջոցների բարիքներով:

1654 թվականին, երբ արդեն ավարտվել էին ս. Հոփիսիմե և ս. Գայանե տաճարների վերանորոգչական աշխատանքները, Աղքակեցին ձեռնամում է լինում իր վաղուց փափայած գործին հայ ճարտարապետության շրան գարդ Մայր Տաճարի մեծ զանգակատան շինությանը, իշխանական նիմիտությամբ կ. պոլսեղի Անտոն Շեյեպի:

1654 թվականին, բուն Բարեկենդանի օրը, Աղքակեցին խանդակառ մթնոլորտում նատարտում է զանգակատան հիմնարկերը՝ հակառակ Երևանի Մահմադ Ղուլի խանի արգելին:

Շինարարությունը շարունակվում էր նաև 1655 թվականին. «Բարձրագույն շենքն, մինչև կայեթան ներքին կամարը» (Դավիթին): Աղքակեցին անհամբեր սպասում էր զանգակատան շինության ավարտին: Բայց մեծ հարապետին վիճակված չէր տեսնել «օսումանալի արուեստի», լոբնազան նկարակեր-

տութեամբ քանդակեալ ի վեմ» իր վերջին մեծագործության ավարտը:

Աղքակեցին 1655 թվականի մեծ պարքին, Դատավորաց կիրակիին, 63 տարեկան հասակում վախճանվում է և թաղվում ս. Հոփիսիմե տաճարում, աջակողմյան դասի մեջ:

Դավիթին իր պատմության մեջ, ամփոփելով Փիլիպպոս Աղքակեցու արդյունալի կյանքի և բեղմանվոր գործունեության նկարագիրը, եղակացնում է: Աղքակեցին «էր այ կարի խորհրդական, հանճարեղ, աշխարհաշէն և արդինարար», թե՛ վարդապետության և թե՛ իր կաթողիկոսության տարիներին անդադար և անհափան մեծ գործեր կատարեց, մանավանդ «քարձբագան և Էջմիածին Աթոռի» համար, հոգևոր, բարոյական տեսակետներից, որովհետև նա «ի գիր աստուածային սրամիտ էր և նրաբնին, ի խատու և ի քարոզ համեղաբան»: Նա մեծ գործ կատարեց նաև Հայոց աշխարհի համար. «Բազմազան կերպի հոգևոր և մարմնադր արդեամբ օգտակար լինելու աշխարհին, զի իբրև զբերդ ամուր էր նա», հայոց ազգի համար, «ընդդեմ մահմեդականաց, որք ոչ կարէին ի հարստահարել և ի զգուել զիայս», վասնզի հայ ժողովրդի և եկեղեցու թշնամիները, որոնք «նման էին հզոր լեռների, բոլորն էլ խորտակվեցին և մեշտեղից վերացան, լինեն դրանք եկեղեցական թե աշխարհիկ, օտարներ թե այլազգի փառակոր իշխանները»³⁷:

«Փիլիպպոսի գործունեությունը տարածվեցավ ամեն հյուղերու վրա: Մայր Աթոռին ներքին կարգերը, վանական կանոնները, եկեղեցական ծեսերը, բարոյական կենցաղը, իրմով ստացան իրենց հիմնական վերանորգումը: Երուսաղեմի Աթոռին պայծառությունը, Կիլիկիի խնդիրին լուծումը, Կ. Պոլս շփոթությանց հանդարտությունը, Լեհակայոց կնճինին վերցվիլը, իր վարչական արդյունքներն եղան: Մայր Աթոռին, մերձակոր վկայություններուն, բազմաթիվ վանքերուն, և վիճակային եկեղեցիներուն շինությունները իրմով քաշալերվեցան և լրացան»³⁸:

«Մեծ եղավ նաև իր համբավն ու ազենցությունը, և եղած էր արգոյադր և մեծաշուր առաջի ամենայն ազանց, Հայոց, Հոռոմոց, Վրաց, Օսմանցոց, Պարսից և մեծամեծ իշխանաց, նաև թագավորաց իսկ: Մեծ քարոզիչ եղավ, և բոլոր կյանքին մեջ անխափան վարդեց իր վարդապետական կոչումները...»³⁹:

³⁷ Ա. Դավիթին, Յովնը, էջ 342:

³⁸ Օրմանյան, Յովնը, էջ 2486:

³⁹ Օրմանյան, Յովնը, էջ 2486:

Դավրիմեցին իր պատմության մեջ, «Վասն նորոգութեան անուանի վանօրէից և շինութեան բազմածախ և մեծավայելու եկեղեցեաց» գլխում⁴⁰ խոսում է նաև Մովսես Գ Տաթևացու և Փիլիպպոս Աղքակեցու օրով բազում այլ անվանի վաճքերի նորոգության և փառակոր եկեղեցիների շինության մասին, որոնք նոյնական հանդիսացան ամոր կովան ժէ դարի մեր հոգևոր, մշակութային վերազարդումիք:

Սույն հոդվածը չծանրաբենելու համար չենք խոսում այդ վաճքերը և եկեղեցիները վերանորոգելու աշխատանքների մասին: Հետաքրքրվողները կարող են կարդալ Դավրիմեցու պատմության 346—353 էջերը:

ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1655—1680)

Դավրիմեցին իր պատմության մեջ առանձին գլուխ չի հատկացրել Փիլիպպոս Աղքակեցու հաջորդ Հակոբ Դ Ջուղայեցու կյանքին ու գործունեությանը, ինչպես այդ արել է Մովսես Գ Տաթևացու և Փիլիպպոս Աղքակեցու համար, թեև իր պատմությունը բաւցը է մինչև 1662 թվականը, եթե արդեն շուրջ լոյտ տարի գահակալել էր Ջուղայեցին:

Այնուամենանիվ, Դավրիմեցին երեք պարգամերում հիշատակում է իր պատմության մեջ Հակոբ Ջուղայեցու գահակալության առաջին շրջանի դեպքերից հետևյալները. Դարաշամբի և Ստեփանոս Նախակրկայի վաճքի «խաչանման» եկեղեցու շինությունը «սրբատաշ վիմօր, վերամբարձ կաթողիկէի, գեղեցկաշեն և զանազան արուեստակեալ նկարակերտութեամբ զարդարեալ»⁴¹: Ասպա Աղքակեցու սկսած Մարտաճարի հոյակերտ մեծ զանգակատան շինության ավարտը: Ջուղայեցին փիլիպպոսաշեն զանգակատան մեջ կառուցում է նաև ս. Հրեշտակապետաց անունով մի սեղան: 1658 թվականի սեպտեմբերի 12-ին, Խաչվերացի տոնին, գրում է Դավրիմեցին, մեծ հանդիսավոր «օրինեցին» զանգակատան գագաթի խաչը, «քակեցին զիսկալէն», այսինքն՝ շինության ծառայող լաւատակառուց կազմածը⁴²:

Այնուհետև, Դավրիմեցին հիշում է, որ ինը Փիլիպպոս կաթողիկոսի մահից հետո իր պատմությունը գրել և ավարտել է 1662 թվականին Հակոբ Ջուղայեցու հրամանով (Դավրիմեցի, էջ 617):

Վերոհիշյալ գործերից բացի, Հակոբ Դ Ջուղայեցու անունը սերտորեն կապված է, տարբեր մակարդակի վրա, Մայր Աթոռի

պայծառության ա'լլ աշխատանքների հետ, ինչպիսիք են նայ տպագրության արվեստի զարգացման ի նախատ Ջուղայեցու թափած շանքերը, նրա անմիջական հսկողության և թեղադրության ներքո հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունն Ամստերդամում, 1666 թվականին, Մայր Աթոռի միաբան Ռուկան Վարդապետ Երևանցու շանքերով, նրա գործունեությունը՝ Կ. Պոլսում, Երևանադրությունում ամրապնդելու համար մեր եկեղեցու ներքին խաղաղությունն ու միասնությունը, պայքարը՝ կաթոլիկ ոտնձգությունների դեմ և ապա նայ ազատագրական շարժման սկզբանավորությունն ու հովանավորությունը, նրա օրով:

Հակոբ Ջուղայեցու գործունեությունը ավելի լայն նորիգուններ էր ընդգրկում և հետապնդում էր նովերան կարևոր ազգաշեն և եկեղեցանիւր հեռանկարներ:

Հակոբ Դ Ջուղայեցին, ըստ ամենայնի, ո՞չ միայն շարունակեց Մովսես Գ Տաթևացու և Փիլիպպոս Աղքակեցու՝ իր մեծ նախորդների վերանորոգչական, հոգևոր, կրթական, շինարար աշխատանքները, այլ նաև ավելի բարձր մակարդակի վրա նաև ծավալեց տարբեր բնույթի եկեղեցաշեն և հայրենանվեր գործունեություն:

Հակոբ Դ Ջուղայեցու անունը սերտորեն կապված է Մայր Աթոռի երկու մեծ վերանորոգիչների՝ Մովսես Գ Տաթևացու և Փիլիպպոս Աղքակեցու գործունեության հետ: Անա թե ինչու, քանելով Դավրիմեցու, Սիմեոն Երեկանցու, Զաքարիա Սարկավագի և Օրմանյանի աղբյուրներից, անհրաժեշտ ենք համարում խոսել համառուակի նաև Հակոբ Դ Ջուղայեցու մասին, ամբողջացնելու համար ժէ դարի Մայր Աթոռի «Նորոգութեան» նվիրված երեք հայրապետների գործունեության պատկերը, ըստ Դավրիմեցու:

Ջուղայեցին ծնվել է հին Ջուղայում 1598 թվականի մարտին: Շահ-Աքասի բռնագաղթի օրերին եղել է 6—7 տարեկան: Նախնական կրթությունը ստացել է Ամենափրկիշ վահքում և ապա իր ոտումը կատարելագործել Էջմիածնի դպրոցում, մանավանդ Մելքիսեդեկ Վժանեցու և Սիմեոն վարդապետ Ջուղայեցու ձեռքի տակ:

Ջուղայեցին իր վարդապետական և եպիսկոպոսական աստիճանը ստանում է Փիլիպպոս Աղքակեցուց, Էջմիածնում, և դառնում նրա գործակիցն ու աշակիցը:

1655 թվականի ապրիլի 8-ին ս. Էջմիածնում գումարված ժողովը Հակոբ Ջուղայեցուն ընտրում է կաթողիկոս. «Եւ յաջորդեաց զկնի նորա (Փիլիպպոս—Ս. Հ.) Սուրբ Էջ-

⁴⁰ Ա. Դավրիմեցի, նոյնը, էջ 346—353:

⁴¹ Առ. Դավրիմեցի, նոյնը, էջ 347:

⁴² Նոյնը, էջ 342:

միածնի Զուղայեցի Յակովը վարդապետն»⁴³:

Զուղայեցին գահակալում է մինչև 1680 թվականը և Մայր Աթոռը դնում է իր պատմական, հոգևոր, կրթական, հայրենասիրական առաքելության բարձրության վրա:

Զուղայեցու գահակալության առաջին փայլությունը լինում է Մայր տաճարի զանգակատան շինության ավարտումը, հակառակ Երևանի խանի արգելքին և սպառնալիքին: Սակայն, վկայում է Դավիթի ժամանակ, «Աստուած պահեաց զգանգակատունն և զիսանն քակեաց»: Զուղայեցին իր բարձր հեղինակությամբ, այցելություններով, «չխնայեց նաև ոսկին և արծաթը, հաշողեցավ 1657 հունիսին, Փիլիպառոսի մահվենե երկու տարի ետքը, զանգակատունը լրացնելու հրաման ստանալ»⁴⁴:

Այնուհետև Զուղայեցին անձամբ մեկնում է Պարսկաստան, իր կաթողիկոսության արքունի հրովարտակը ստանում և ձեռք է բերում նաև վանքապատկան գուղերի արտոնագրերը. «Հայ զմեր գեղջ վեց դեմք մուլքն վերստիմ սաստիկ հրամանագրովք»⁴⁵:

Մայր Աթոռում ապա նաև ծավալում է շիրաբարական բեղուն գործունեություն: Զրադվում է վանքապատկան հողերի և դաշտերի և առհասարակ Վաղարշապատի ոռոգման հարցերով: Վաղարշապատի և Մայր Աթոռի շրային կարիքների համար կառուցել է տալիս երեք շրամբար-լճակներ, «ծովակն», ստորերկրյա հորերի շրերի օգտագործմամբ և ապա շրաղացներ և «զդինկրս», պահենքն՝ ձավարածեծոց:

Հակոբ Զուղայեցու հիմնական ծրագիրն էր՝ հայ ժողովրդի հոգևոր, մտավոր լուսավորությունն ու քաղաքական ազատությունը:

Այս ուղղությամբ Զուղայեցու երկրորդ կարևոր գործը եղավ «հայկական տպագրության համար ունեցած հոգածությունը»⁴⁶: Զուղայեցին մտածում էր տպարան հիմնել Մայր Աթոռում: Սակայն այդ տարիներին մեր երկրում տիրող դաման պայմաններն արգելք հանդիսացան լուսամիտ կաթողիկոսի ձեռնարկի հաջողությանը:

Հայերեն Սատվածանչի առաջին տպագրության մեջ գործը, արդարորեն կապվում է լուսամիտ Հակոբ Դ Զուղայեցու անվան հետ:

Սուկան վարդապետ Երևանցին 1666 թվականին Ամստերդամում հայերեն Սատվածանչը տպում է «մեծի հրամանի իշխողի և Վեհափառ կաթողիկոսի և պատրիարքի հայ-

կազեանս սեռի... քրիստոնակիմնեցելոյ սրբոյ Էջմիածնի տեան Յակոբու»:

Հակոբ Զուղայեցին, Ուկան վարդապետի միջոցով, գոյիս է բերում Մայր Աթոռում կազմված «մի ամբողջ հրատարակչական ծրագիր» (Առ): Ուկան վարդապետը այդ հրատարակչական ծրագրի համաձայն, Ամստերդամում, և Էջմիածնի անվան տպարանում տպում է 39 անուն գիրը, որի մեջ նաև՝ Սուարել վարդապետ Դավիթիծեցու պատմությունը, 1669 թվականին, 650 էջ⁴⁷:

Հակոբ Զուղայեցու օրով հատկապես մեր ազգային-եկեղեցական կյանքը Սուսմ, Երուսաղեմում, Կ. Պոլսում և Լեհաստանում պառկանութել էր. հանդես էին եկեղեց անշատողական, կենտրոնախուզ ձգտումներ՝ Եղիազար Այնթապցու և Սսի Խաչատոր Գ կաթողիկոսի կողմից. նաև Անրիին անկարգություններ, պայքարներ, որոնք տկարացրել էին մեր եկեղեցին և ազատ ապարեզ բացել՝ կաթողիկական ոտնագությունների և քարոզության համար: Արգելված էր որևէ հոգեվորականի մոտքը Էջմիածնին Կ. Պոլիս: Արևմտյան Հայաստանում և հատկապետ Կ. Պոլսում ազգն ու եկեղեցին տագնապի մեջ էին: Կ. Պոլսի Մարտիրոս Կաֆացի պատրիարքը, «առաջնորդը, իշխանը և ժողովորդ երկրին», Պոլսում ժողով են գումարում և Հակոբ Զուղայեցուն շտապ հրավիրում Կ. Պոլիս՝ կրքերը խաղաղեցնելու, ազգային-եկեղեցական կյանքում կարգ ու կանոն, Անրիին խաղաղություն ու միասնություն վերահսատակելու և «առ ի հոգալ վասն սրբության Էջմիածնի»⁴⁸:

1665 թվականի գարնանը Զուղայեցին ճանապարհվում է Զմյուռնիա, Երուսաղելս և ապա Կ. Պոլիս և, մինչև 1667 թվականը մնալով այստեղ, կարողանում է իր հաշտարար ոգով, բարձր հեղինակությամբ, իմաստությամբ և խոհականությամբ լուծել բոլոր հարցերը, վերահսատակել հայ եկեղեցու ծոցում Անրիին միասնականություննը, սահեծել կաթողիկների ոտնագություններն ու դավադրությունները՝ հայ եկեղեցու և հայ ժողովրդի դեմ, և բոլոր սրբերը համախմբել եկեղեցու շորջ, ազգային գերագույն շահերի բարձր ըմբռնումը:

Զուղայեցին Կ. Պոլսում իր առաքինի վարքով ու կենցաղավարությամբ, իր խոհականությամբ գրավիս է նաև սովորանի համակրանքն ու վաստանությունը և, Կ. Պոլսում վերականգնեցով Մայր Աթոռի հեղինակությունն ու իրավունքները, վերադառնում Մայր Աթոռ:

⁴³ Առ. Դավիթիծեցի, նոյնը, էջ 345:

⁴⁴ Օրմանյան, նոյնը, էջ 2510:

⁴⁵ Զամրո, էջ 24:

⁴⁶ Օրմանյան, նոյնը, էջ 2510;

⁴⁷ «Էջմիածն» ամսագիր, 1966, Նոն ԺՄ—ԺԲ, էջ 157—158:

⁴⁸ Զամրո, էջ 25:

Հակոբ Զուղայեցու օրոք հայ ժողովուրդը և մեր եկեղեցին հեծում էին պարսկական դաման լծի ներքո, իրավագործի, կեղերվածու անարգված:

Զուղայեցին մտածում է այդ ժամը օրերին նաև հայ ժողովորդի ազգային-ազատագրության մասին:

1678 թվականին նա Էջմիածնում հրավիրում է խորհրդակցական բնույթի գաղտնի ժողով՝ այդ հարցով գրադվելու համար:

Ժողովին մասնակցում են վեց բարձրաստիճան հոգևորականներ և վեց իշխաններ կամ մելիքներ:

Ծարժման դեկավարներից մեկն էր նաև ծերունի Պոռչ իշխանը, որը թեև ժողովին ներկա չէր, բայց ուղարկել էր որդում՝ Խորացի Օրուն, որը հետագայում հանդիսացավ հայ ազգային-ազատագրական շարժման մեծ գործիչներից մեկը:

Էջմիածնի ժողովը որոշում է՝ Եվրոպա ուղարկել մասնավոր պատվիրակություն՝ Հակոբ Դ Զուղայեցու՝ հայրենասեր կաթողիկոսի գլխավորությամբ և Խորացի Օրու թերակցությամբ:

1679 թվականի դեկտեմբերին պատգամավորությունը մեկնում է Էջմիածնից Կ. Պոլսի, Թիֆլիսի վրայով. «անշուշտ, վրաց իշխաններուն հետ ալ տեսակցելով»⁴⁹, և խորհրդակցությունն է ունենում Գեղրգի XI թագավորի հետ «ազատագրական ծրագրի ուղղությամբ»: (Հայ ժող. պատմ., Երևան, 1951, էջ 291):

Հակոբ Դ Զուղայեցին տեսակցություններ, խորհրդակցություններ է ունենում Կ. Պոլսում, խորհրդապահարար, կարևոր և հայրենասեր մի շարք եկեղեցական և աշխարհական ազդեցիկ անձնավորությունների հետ, գործնական բայցեր առնելու համար:

Հակոբ Դ Զուղայեցին ոթ ամիս մնում է Կ. Պոլսում և որոշում է անցնել Եվրոպա: Բայց այդ չի հաջողվում նրան: Հայոց հայրական հիմանդրանում է և 82 տարեկան հասակում, 1680 թվականի օգոստոսի 1-ին, մահանում Կ. Պոլսում, թաղվում՝ Բերայի հասարակաց գերեզմանատանը՝ մեծ հոսանքատություն պատճառելով հայ ժողովրդին:

Կաթողիկոսի մահից հետո նրան ընկերակցող պատվիրակությունը հոսանքատ վերաբանում է Մայր Սրբու: Միայն Խորացի Օրին է շարունակում իր ճանապարհը դեպի Եվրոպա:

Զուղայեցին արդարորեն համարվում է ԺԷ դարի հայ ազատագրական շարժման ուժանվիրան:

Օրմանյան սրբազնության հետևյալ ձևով է ամփոփում Հակոբ Դ Զուղայեցու կյանքն ու գործունեությունը.

«Հակոբ Զուղայեցին նախանձահույզ եկեղեցական և նախանձախնդիր հայրապետ մը լինելով հանդերձ, իր մտադրությունը կանոն ոչ միայն կրոնական և կրթական բարեկարգությանց վրա, այլ ոչադրություն կդարձնել ազգին ապագային վրա, և անոր կենցաղական և քաղաքական վիճակն ալ իո շանքերուն առարկա կընե»⁵⁰:

Սուարել վրդ. Դավիթիմեցու մահվան 300-ամյակի առթիվ ոգեկոչեցինք հայրենասեր պատմիչի հիշատակը և նրա պատմության միջոցով անդրադարձն նաև Մայր Աթոռի մեծ վերանորոգիչների՝ Սովուս Գ Տաթեվացի, Փիլիպասու Աղքակեցի և Հակոբ Զուղայեցի հայրապետների եկեղեցաշեն ու հայրենանվեր, հոգևոր, կրթական, դաստիարակչական «արքինարար» գործունեությանը: Նրանք ծանր ու դաժան պայմաններում, նահատակության հասնող զրկանքներով, իրենց անձնուրաց գործունեությամբ, առաքինի և օրինակելի կենցաղով, իրենց հավատով ու նվիրումով, վաճական շինարարությամբ, դպրանցների բացումով, փառակոր և անմոռաց սիրանքի նոր էջեր ավելացրին մեր եկեղեցու և ժողովրդի պատմության մեջ՝ արժանանալով հայ սերունդների երախտագիտության ու սիրուն:

Ս. Էջմիածինը ոչ միայն ժամանակագրական «պատմություն» էր Դավիթիմեցու և մեր եռամեծ վարդապետների համար, այլև մահավանդ ոգի, խորհուրդ, պատգամ ու պարուս և համազգային սրբավայր, որի լոյսին ու խորհրդին մեջ վերածնվում, ամբողջանում և գեղեցկանում է հայ ժողովուրդը որպես եկեղեցի և հոգևոր-բարոյական հավաքականություն:

Այս մտածումների լոյսի ներքո ս. Էջմիածինը ոգեղեն վեն է մեր ազգային գիտակցության և արժանապատվության:

Իզոր չէ, որ անցլայում հայությունը այս իսկ պատճառով ամփանվել է նաև «Էջմիածնա ազգ, Էջմիածնա ժողովուրդ»: Ահա թէ ինչու, Սուարել վարդապետ Դավիթիմեցին իր պատմությունը գրելիս որպես հոգեվոր, ազգային դպրանանքի արտահայտություն պատգամում էր արդարորեն և հապատությամբ.

«Ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»:

Այս է սրտագին համոզմունքը ողջ հայ ժողովրդի, երեկ, այսօր և հավիտյան:

⁴⁹ Օրմանյան, նոյնը, էջ 2611;

⁵⁰ Օրմանյան, նոյնը, էջ 2619;



**ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԴԱՎՐԻԺԵՑԻՈՅ» ԳՐՔԻՑ, ԱՇԽԱՏԱԲԱՐ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ**

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՄ ԻՆՉ ՊԱՏՄԱՌՈՎ ՄԵՐ
ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՎՈՐՉԻ ԱԶՁ ԵՎ
ԷԶՄԻԱԾՆԻ ՍՈՒՐԲ ԱԹՈՈՒԻ ՔԱՐԵՐԸ
ԱՍՊԱՀԱՆ ՏԱՐԱՆ.

Պարսից մեծ թագավոր Շահ-Աքաս առաջինը մեր հայ ժողովրդին աքսորեց իր բնիկ Հայոց աշխարհից և քչեց Պարսկաստան այն դիտավորությամբ, որ ավերվի Հայոց աշխարհը, և շենանա Պարսկաստանը, [որ] նվազի հայ ժողովուրդը, և բազմանա պարսիկ ժողովուրդը: Եվ որովհետև ինքը՝ Շահ-Աքասը, գգուշավոր մարդ էր, մշտապես խորհում և մտածում էր, թե ինչպիսի հնարելք գտնի հայ ժողովրդի համար, որ չվերադառնան իրենց երկիրը, այլ մնան Պարսկաստան: Քանի որ հայ [գաղթականն] երից հրանք, որ ծնվել էին Հայոց աշխարհում, բուն կերպով ուզում էին գնալ Հայոց երկիրը, դրա համար մի ճար գտնելու նպատակով Շահ-Աքասը, իր վեհ փառքից խոնարի կերպով ցած իշնելով, զրուցում էր հայերի թեւ՝ ում էլ պատահեր: Եվ շատ անգամ [որպես] պատասխան լսել էր, թե Հայոց աշխարհում բարիքների լիություն և առատություն է և էժանություն, իսկ այստեղ բիշ է և թանկ. և այստեղ՝ հրանք հայերի ուղղությամբ:

նախահայրերի գերեզմանատները և վանքեր ու ովտատեղիներ, որ կան սրբերի դամբարաններ, և մանավանդ՝ մեծահանդես սուրբ Աթոռ Էջմիածինը, որ գտնվում է Գրիգոր Լուսավորչի սուրբ Աջը, որով օրինվում է սուրբ մեռնել [և] որտեղից զնալով սփովում է հայ ժողովրդի մեջ ամբողջ աշխարհում՝ որ էլ լինեն. դրա համար ամբողջ հայ ժողովուրդը հնազանդվում է Էջմիածնի սուրբ Աթոռին և այնուղե հատող իր կաթողիկոսին: Եվ այս բաները ոչ թե տգետներ և աննշան մարդիկ են միայն ասել, այլ նաև հշանակուր [մարդիկ] և գիտուններ: Լսել ենք նաև ոմանցից, թե այս էլ են ասել՝ եթե շահն ուզում է, որ հայ ժողովուրդը Պարսից աշխարհում հաստատն մնա, նա սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը պեսը է քերի Ասպահան և այնուղե կառուցի նոր Էջմիածն, որպեսզի մեռն օրինել լինի, և այնուղե նատի կաթողիկոսը, և ապա [միայն] հայ ժողովուրդը կիսատառվի, կմնա, որովհետև ամբողջ հայ ժողովուրդը Աջին և Էջմիածնին է կապված:

Արդ, դարանակալած և խորամանկ օձը, կամքի, հոգիների, քրիստոնեական հավատի թշնամին, որ հայ ժողովրդի մասին մշտապես տարակուսանքի մեջ էր, հրանցից

լսեց տարակուսանքի ստոյգ լուծումը: Աւնունետև հաստատապես և անփոխիսելի կերպով մոտարկեց քանդել սուրբ Էջմիածնի քարեր և խափանել այնտեղի կառովիկուսությունը, Լուսավորչի Աջը և Էջմիածնի քարերը բերել Ասպահան և այնտեղ կառուցել նոր Էջմիածնի, որ այնտեղ հասի կաթողիկոսը, և այնտեղից ափովի մեռուն ամբողջ աշխարհում, որպեսզի այդ ձեռվ հայ ժողովորդը Պարսկաստանում մնա, այն՝ բոլոր երկրների շահն ու եկամտուր հավաքվի իր քաղաքում և իր ժողովորդի մեջ: Դրա համար Ասպահան քաղաքի մեջ տեղ նշանակելով առանձնացրեց, որ Էջմիածնի էր ուզում կառուցել, և այն տեղը մոտ էր այն այգուն, որ պարսկերեն Բաղիզորիչք են կոչում, [գրանցվում էր] այս այգու արևմտյան կողմում, նրա ետևի կողմից նրան կից:

ՏԵՐ ՄՈՎՍԵՍԻ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԼԻՆԵԼՈՒ ԵՎ ԷՇՄԻԱԾՆԻ ԼՈՒՍԱԿԱՌՈՒՅՑ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Ապա Մովսես վարդապետը, դրւու գալով Ֆահրապատից մեծ փառքով և անպատճից ննջությամբ ոչ միայն իր, այլ և բոլոր քրիստոնյաների համար, եկալ-հասալ Երևան քաղաքը, սուրբ Էջմիածնի և առանց հապաղելու սուրբ Աթոռի նորոգության գործին ձեռնարկեց մեր թշվականության 1076 (1627) թվին. Վարդապատի պահիք երկուշարթի օրը շինարարությունն ու նորոգությունը սկսեցին:

Արդ, լույ ես նորոգության մասին, բայց չգիտես, թե ինչպես էր ավերակածությունը. Դրա համար էլ ստիպված եմ գրել ավերվածության մասին, որպեսզի իմանան սուրբ Աթոռի թշվականության մասին, որով և [այն] ցավն ու կավիծը, որ ունեին ամբողջ հայ ժողովորդը և ժամանակի վարդապետները սուրբ Աթոռի մասին. Այս Մովսես վարդապետի և իր աշակերտների աշխատանքների և սուրբ Աթոռի նորոգման համար քրիստոնյաների [արած] նվիրատվությունների և տված ողորմությունների մասին:

Ինչպես Դավիթ մարգարեն է ասում, թե՝ Երրուսանեմը դարձին ինչպես մրգապահների հյուղակներ, և Եսայի մարգարեն Սիոնի մասին ասում է, թե՝ նման է սեխի այգու մեջ եղած հովանուն, նոյն այս կերպով կարելի էր ասել և աստվածաբնակ սուրբ Աթոռի մասին, որպեստև ամբողջովին պարպաված էր ունեցվածքից և կողոպտված զարդերից. գիրք իսկ չկար, որպեստև այնտեղ ժամանացություն և ընթերցում չեր լինում, զիրք և շորջառ չկառավագ կառուցելով կողման մեջ կառուցելով կարուցին նրա մեջ կառուցելով ութ բուրգեր: Եվ ապա պարպացի ներս, արևմտյան կողմում, շինեցին դարպասներ և տեսք՝ իրենց և հյուրերի պետքերի համար:

իսկ Քրիստոսի իշման տեղը և սուրբ սեղանը ծածկոց չունեին. չկային կանթեղներ, որովհետև լոյս չկար, այլ միշտ խավարի մեջ. միայն մի ոմն օտարական մահմեդական անցնող ճանապարհորդների համար ձերի ճրագ էր վառում և դնում բեմի վրա, այն էլ՝ երեմն-երեմն, որպեսզի այն տեսնելով իրեն ողորմություն տան: Խնկարկություն չէր արվում, որպեստև խունկ և բուրգան չկար: Եկեղեցու սպահատակը քարութանդ զեղաների և տղուների որչ էր դարձել: Նրա մեծամեծ լուսամուտներն առանց վանդակի էին, որտեղից թոշուները ներս մտնելով՝ եկեղեցին լցնում էին ծեռտով, շրդիրով և այլ ապականություններով, որ ամեն օր ստիպյալ մաքրում էինք: Եվ առավտյան այգաբացին թոշուների ձայնը ժամերգության ձայնը խանգարում էր: Իսկ դրի կողմից կաթողիկեի գլուխը, ամբողջ տանիքը և պատերի երեսները քանդությամբ էին, և քարերը՝ թափված, իսկ պատերի հատակաբարերը՝ փշրված և ծակութած: Եվ վաղեմի ժամանակներից եկեղեցու շորջը աղբակույտն ու հողը լոթը կանգնել բարձրացել էին և եկել-ծածկել էին հիմքերը և եկեղեցու դրի կողմում գտնվող աստիճանները:

Իսկ զարդեր, սպատեղեն և անոթներ եկեղեցին և կամ վաճքը չունեին, որպեստև հին ժամանակներից ինչ էլ որ եղել էր, կաթողիկոսները բոլորը վաճառելով և գրավ դնելով վատնել էին, որոնց մեջ էր մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի որդու՝ Սրբատակես հայրապետի Աջը, այլև Աղջոց վաճքի սուրբ Սուետիանու Աջը, դրանց հետ անև խաչ, սկիճ, բուրգան, շորջառ և էլի որիշ բաներ, որ ապատեղ Մովսես Վարդապետը:

Եվ երբ Մովսես վարդապետն սկսեց նորոգությունը, շորջանակի բլրացած հողի և մոխրի համար տարակուսում էին, թե ինչպես պետք է փորվի-հանվի, բայց որպեստև ատտվածային կամքը բարեհաճ էր և ձեռնարկված գործը Նրան համեսի էր, հողի վերացումը դդրահնար եղավ, որպեստև հորդ և վարած գետի շորը բերեցին-կապեցին հողի կողմը և շատ մշակների գործի դրեցին, և մշակներն սկսեցին փորել հողը և տրորել ջրի մեջ. և այսպես անելով՝ ջուրն առավակ-տարակ հողը, և քարը մնաց: Երբ քիչ օրերի ընթացքում բոլոր կողմերից հողը շուսով վերացավ, ամբողջ տեղը բացվեց, և գետինը հարթվեց, և մնացած քարերը շարվեցին կառուցի պատերին: Եվ ապա գործի ձեռնարկելով շորջանակի լայն ու ընդարձակ պարիսպ քաշեցին նրա մեջ կառուցելով ութ բուրգեր: Եվ ապա պարպացի ներս, արևմտյան կողմում, շինեցին դարպասներ և տեսք՝ իրենց և հյուրերի պետքերի համար:

Եվ օրեցօր նորոգվում, հաստատվում էր սուրբ Աթոռը, որով քրիստոնեական հավատի ամբողջ կարգ ու կանոնը, որովհետև սուրբ Աթոռի նորոգման համբավը հոչակվեց ու տարածվեց ամբողջ աշխարհում՝ Հունաստանում, Պարսկաստանում, Քրդաստանում, Վրաստանում: Եվ բոլորն էլ որպահանալով ցնում էին: Մովսես վարդապետուն իր աշակերտներից ողարկում էր քարոզության համար բոլոր կողմերը, որոնք գնալով՝ նոգերուն քարոզությամբ և բարեկորուն վարքով հաստատում էին Քրիստոսի հավատի և եկեղեցական ավանդության կարգ ու կանոնը, որովհետև որ էլ որ գնում էին, իրենց վարդապետի նմանողությամբ ճշմարիտ գործեր էին ցուց տալիս. եկեղեցիներ էին կառուցում, քահանաներ էին կարգում և կործանում էին ճշմարտության հակառակորդներին. ահա ինչու ճշմարտությունը գորանալով առաջ էր գնում:

Տեր Մովսես հոգելից սուրբ վարդապետը Հոհանավանքի մեծափառ սուրբ ոխտատեղիում դպրաստուն հաստատեց, որ հավաքեց շատ երեխաներ և բոլորի ծախսերն ու պետքերը ինքն էր հոգում. և երեխաները խելամոռեն և ամսափառ եկեղեցական ուսում էին ստանում և Սատվածաշնչին ու իմաստափրական գործերին ծանոթանում: Նրանք բոլորն էլ դպրան երկրին պիտանի և օգտակար մարդիկ՝ վարդապետներ, եպիսկոպոսներ, արեղաներ, քահանաներ: Եվ ամայացած, խավարի մեջ գտնվող բոլոր վանքերը լցվեցին միաբաներով, արեղաներով և կրոնավորներով, իսկ գյուղերը՝ փորձառու քահանաներով: Նրա համար մեր երկրի բոլոր կողմերուն բնակվող ամբողջ հայ ժողովորդը նախորդ կաթողիկոսների անկարգությունից ձանձրացած և սրա բարեկարգությունից միիթարված՝ սիրով ու հոժարությամբ, կաթոգին սրտով ուզում էին, որ ինքը՝ մեր հայր սուրբ Մովսես վարդապետը, լինի կաթողիկոս: Վարդապետներ և եպիսկոպոսներ և երեսէի մարդիկ գրավոր և աղածանքներով թախանձում էին բոլոր կողմերից, որ նա հանձն առնի կաթողիկոսական աստիճանը, քայլ նա հրաժարվում էր՝ իրեն անարժան գտնելով առաքելական աստիճանի:

**ԱՆՎԱՆԻ ՎԱՆՔԵՐԻ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԱԶՄԱԾԱԽՍ ՈՒ ՄԵԾԱՎԱՅՅԵԼՈՒՀ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.**

Ինչպես գարնան ժամանակ հարավի հողմը փշելով բեղմնավորում է երկիրը և առաջ բերում քազմազան ծաղիների տեսակներ, որոնցով գունազարդվելով վայելու է դանում երկրի երեսը, նոյն այս ձևով էր և այս

երկու կաթողիկոսների՝ Մովսեսի և Փիլիպպոսի ժամանակներում, որովհետև քազմաթիվ վանքեր, անապատներ և եկեղեցիներ կառուցվեցին, որոնցից մեկն է և սուրբ Ստեփանոս Նախավկայի մեծ և անվանի վանքը, որ գտնվում է Դարաշամբի ձորում:

Այսպես և Եսայի վարդապետը Փիլիպպոս կաթողիկոսի օրոք սկսեց նորոգել սուրբ Կարապետի վանքը.... Հին եկեղեցու տեղը չորս սյուների վրա սրբատաշ քարերով, քարձաքերք կամարներով և կաթողիկեռով լայն և ընդարձակ եկեղեցի կառուցեց: Ամբողջ եկեղեցին, նրա հիմքերից մինչև ծայրը, և բոլոր շինությունները շատ աշխատանքով և քազում ծախսերով կատարվեցին, և 1102/1653 թվի հոկտեմբեր ամփ 17-ին օրինվեց եկեղեցին մեծահանդես հավակատիքով (օծմամբ)՝ ի փառ Աստուծուն:

Այսպես և Զաքարիա վարդապետը Փիլիպպոսի օրոք ձեռնարկեց նորոգելու Հոհանավանքի եկեղեցիներն ու կառուցները.... և Զաքարիա վարդապետը հավաքեց քազմաթիվ վարպետներ՝ քարհատ, ատաղձագործ, դարրին, և սկսեց նորոգել վանքը. նախ բոլոր տներն ու խոցերը կառուցեց-ավարտեց և ապա եկեղեցիները, քայլ շուտափոյթ, որովհետև եկեղեցիների նորոգումը երկու տարում ավարտվեց, քանի որ երկրի մեջ (նոյի վրա) առատորեն հարստություններ թափեց, որ տալիս էր աշխատողներին: Եվ 1101 (1652) թվին աշխատանքն ավարտվեցին և Խաչվերացի տոնին օրինեցին այն խաչը, որ կաթողիկենի գլխին էր, ու գոհացն Աստծուց:

Այն ժամանակներում, Փիլիպպոս կաթողիկոսի օրոք, վերատին կառուցվեց և սուրբ Թաղենու առաջալի վանքը, որ գտնվում է Արտազ գավառի Մակու գյուղում.... և տաճարի աշխատանքներն ավարտվեցին 1099 (1650) թվին: Տաճարն ավարտելուց հետո Աստուծուն հանդեպ [ունեցած] նոյն հույսով սկսեցին ժամատունը շինել տաշված քարերով և կրով կացնելով: Եվ աս ավարտվեց 1102 (1653) թվին: Դրանից հետո կառուցեցին սուրբ կույս Սանդորիստի վկայարանը և ապա Նահատակ կոչվող եկեղեցին, որ սուրբ Թաղենու առաջալի հահատակության տեղին է:

Մահանանակ նաև Տեր Փիլիպպոս կաթողիկոսի օրոք կառուցվեց սուրբ Գևորգ գորավարի վանքը, որ գտնվում է Մովսեսի գյուղում.... Այսպես և Ռուկան վարդապետի ձեռքորով նորոգվեց մեր մեծ վարդապետ սուրբ Մեսրոպի կառուցած սուրբ Սարգսի գորավարի վանքը, որ է Ռոշի գյուղում, Արագած լեռան առորոտին գտնվող Կարփի գյուղի մոտ: Այն՝ Աստուծուն փառքի հոյակապ, լայնանիստ և քարձաքերք տաճարը՝ մեծ վարդապետ

սուրբ Մեսրոպի հանգստարանը, նրա, որ գտավ հայոց գրերը. ինչպես որ նրա մասին եղած պատմությունն ասում է, թե նրան տարան-թաղեցին Օշական կոչվող գյուղում: Արդ, սուրբ Մեսրոպ վարդապետի հանգստարանի այս տաճարի ամբողջ տաճիքը վաղ ժամանակներից փլվել-հչել էր, և միայն ավագ խորանն էր մնացել ծածկված: Փիլիպպոս սուրբ հայրապետն իր կաթողիկոսության ժամանակ սկսեց այս ևս նորոգել, որը և կատարեց բազում ծախսերով և աշխատանքներով՝ տաշված քարով և կրով կացնելով, մինչև որ ամբողջն ավարտվեց մեր 1094 (1645) թվին՝ ի փառ Աստուծո:

Այլև Տեր Փիլիպպոս կաթողիկոսի հրամանով նորոգվեց բարձրաբերձ և լայնահիտ ու մեծաշոր այն տաճարը, որ սուրբ Աստվածածնի անունով հնում, վաղ ժամանակներում կառուցվել է Բշնի գյուղում:

Կան նաև ուրիշ շատ նորոգված վաճքեր, իիմքից նոր կառուցված բազմաթիվ եկեղեցներ Տիֆլիսի քաղաքում, Լոռվա գավառում և Արարատյան երկրում, Սիսական գավառում և Ղափանի երկրում, Նախչվան քաղաքում և նրա գյուղերում, ինչպես նաև Աստապատի չքնաղ, մեծաշոր և վայելու եկեղեցին, այլև Նախչվան քաղաքի, Ծանկ գյուղի, Ծամկերտ գյուղի և Գաղ գյուղի [Եկեղեցները], որոնք կառուցվեցին Տեր Հակոբ կաթողիկոսի օրոք. և Ծոռոթի եկեղեցին, Ագուլիսի վաճքն ու գյուղի 4 եկեղեցները. Թավրիզ քաղաքի եկեղեցին և Դարաշամբի եկեղեցին, Ցղն եկեղեցին: Արանք և ուրիշ շատեր, որ չեմ հիշում, մի քանիսը Մովսես կաթողիկոսի օրոք շինվեցին և մի քանիսը՝ Փիլիպպոս կաթողիկոսի: Դրանք Տեր Աստված անսասան պահի մինչև հավիտյան:


ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ


Փա՛ռ ամենասուրբ Երրորդության՝ Հոր և Որդիվո և Հոգվուն սրբ. ամեն:

Մեր Տեր Յիսոս Քրիստոսի շնորհներով և ողորմությամբ հայոց մեր մեծ 1115 (1666) թվականին Երևան մայրաքաղաքում, Կաթողիկե կոչվող սուրբ եկեղեցում գրվեց այս գիրքը, որ կոչվում է պատմագիրք՝ հոգացողությամբ, ծավատվ ու միշոցներով Առաքել վարդապետի, որ օրինակը բազմացնելու համար գրել տվեց աս գիրքը: Եվ սա հինգերորդ գիրքն է, որ Առաքել վարդապետի ձեռագիր օրինակից ընդորինակվեց: Նա շատ շաճքերով, բազում հոգացողությամբ ծախսեր է անում և գրիչների ձեռքով գրել տալիս [հետևյալ նպատակներով]. ա) օրինակը բազմացնելու համար, բ) Տիրոջ մոտ հիշատակի համար: Արդ, ովքեր հանդիպեք սրան կարդալով կամ ընդորինակելով, կամ շրջելով (թերթելով) բարեխանությամբ հիշեցեք ի Քրիստոս վերոհիշյալ Առաքել վարդապետին, որը զանազան և տեսակ-տեսակ բազում դժվարություններ կրեց այս պատմագրի համար և տակալին նույն դժվարությունների մեջ է: Դրա համար աղաջում ենք ի Տեր հիշել իրեն՝ յուրայիններով և բոլոր նրանց, որոնք աշխատանք ունեն սուս գործի մեջ: Մաղթում եմ, որ հիշեք ի Քրիստոս սրանց հետ և ինձ՝ Ավետիս երեց նվաստ գրչիս, որ ընդհանուրի օգտի համար Առաքել վարդապետի հրամանով գրեցի այս գիրքը: Արդ, ովքեր որ հիշեք մեզ ի Քրիստոս... մեկի դիմաց հազարապատիկ ստանաք մեր օրհնյալ Աստծոց՝ Քրիստոսից, հավիտյան. ամեն:

Գրաբար բնագրից թարգմանեց՝
ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ

(Հոգևոր մեմարանի գրաբարի դասախոս, դոցենտ)





ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԵՐԵԲ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաքել Դավրիժեցին ժԵ դարի մեր պատմագրության ամենապայծառ դեմքն է իր ընդգրկումով և ճշմարտապատում ոնպէ: Նա իր պատմության մեջ ընդգրկել է մոտավորապես ժԵ դարի առաջին կեսը, մի շրջան, որը շատ բախտորոշ է մեր ժողովորի պատմության մեջ: Ականատեսի աչքերով նա պատմում է շահաբազան խորշակի ընթացքը՝ հայ ժողովորի բոնի արտազայթը դեպի Պարսկաստան: «Պատմութիւն անցից հարուածոց... ի բագաւորէն Շահաբաս»: Որպես հայունասեր հոգևորական հյարդերի մեծ լարումով է արձանագրում այդ ճանապարհը, մեծ հոգականույթուն դնելով իր բոլոր տղերի մեջ: Ներքին կրակով գրված այս իրապատում էշերը մեծ հետաքրքրություն առաջացրին ժամանակակիցների և ապա բանասերների մեջ: Գիշը կարդավում է մեծ կրանումով: Այս հետաքրքրությունը բացատրվում է նախ նրանով, որ Դավրիժեցին, որպես ականատես, դեպքերը տվել է ընդարձակ ծավալով: Որպես ս. Էջմիածնի միաբան նա տիսրությամբ է գրում նաև «Վասն անշքանալոյ արբոյ Աթոռոյն Էջմիածնի և նորին կաթողիկոսացն»: Իր պատմության լայն ծիրի մեջ է առել նաև այլ գավառների ու քաղաքների այդօրյա կյանքը: Դավրիժեցին հենց սկզբից նպատակ է դրել իր պատմությունը տալ ժամանակագրական դասավորությամբ՝ «Ըստ օրինի պատմագրաց»: Բայց ցավով արձանագրում է, որ «Քանի ազգս մեր.... ցիրսցանը ե-

ղեն.... հազի ամենայն ոք զապրուստ իրոցն կենաց հայրայրէ», ոչ ոք գիտե պատմությունն ճշգրիտ թվականով հանդերձ: Բայց ինը մեծ աշխատանքով դնում է այն, ինչ գտնում է ճշգրիտ ժամանակագրություն, իսկ ինչ չի կարող տալիս է առանց թվականի, որի համար և խնդրում է՝ «Խսկ դու ընկալ զայս առանց մեղադրելոյ»¹:

Դավրիժեցին իր պատմությունը գրել է իր ուսուցիչ՝ Փիլիպպոս Սոլրակեցի կաթողիկոսի հրամանով: Սկսել է գրել 1651-ին, հիշյալ կաթողիկոսի մահից հետո ընդհատել և ավարտել է 1662-ին, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի հրամանով: Հազվադեպ երշամիկներից է, որ տեսել է իր գրքի հրատարակությունը: Նա առանձնապես է մտահոգվել բազմացմամբ: Ինչպես կարդում ենք Ավետիք Երեցի հիշատակարանուն², նա ինքը իր ինչքերը ծախել է ու գրիներին գրել տվել 5 օրինակ իր ձեռագիր օրինակից:

Դավրիժեցին գրել է ոչ միայն աշքով տեսածը, այլև իր ճանապարհորդության ընթացքին տարբեր մարդկանցից բաղած հյութեր, որոնք գետեղել է իր գրքում: օրինակ՝ ԾԳ գլուխ «Վասն անտանց և որպիսութեանց պատուական ականց» մասը, որ հալեպցի

¹ Առաքել Դավրիժեցոյ Պատմութիւն—«Նախադպութիւն», 1896, Վաղարշապատ, էջ 3:

² Առաքել վրդ. Դավրիժեցի, «Պատմութիւն», Վաղարշապատ, 1884, էջ 520:

մի ակնավաճառ քահանայի գրածն է: Ընդմիշարկում են նաև ԾԴ գլուխը՝ Հովհաննես Ծարեց «Պատմոթիւն Սղուանից աշխարհին», ԾԵ գլխի «Ի հայոց թուականին Ժկարգեցա հինգ հարիւրակն» և «Պատմոթիւն անցից Հրեից ազգին և Սապէթայ անոն ջիտին» մասերը:

Դավիթեցու «Պատմոթյան» մեծ հետաքրքրության մասին են վկայում երեք հաջորդական հրատարակությունները: Բ հրատարակության սկզբում հրատարակիչը ասում է, որ սպասվել է Ուկան վարդապետի հրատարակությունը, և քանակերեք բուն պահանջ են ներկայացնում այն վերահրատարակելու համար: Այդ մասին է վկայում և այն, որ դեռևս 1874 թվին հայագետ Բրուսեն իր թարգմանությամբ Պատերքուրգում ֆրանսերեն հրատարակել է Դավիթեցու պատմոթյունը. «Livre d'Histoires, composé par le vartabied Arakel de Tauris»:

Առաջին հրատարակությունը կատարվել է հեղինակի կենդանության օրոք, 1669 թվին Ամստերդամ քաղաքում Ուկան վրդ. Երեվանցու ջամքերով: 650 էջ է ($10,5 \times 18$ տող՝ 34): Մենք նկարագրում ենք Մատենադարանի հնատիպ գրքերի համար 1653-ը: Ծաղկավոր կաշեկազմ է: Կազմի առաջին երեսի վրա ոստահյուս շրջանակի կենտրոնում ուկեգոյն տպված է Խաչելությունը: Երկրորդ երեսի կենտրոնում ճառագայթաձև շրջանակում համբարձվող Հխոտսն է 4 հրեշտակներով: Սկիզբը ունի ծաղկալ խորան, մոտավորապես էջի կեսը գրավող, որից հետո կա «Պատմոթիւնք ժամանակաց հաւաքեալ ումեն Առաքեալ անուամբ Վարդապետի որում Տէր ողորմանցի»: Հետո սկիզբն է՝ Արդ ի ժա մասը թշնագիր: Բնոր գլուխները հախորդից անշատվում են գծով, տրվում է նոր գլխի վերնագիրը և հետո սկիզբը թոշնագիր: Էջի վերևում կա այդ էջի պարունակող ընյոթի անվանումը, որը կարող է տարածվել մեկից մինչև 10 էջ. օրինակ՝ բացի գլխի խորագրից էջի վերևում կա «Վտարումն Արարատու», «Ամրացումն զառնեցուց», «Վտարումն ջողայեցուց» և այլն: Առաջին հրատարակությունը ունի հետևյալ անվանաթերթը.

«Գիրք Պատմոթեանց շարադրեալ Վարդապետին Առաքելոյ Դավիթէացուց: Սակա դիպուածոց Հայաստանեաց՝ և ևս գաւառին Արարատոյ՝ և մասին Գողթան գաւառի, սկսեալ ի թուոն հայոց 1054-էն մինչև յաւարտ պատմագրութեանս, այն ի յիշումն ածեալ մասնադրաբար աստի և անտի: Տպագրեալ ներ տպարանում Արբոյն Եջմիածնի և սրբոյ Սարգսի Զօրավարի: Ի հայրապետութեան Տեառն Յակօբայ Կաթողիկոսի Սրբոյ Եջմիածնի: Եվ վերակացու-

Գ Ի Ր Ք Պ Ե Տ Ա Ւ Թ Ե Շ Ե Ց .

Հ Հ Ր Ա Ր Ե Լ

Ա Ր Ե Ր Դ Ե Վ Ե Տ Ե Ն
Ե Ռ Ա Ր Ե Լ Ե Լ Ո Յ Ե Տ Ե Ց
Ճ Ա Ռ Ե Ց Ի Ո Յ Ե Տ Ե Ց

Ա կ ս դ ի պ ո ւ ա ծ ո ւ ո ց հ ա յ ա ս տ ա ն ե ա յ ց՝ և
և գ ա ւ ա ո ւ ն ա ր ա ր ա տ ո յ՝ և մ ա ս ի ն գ ո ղ թ ա ն
գ ա ւ ա ո ւ ն է, ս կ ս ե ա լ՝ ի թ ո ւ ո յ ն հ ա յ ո ց. 1054. է ն.
մ ն չ ն կ յ ա ւ ա ր ա պ ա տ մ ա գ ր ո ւ թ ե ն ս. ո յ լ է
՚ ի յ ե լ ո ւ ա ծ ե ա լ մ ա ս ն ա ւ ո ր ա
բ ա ր ։ ա ս տ ի և ա ն տ ի :

Տ է ր ե ւ ն է Տ է ր ե ն ա վ / Ա ր ե ց ի լ մ ի տ է ն է .
ւ Ա ր ե ց ի լ մ ի տ է ւ է ւ է ւ է .
՚ է շ ա յ ո ւ ն ա վ է ն է ն է ն է ն է ն է .
է շ ա յ ո ւ ն ա վ է ն է ն է ն է ն է ն է .



Յ Ա Ն Մ Ա Ր Ե Լ Ո Դ Ի Մ Ո Ւ Մ .

• Ա ե ր թ ո ւ ո չ փ ր կ չ ի ն 1669. և . Յ ո ւ ն է վ ա ր ե ւ ։

Ի ս կ ը ս տ հ ա յ ո ց. 1118. և .
Ո ա հ մ ի թ . 29.

Դավիթեցու պատմոթյան առաջին հրատարակության տիտղոսաթերթը (1669 թ., Ամստերդամ)

թեամբ տեառն Ուկանա Երևանցու բանի սպասարիի: Հետո կա եռանկյունի մրգածաղկանկար, որի տակ՝ «ՅԱմաթէլոդամում ներ թուոց Փրկչին 1669-ին, Յունուարի 1: Խեկ ըստ հայոց 1118-ին, Սահմի 29»: Ուկանան Աստվածաշնչից միայն երեք տարի վերջ հրատարակվող այս գրքի վերջում Ուկան Երևանցին 2 գլուխ է ավելացրել՝ իր կյանքի և գործունեության վերաբերյալ. գլուխ ԾԸ՝ «Պատմոթիւն կենաց Ուկանայ վարդապետի Երևանցու տպագրողի գրոյն և այլոց», և գլուխ ԾԸ՝ «Յաղագս միութեան և միատրութեան. նոյնը են եթե զանազանք արարեալ նունոյ Ուկանայ վարդապետի»: Այս երկու գլուխները, բացի կենսագրական տվյալների կարևորությունից, ունեն և այլ արժեք՝ հրատարակության մասին հաղորդումներով: Թվելով իր կատարած աշխատանքները Ուկանը շարունակում է. «Նաև

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱԹԵՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԴԱՎՐԻԺԵՑԻՈՅ

Առևտուածոց Հայաստանեաց և գաւառին Արարատաց և մասն Գոզմեան գաւառին ակնել ի ՌԾՌ. թուականէն Հայոց միջն ի ՌԾՌ. թ.

ՀՕՏ ՀԵՌԱՎԻՐ ՕՐԻՆԱԿԻՆ ԱՐՏՈՒՐԻՆ ԽԱՆԻՔ ԵՎ ՀՈԽՈՒՐԱՎԱՐԻ
ՀԵՌԱՎԻՐԻՆ

ՏՊԵԱԼ.

ՀՐԵՄԱՆԻ ԹՆՈՒԻ Ռ ԷՌԻԵՑԻՆ.

Ի ԳԵՂԵՐՃԵՎԱԾ.

Ի ՏՊԵԱՆԻ ՄՐԹՅ ԿԱԲՈՂԻԿ ԷՇԻՐԱՆՆ.

1884 — ՌՅԱ. Գ.

1884 թ. հրատարակության տիտղոսաթերթը

զպատմագիրս նոր՝ զարարեալն յԱռաքեալոյ վարդապետէ, զորս ոչ միայն տպագրեաց, այլն սրբագրեալ ուղղեաց ըստ քերականութեան արհեստի, զաղաւալեալն ի գրչաց անհմտաց, և անոպահց արանց և բանատեղծից» (Եշ 637—638): Բնագրական այս նշումը վկայում է Երևանցու հրատարակչական արվեստի բարձրության մասին: Ուկանի հրատարակության մի որիշ տպանձնահանությունն է այն, որ նյութերի ցանկի մեջ գլուխների վերնագրերը մեծ մասամբ այլ են, քան բնագրում, այսինքն տըրված են ավելի ամփոփ, որով և տարբերվում է մյուս հրատարակությունների նյութի ցանկից:

Գրքի վերջում կա Ուկան վարդապետի հետևյալ հիշատակարանը. «Ծնորհօք և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ շարատպեցեալ յաւարտ ժամանեաց մատեանս Պատմագրական ներ յուշ Փրկչին ՌՈՒԹ (1669), նամեանն մայիսի, որոյ առուք էին Զ: Խոյ ըստ հայոց ՌԾՌ, նամեանն Արեգի, որոյ առուք էին Դ: Սրբագրութեամբ և ընչիք Ուկանի Վարդապետի Երևանցու ի տպարանի սրբոյ Էշմիածնի և սրբոյ Սարգսի, ի հայրապետութեան տեան Յա-

կօրու Հայոց Կաթողիկոսի, ներ քաղաքում հոյակապոմ Ամստերդամում: Արդ որք հանդիպիք ամին տեսանելով կամ ընթեռնուզ յիշեսչիք զաշխատադրսն. նա և գեղրայրն իմ զԱնեսին, որ պատճառ է եղեալ այսուհիկ գործարանի Էշմիածնի լինելոյն, մահաւանո՞ց զի զայս գիրս ինքն ինքն ընչիք իրովք է արարեալ՝ որոյ ներումն յանցանաց մաղթել և վարձ բարեաց ի Քրիստոսէ ինքեան և ծնողաց իրոց հօրն Թորոսին և մօրն Գօհարազգին և ալլոց արեանառուաց մերձաւորաց: Բայց որք լիշէք միով ողորմութիւն. լիշեալը լիշիք յողորմութեան առատին ի փառ ամենօրնեալ անոն նորա, այժմ և անզրաւաս յախտենի: Ամէն»:

1884-ին, ս. Էշմիածնի Սինօդի որոշումով հրատարակվում է Դավիթիցու Պատմությունը երկրորդ անգամ: Գիրքը ունի 524 էշ (15,5×23,5, տող՝ 32): Տպագրությունը շատ մարուք է, բայց ավելի պարզ, քան նախորդը. թոշնագրեր և ծաղկանելարներ չկան: Գիրքը ունի հետևյալ անվանաթերթը. «Պատմութիւն Առաքել Դավիթիցու: Սակա Դիպուածոց Հայաստանեաց և զաւտին Արարատաց և մասին Գոյթան զաւանի, սկսեալ ի ՌԾՌ թուականէն հայոց մինչ ի ՌԾՌ թ.: Ըստ ձեռագիր օրինակին արտագրելոյ ծախիք և հնդողութեամբ հեղինակին: Տպեալ հրամանաւ Սինօդի ս. Էշմիածնի, ի Վաղարշապան՝ ի տպարանի Սրբ Կաթողիկէ Էշմիածնի: 1884—ՌՅԱ. Անվանաթերթին հաջորդում է «Ձեկուցմն»՝ հառաջարանի փոխարեն, որտեղ տրվում է մի քանի տողով Դավիթիցու կենազգությունը: Նշվում է, որ Դավիթիցին իր պատմությունը սկսել է գրել Փիլիպասու կաթողիկոսի հրամանով 1655-ին (ՌԾՌ) և ավարտել Հակոբ Զույացեցու հրամանով 1662-ին (ՌԾՌԱ): Շարունակվում է, որ հեղինակը մահացել է, ինչպես իր տպանագիր վրա կա Մայր Արքոնի գերեզմանատանը, 1669-ին (ՌԾՌԸ) և չի տեսել իր գրքի հրատարակությունը: Բայց հավանաբար Դավիթիցին լսել է իր գրքի տպագրության մասին, որովհետև մահացել է 1670 թվականին:

Այս օրինակը հրատարակվել է Մայր Արտոի մատենահարանում գտնված երկու ձեռագրերից Արամաս Դայիի օրինակից՝ արտագրված 1663-ին (ՌԾՌԲ) հեղինակի իսկ ծախիքերով ո հնդողությամբ: Հրատարակիչները հիմնվելով Ուկան Երևանցու «ուղեաց... զաղաւաղեալն» վերոհիշյալ բառերի վրա, Ուկանի հրատարակությունը համարում են աղճատված «Ըստ կամաց ի-


³ Հ. Անապանը իր «Հայկական մատենագիրության» Ա. հասորում (Եշ 1144) գրում է, որ Դավիթիցին պատմությունը սկսել է գրել 1651 -ին:

րոց»: Տողատակով նշված են տարբերություններն ու սխալները նախ երկրորդ ձեռագրի (ընդօրինակված ՌժԺ (1666) թվին, Ավետիք Երեցի կողմից) և հետո Ռուկանի հրատարակության համեմատությամբ: Հրատարակող մարմինը իրեն թույլ է տվել միայն գրչի վրիպակներն ու տառախավները ուղղել: Այստեղ նախորդ հրատարակության հակառակ էշերի վերևում չկան թեմատիկ անվանումներ. կան միայն գլուխների ընդհանուր խորագրերը: Գլուխների ցանկը տրված է ըստ բնագրի, թեև կան հատուկնենտ աղումներ: Ավելորդ է համարվել տաղ գլուխների համեմատությունը: Այստեղ չկան նախորդ հրատարակության ԾԷ և ԾԸ գլուխները, բայց այստեղ ԾԵ և ԾԸ գլուխների միջև կա մի նոր գլուխ՝ «Պատմոթիւն անցից հրեցից ազգին և Սապէրայ անոն շնորհ, որ ասէր թէ ես եմ Քրիստոս փրկիչն հրեցից»: Գրքի վերջում կան երկու ձեռագրերի հիշատակարանները.

Ա.—«Փառք անբաժանելի և միասնական սուրբ Երրորդութեան և Հօր և Որդույ և Հոգաւոյն Սրբոյ յախտեան Ամէն: Որ ես կարողութիւն անբաժան մեղամած և փծոն գրչի, Աթանաս դպրի, աւարտել զգիրքս ի յետին ժամանակս, շարադրեալ յԱռաքեալ Վարդապետէն, որ այժմ կոչի պատմագիրի թուաբերութեանս մերում ՌժԺԲ թուին, ի հայրապետութեան ընդհանուր ազգին հայոց տեսուն Յակոբի սրբազնա Հայրպետի. ի թագաւորանիստ քաղաքէն Ծօշ կոչեցեալ որ այժմ Սպահան ասի. որ յայս ամի զնաշաֆդոլի խանճ ձգեցին և տոտին զերևան Արատովի խանին: Արդ՝ գրեցա զիրքս ի յերկիրն Արարատեան ի գիտաքաղաքն Կարրի ընդ հովանեան Գաբրիէլի և Միքայէլի հրեշտակապետացն և ամենայն սրբոց որք հաւաքեալ կան: Թէմ և վիճակ մեծափառ ուխտին Յոհանովանից սուրբ Կարապետին սուրբ Ստեփանոսի աշխին և սուրբ Աստուածածին վարշամակին: ի յառաջնորդութիւն սուրբ ուխտի հեզանոգի, խոհեմ, հնազանդ Յովհաննեսու արհեեպիսկոպոսի, ի բնիկ գիշեալքարքէն Կարրու, որը Տէր Աստուած զոխտն իր հաստատ և զինքն անփորձ պահեացէ մինչև ի խորին ծերութիւնն Ամէն»:

Պատմական ավելի մեծ արժեք ունի Ավետիք Երեցի հիշատակարանը.

Բ.—«Ծնորիօք և ողորմութեամբ Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի գրեալ եղան գիրքս որ կոչի Պատմագիրը, ի մեծ թուականիս հայոց ՌժԺ (1666) ի մայրաքաղաքս Երեւան, ի դուռն սրբոյ եկեղեցոյս որ կոչի Կաթոլիկէ, հոգաբարձութեամբ, ծափիք և արդեամբ՝ Առաքեալ Վարդապետի, որ է նոյն ինքն այս պատմագրին շինողն և արարողն, Թալիթիզեցի Առաքեալ Վարդա-



1896 թ. հրատարակության տիտղոսաթերթը

պետն՝ որ վասն օրինակն բազմացուցանելոյ ես գրել զայս զիրքս. որ և այս հինգերորդ զիրք է որ ինքնան Առաքեալ Վարդապետի ձեռացագիր օրինակն զաղափարեցա. որ հոլով չանի և բազում հոգաբարձութեամբ ծախէ ինչու և ձեռամբ գրչաց գրել տայ. առաջին վասն օրինակն բազմանալոյ և երկրորդ վասն առ Տէր յիշատակի: Արդ՝ որք հանդիպիք սամա կարդալով կամ օրինակելով, կամ զրօնով, սրտի մոտք յիշեցէք ի Քրիստոս զվերոյ յիշեալ զԱռաքեալ Վարդապետն որ զանազան և պէսպէս կերպի բազում աշխատան կրեաց վասն պատմագրիս, և տակաին ևս ի նոյն աշխատան կայ, վասն որոյ աղաչեամբ յիշել ի Տէր զինքն իրայօքն և զամենայնս որք ունին աշխատան ի սոյն գործառնութեան: Ընդ սոցին մաղթեմ յիշել ի Քրիստոս զիս զիանարի գրիչս զԱւետիս երես որ հրամանան Առաքեալ Վարդապետին գրեցի զգիրքս վասն հասարակաց օգտի: Արդ՝ որք յիշեք զմեզ ի Քրիստոս և բաշխեք մեզ Աստուած ողորմի և Քրիստոս որդի և Հայր մեր որ յերկինս, միոյն հազարապատիկ առնուցուք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ օրինելոյն յախտեան:

Ամէն: Հայր որ յերկինս ես սուրբ եղի՝
անոն...»⁴:

Գեղեցիկ ու գիտականորեն ավելի կատարյալը սակայն վերջին հրատարակությունն է՝ 1896 թվին: Այն հրատարակել է Պուկաս սարկավագը (հետագային՝ Բարգեն վարդապետ Աղավելյանց), որը աշխատանք է թափել մի լավ գերեզմանաքար դնելու համար Դավիթեցու շիրիմին: 711 էջ է (15×23. տող՝ 30): Գլուխները բոլոր սկսում են նոր էջով և ծաղկալ ֆոնի վրա մեծ տառով, թուղթը ընտիր է, և տպագրությունը՝ ամենամաքոր: Գրքի անվանաթերթն է:

«Պատմութիւն Սուարել Վարդապետի Դավիթինցու: Սակա դիպուածոց Հայաստանէայց և գաւառին Արարատավ և մասին Գողթան գաւառի սկսեալ ի ՌԾՍ թուականին հայոց մինչ ի ՌԾԾՍ թ.: Երբորդ տպագրութիւն: (Մանրանկար Էջմիածին): Վաղողաշապատ: Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Սրբոյ Էջմիածին 1896—ՌՅԽԵ»:

Հաշորդում է «Ճանկ ճիւթոցը» հետո «Յառաջարանը», որ հրատարակիչը խոսում է այն մասին, որ նախորդ հրատարակությունը շուրջ սպառված լինելով անհրաժեշտություն ծագեց նոր հրատարակության: Հետո տալիս է որոշ կենսագրական տեղեկություններ, «Պատմության» ընդգրկման շրջանը (1602—1662), թե ինչո՞ւ է հեղինակը գրել երկը, պատմում «Յաղագս պատուական ականց» գլուխ գրության մասին, նկարագրում երկու ձեռագրերը, որոնց վրա կան ուղղումներ, որոնք ամենայն հավանականությամբ հեղինակին են, հատկապես


⁴ Առ. Դավիթեցի, «Պատմութիւն», Վաղարշապատ», 1884, էջ 519—520:


«Պատմութիւն անցից հրեից...» գլուխը, որ հեղինակը գրել է հետագային, 1667 թվին, որը և պակասում է Ուկանի հրատարակության մեջ: Վերջում մի քանի տողով խոսում է նաև նախորդ հրատարակությունների մասին: Հառաջարանից հետո գալիս է գլուխների ցանկը: Պուկաս սարկավագն էլ դրու է թողել ԾԷ և ԾԸ Ուկանին վերաբերող գլուխները, որոնք կային առաջին հրատարակության մեջ: Հետո արդեն՝ «Նախադրութիւնը» և պատմությունը, բացի 1884-ի հրատարակության մեջ նշված տողատակերից, որոնք այսուղ էլ հրատարակվում են նոյնությամբ: Հրատարակիչը վերջում տվել է հատուկ անոնների ընդարձակ ցանկ (էջ 675—694), որից հետո կա այսպիսի վերտառություն: «Սուարել Վարդապետի պատմութեան գրչագիր օրինակի» (Աթանաս Դարի) և տպագիր օրինակի (Վաղարշապատ, 1884) մէջ եղած մանրամասն տարբերութիւնները: Սուանձին նշված են էջն ու տողը, տպագիր կամ գրչագիր լինելը (էջ 695—711): Կա նաև ներդիր թուղթ «Կարեւոր ուղղելիք»:

Այս հրատարակությունը կարելի է համարել Դավիթեցու «Պատմության» բավագույն հրատարակությունը: Այժմ Երևանի Մատենադարանում գտնվում են ձեռագիր №№ 1773, 1772, 5025 և 7296 օրինակները, որոնցից առաջին երկուսը ծառայել են նախորդ հրատարակությունների համար:

Այսքան կարճ ժամանակում հաջորդրական այս հրատարակությունները վկայում են այն մասին, որ Սուարել Դավիթեցու «Պատմությունը» ոնի ճանաչողական մեծ արժեք և լայն տարածում է գտնել ընթերցողների մեջ:

ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ





ՊԱՏՄԱԳԻՐ ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ «ԱՐԱՐԱՏ»-Ի ԷԶԵՐՈՒՄ

Սուաքել վարդապետ Դավիթեցին 17-րդ դարի հայ պատմագրության ամենամեծ երախտավորներից է, որի պատմությունը մինչև այսօր էլ չի կորցրել իր արդիականությունն ու թարմությունը, և որի մեջ հրատակորեն արտացոլված է ժամանակաշրջանի հայ ժողովրդի անմիտբար վիճակը պարսկական և օսմանյան բռնակալության ներքո:

Սուաքել Դավիթեցու ծննդյան տարեթիվը մեզ ստուգ հայտնի չէ, սակայն նրա գրած հիշատակարանից պարզվում է, որ նա իր պատմությունը գրել-վերջացրել է հայոց ՌՃԲԱ (1662) թվականին և այն գրելիս եղել է ծեր ու թույլ. «Այլ դիպեցա պատահիլ ինձ այս գործ ոչ ի ժամանակս առողջ երիտասարդութեան, այլ յողորմելի ծերութեան, վասն զի ծեր էի, նաև լոյժ ցաւագար մարմնով, եւ ի լուսոյ աչք պակասեալ եւ ի պրետորթենէ ձեռքս թուլացեալ դողալը տունչէս»¹:

Դավիթեցու պատմության հիշատակարանի վերոհիշյալ տողերից հայ մի շարք բանաւերներ² եզրակացրել են, որ նա ծընված լինի մոտավորապես 16-րդ դարի 90-ական թվականներին: Խոկ նրա մահվան թիվը մեզ հայտնի է: Այն գրված է և Գայանե վանքի մոտ գտնվող միարանական

գերեզմանոցում, պատմագրի տապանաքարի վրա. «Այս է տապան Սուաքել վարդապետի ՌՃԲԱ»:

Դավիթեցին ծնվել է Իրանի Թավրիզ քաղաքում: Նա մեծացել ու կրթություն է ստացել և. Էջմիածնում և դարձել է Մայր Աթոռի միաբան: Եղել է սիրված աշակերտ Փիլիպոս կաթողիկոսի, որի պատվերով և հորդորներով գրել է իր արժեքավոր պատմությունը: Պատմագրի ցանկություններից մեկն է եղել մահվանից հետո իր մարմինն ամփոփվի և. Էջմիածնում. «...ընդ հովանեաւ սրբին ամփոփիլ ի հող, զի թերես որ ի սմա խորհրդակատարութեանցն լինիմ հայոդեալ»³:

Եվ իսկապես էլ կատարվում է պատմագրի համեստ ցանկությունը:

Դավիթեցու պատմությունը հայ ընթերցողի ամենասիրած գրքերից մեկն է եղել դարեր շարունակ, որն իր հայրենասիրական բարձր ոգով ու շնչով մեծ ազդեցություն է թողել հետագա մեր պատմիչների և գրողների վրա: Եվ թերեւ այդ է պատճառը, որ նրա պատմությունը շատ արտագրված ու հրատարակված երկերից է հայ մատենագիտության պատմության մեջ:

Սուաքել պատմագրի հիշատակը վասպանելու համար մեծ գործ է կատարել և. Էջմիածնի միաբան Ղուկաս սարկավագ (հնատագայում՝ Բարգեն վարդապետ) Աղավելյանցը, որը 1896 թվականին երրորդ անգամ, ձեռագրերի համեմատությամբ, վերա-

¹ Պատմութիւն Սուաքել վարդապետի Դարիթեցւու, Վաղարշապատ, 1896, էջ 671:


² Մ. Աբեղյան, Հայ մին գրականության պատմություն, Երևան, 1946, էջ 443; Ղ. սրբ. Աղավելյանց, Պատմութիւն Սուաքել վարդապետի Դարիթեցւու, Վաղարշապատ, 1896, էջ Բ:

³ Պատմութիւն Սուաքել վարդապետի Դարիթեցւու, Վաղարշապատ, 1896, էջ 668:

հրատարակում է Դավիթեցու պատմոթյունը: Այնուհետև նոյն թվականին, որպես հարգանքի և երախտագիտության պարտքի մատոցում Առաքել պատմագրին, Դուկաս արքավագի գլխավորությամբ Մայր Աթոռ և Հչիմածնում «մի խումբ հայրենասեր, երախտագետ միաբաններ և աշխարհիկ բանակերներ» որոշում են «թշվառ ժամանակերի ողբերգակի գերեզմանի վրա կառուցել

Նոյն նպատակի համար արված հաջորդ հայտարարությունից⁵ տեղեկանում ենք, որ գոյացել է ևս 79 ոորի և ընդհանուր գումարը դարձել՝ 173 ոորի:

Մյուս հայտարարությանը հանդիպում են «Արարատ»-ի 1897 թվականի փետրվարի համարում⁶: Այս անգամ էլ հանգանակից է 27 ոորի և ընդհանուր գումարը արդեն եղել է 200 ոորի:



Առաքել վրդ. Դավիթեցու շիրմաքարի արձանագրությունը

մի հուշարձան-դամբարան»: Նրանք իրենց մտադրությունը հայտնում են Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Խրիմյանին, ստանում Հայոց Հայրիկի համաձայնությունը և «Արարատ» ամսագրի 1896 թվականի նոյեմբեր համարին⁴ հայտարարություն են տալիս հանգանակություն անելու համար: Այստեղ հշված են նաև այն անձանց անունները, որոնք փոխացել են իրենց համեստ լուման ներդնել պատմագրի մահարձանը կառուցելու գործին: Առանձին նվիրատվությունից գոյացել է 94 ոորի:

⁴ Արարատ, 1896, էջ 523;

Հաջորդ՝ չորրորդ տեղեկությունից⁷ պարզ վում է, որ այս հանգանակությանը մասնակցել են նաև Գերմանիայի համալսարաններում սովորող և օրվա հացի կարու հայ ուսանողները, որոնք հավաքել են 19 ոորի և Գարեգին սարկավագ Հովսեփյանցի ձեռքով ողարկել Մայր Աթոռ:

«Արարատ» ամսագրի 1899 թվականի հունիսի համարում⁸ Բարգեն վարդապետ Ա-

⁵ Արարատ, 1896, էջ 575:

⁶ Արարատ, 1897, էջ 85:

⁷ Նոյն տեղում, էջ 230:

⁸ Նոյն տեղում, 1899, էջ 292:

դավելքանցը տեղեկացնում է, որ Դավիթեցու մահարձանի համար հանգանակված ընդհանուր գումարը դարձել է 219 ռուբլի որը դեռ 1897 թվականի մայիսի 17-ին շահութաբերության և ապահով պահելու համար հանձնվել է Վաղարշապատի փոստահեռագրական խնայողական դրամարկղոր՝ № 63 գրբոյլութեալ: Այսուղեւ ապահով է նաև, որ նոյն 1899 թվականի հոկտեմբերի 15-ին հուշարձանը պատրաստել տարու հպատակով դրամարկղոր գերցրել են փողը, որն տոկոսներով արդեն դարձել է 229 ռուբլի 61 կոպեկ: Սակայն մի համեստ մահարձան պատրաստել տարու համար թիզ է լինում սույն գումարը, որն այս անգամ էլ հանձնելու են Երևանի պետական դրամարկղոր՝ № 2300 գրբոյլով, դարձայլ պահպանման և շահութաբերության հպատակով:

Բարգեն վարդապետի վերջին տեղեկությունից⁹ պարզվում է, որ վերոհիշյալ գումարը մինչև 1902 թվականի հոկտեմբերի 7-ու իր տոկոսներով դարձել է 257 ռուբլի, 46 կոպեկ: Դավիթեցու մահարձանը պատրաստել տարու համար դեռևս 1901 թվականի դիմել են Փարիզում ապրող հայունի քանդակագործ Անդրեաս Տեր-Մարտուրյանի: Վերջինս հանձն է առել կատարել սույն գործը և նոյն թվի դեկտեմբերի 12-ին հավաքված ընդհանուր գումարից պահանջել ուստացել է 50 ռուբլի կամսիկ մի գումար և խոստացել է մահարձանը պատրաստել վերջացնել մինչև 1902 թվականի գարնանը: Իսկ գումարի մնացած մասը՝ 157 ռուբլի 46 կոպեկը, 1902 թվականի ընթացքում նորի՝ ուղարկվել է Մարտուրյանին: Վերջինս նոյն թվի հուլիսի 15-ին Մայր Աթոռ է ուղարկում մահարձանի համագիծը և հավատիացնում, որ մինչև դեկտեմբեր ամիսը կպատրաստի: Սակայն արձանագործը իր դեկտեմբեր 13 թվակիր համակով հայտնել է, որ ինքը շատ զբաղված է եղել և չի կարողացել գործը վերջացնել: Իսկ մեկ որիշ համակով հանրից հուսադրում է պատվիրատուներին, որ առաջիկայում ամեն շանր կգործադրի մահարձանի գործը գործի բերելու համար: Սակայն, «Արարատ» ամսագրի 1904 թվականի 584 էջում նոյն հարցի առիթով լույս տեսած տեղեկության մեջ նկատվում է, որ Բարգեն վարդապետ Անդրելլանցը դժգոհություն է հայտնում արձանագործ Մարտուրյանին, որը դեռ 1904 թվականի հունիս ամիսը չի կատարել իր խոստումը:

Հայաստանի պետական արխիվում պահ-

պանված Անդրեաս Տեր-Մարտուրյանի մեկ նամակից¹⁰, որը գրել է Բարգեն վարդապետ Անդրելլանցին, պարզվում է, որ պատվիրատուները ցանկացել են: «Մարմարյա պատվանդանից և երկարյա վանդակներով շրջապատված» հուշարձան պատրաստել տալ, մինչդեռ ըստ արձանագործի «...միայն այդքանը կարծե ոչ պակաս քան 350 կամ 400 ռ., որի 175 ռ. ձուլարանին վճարելով կմնա 85 ռ., խնդրեմ ասացեք, ինչպես վարվեմ այդ դեպքում»:

Մեկ այլ համակում հուշարձանի ուշագման առիթով նա գրել է: «Ինչպես լսած կլինեք, Նալբանդյանի արձանը կպատրաստեմ... Առաքել պատմագրի գերեզմանը (հուշարձանը) կլինի պատրաստ հոկտեմբերին—ճիշտ այն ժամանակ պիտի պատրաստեմ Ռ. Պատկանյանի արձանի պատվանդանը ճեմարանի բակում, ուստի կիրճութեալ այդ մասին ներողամիտ լինեիք, որ չկարողացա որոշած ժամանակին պատրաստել»¹¹:

Սրամագործի 1905 թվականի մայիսի 22 թվակիր նամակից⁹ ուղղված Բարգեն վարդապետին, երևում է, որ նա վաղուց պատրաստել է հուշարձանի երկու տեսակի «նախագիծ» և ավելացնում է: «Կաղապարը շատ վաղուց պատրաստ է, հարկավոր է միայն ձևակերպել, կնշանակե աշխատեցեք ժողովել առաջի կամ երկրորդի «Նախագիծ» համար փող և այն ժամանակ շատ կարճ միջոցում կլինի պատրաստ, նոյնիսկ առանց իմ ներկայությամբ, որով վերջացած կլինի»¹²:

Ինչպես երևում է, համապատասխան գումարը չի հավաքվել և հուշարձանի գործը գլուխ չի եկել:

Այս տարի լրանում է Առաքել վարդապետ Դավիթեցու մահվան երեքհարյուրամյակը: Այս հիշարժան տարեթյունի կապակցությամբ Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհուրդը Վեհափառ Հայրապետի բարձր համագահությամբ գումարված ժողովում, որոշել էր Դավիթեցու գերեզմանի վրա կառուցել մի հուշարձան: Սակայն, հաշվի առնելով պատմագրի տապանաքարի հնությունը, որոշեց այն պահել անխաթար, բայց բարեկարգել շրջապատը, մի պատվանդան գետեղի տապանաքարի տակ և շուրջ մեկ մետրով այն գետենց բարձրացնելու: Այս բարեկարգման աշխատանքները արդեն կատարվել են:


ԱՐԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ

¹⁰ Հայաստանի Պետ. արխիվ, ֆոնդ № 57, Ցուց. 1, գ. 553, էջ 9:

¹¹ Նոյն տեղում, էջ 10—11:

¹² Նոյն տեղում, էջ 9:

⁹ Նոյն տեղում, 1904, էջ 584:



ԱՐԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՄԱՀՎԱՆ 300-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՌՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 16-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի ողջ միաբանությունը, Գերագոյն հոգևոր խորհրդի անդամները, վաճքի պաշտոնելությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը թափորով գնում են ս. Գայանե վաճքի մոտ գտնվող միաբանական գերեզմանատուն՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու և հոգեհանգստյան արարողությամբ ոգեկոչելու ժիշտի մեծ պատմագիր Առաքել վարդապետ Դավրիժեցու հիշատակը:

Հանդիսանանք նախագահում է փոխնարարապետ տ. Հովհաննես Առաքել Վահագիրյանը:

Հայրենասեր պատմիչի համեստ տապանաքարը ծածկվում է թարմ ծաղկելինչերով ճեմարանի ուսանողների կողմից: Հանդիսավոր և վեհ հնչում են հոգեհանգստյան երգերը, որոնք կատարում են հոգևոր ճեմարանի ուսանողները:

Մի պահ բոլորի հիշողության մեջ վերակենդանում է պայծառ անոնը Մայր Աթոռի երախտաշատ միաբանի, որը «ցողորմելի ծերութեան» հասակում, «ցաւագարմարմնով», թույլ ու դողդոշ ձեռքով ու տկարացած աշերով գրի առավ իր պատմությունը և փափագ հայտնեց իր սիրած ու

պաշտած ս. Էջմիածնի նվիրական հարկի տակ «ամփոփիլ ի հող»:

Հայրենասեր պատմիչի իղձը կատարվել է: Եվ այսօր էլ նա հանգչում է համեստ մի շիրմաքարի ներքո, հարկանությամբ մեր մշակույթի և պատմության այլ վաստակավորների, ս. Էջմիածնի հովանու ներքո, Արարատի հավերժական նայվածքի տակ:

Հոգեհանգստյան ավարտին բոլոր ներկաները վերադառնում են հոգևոր ճեմարանի հանդիսանությանց դահլիճ, որտեղ ժամը 11-ին սկսվում է Առաքել Վրդ. Դավրիժեցու հիշատակին նվիրված հանդիսանությամբ:


Հանդիսանությունը սկսվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագով:

Հոգևոր ճեմարանի ուսանողյական երգչախումբը կատարում է «Որք զարդարեցին» շարականը: Հանդիսանության բացումը կատարում է հոգևոր ճեմարանի տեսուց տ. Շնորհը Վրդ. Գաապարյանը՝ բարձր գեահաւելով Առաքել պատմիչի եկեղեցանվեր ու հայրենասիրական գործունեությունը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի մի խումբ ուսանողներ՝ Սամվել Պետրոսյանը, Վրեժ Նաջարյանը (Գ դասարան), Խաչիկ Խաչատրյանը, Կորիճ Ներսիսյանը (Բ լսա-



Հոգևոր ճեմարանի ուսանողները, տեսչի գլխավորությամբ, Առաքել վրդ. Գավրիիմեցու շիրմի մոտ



Առաքել վրդ. Գավրիիմեցու շիրիմը


րան) և Սեպար Գոնտրալյանը (Ա. լարան) ընթերցում են հատվածներ Առաքել Դավիթի մատուցումնեց: Ծեմարանի երգութեանը պատմություննեց: Ծեմարանի բաղ եմ աշխատամբը կատարում է՝ «Երևան քաղ եմ արդարան» և «Երևունի», «Եջ Միհածին ի Հօրե» և «Ծեմարանի քալերգ» խմբերգերը:

Ապա Առաքել Դավիթի ծեղանքի և գործունեության լայն լուսաբանությամբ և շահնեկան բանախառնությամբ հանդես է գալիս Բոգևոյ ճեմարանի ավագ դասախոս և «Եջմիածին» ամսագրի խմբագիր Արթուր Հատիկյանը: Հիշյալ բովանդակալից գեկուցումը տպագրված է «Եջմիածին» ամսագրի սովոր համարում (Էջ 22):

Առաքել վրդ. Դավիթի ծեղանքի հիշատակի՞ն նվիրված հանդեսի փակումը կատարում է

տ. Հուսիկ եպս. Սանթորյանը: Արբազան հայրը վեր է հանում Մայր Աթոռի լուսամիա ու հայրենասեր միաբանի կատարած եկեղեցանվեր ու հայրենասիրական գործունեությունը և կոչ է ամուս ուսանողությանը՝ իրենց ուսումնառության և ապա գործունեության հաջորդ տարիներում ընթանալ Առաքել վրդ. Դավիթի ծեղանքի եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեության պատվավոր ճանապարհով՝ լավագույն ծառապեր համար Մայր Աթոռին, հայ ժողովրդին և մեռներածնված մայր հայրենիքին:

Հանդեսը վերջանում է սրբազնի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայութեր»-ով:





ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 2-ին, շաբար.—Երեկոյան ժամը 19-ին Հոգենոր ճեմարանի դահլիճում դասախոս, աշխարհագրագետ Կամսար Ավետիսյանը բանախոսուեց Հյուսիսային հտալիայի նշանավոր երկու քաղաքների՝ Վենետիկի և Միլանի պատմական հուշարձանների մասին:

*
* *

Մայիսի 3-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 7-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի.

Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Շնորհք վրդ. Գասպարյանը: Պատարագի երգեցողությունը կատարեցին Հոգենոր ճեմարանի սաները:

Հավարտ ս. պատարագի հջման ս. սեղանի առաջ քարոզեց պատարագին Հայր սուրբը՝ «Երթայք աշխարհ ամենայն, և քարոզեց էք զաւետարանն ամենայն արարածոց: Ո՞ո Հաւատայ և մկրտիցի՝ կիցցէ, և որ ոչն Հաւատայ՝ զատապարտեցի» բնաբանով:

Քարոզից հետո տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք՝ ի հիշատակ Հայրապետական Աթոռի փոխադրությանը Սսից էջմիածին, 1441 թվականին:

*
* *

Մայիսի 10-ին, կիրակի.—Երկրորդ Մաղաքարդ.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Շնորհք վրդ. Գասպարյանը և քարոզում՝ «Տէր, կամիմք դժիսուս տեսանել» բնարանով:

*
* *

Մայիսի 17-ին, կիրակի.—Հոգեգալուսան Պենտեկոստէ.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում Հանդիսավոր ս. պատարագ է մատուցում փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Մահթուրյանը:

*
* *


Մայիսի 18-ին, Երկուշաբթի.—Առավոտյան ժամը 10-ին Հոգենոր ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ ամավերջի քննությունների բացման հանդիսությունը:

Արարողությունից հետո Հոգենոր ճեմարանի տեսուշ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը ուսանողությանը բարեմաղթեց Հաջողություն՝ լավագույն արդյունքներով փակելու Համար 1969—1970 ուսումնական տարին:

Բանավոր ու զրավոր ամավերջի քննությունները կտեսն մինչև մայիսի վերջերը:

*
* *

Մայիսի 24-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հակոբ քնն, Հակոբյանը:



ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեման հրավերով և Ադրբեջանի հայոց թեմակալ առաջնորդ տ. Հովհաննես Ասամուրյանի գլխավորությամբ Մայր Աթոռ այցելեց Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախումբը՝ թվով 25 հոգի: Երգչախումբը, որը կազմվել է 4—5 տարիներ առաջ, առաջնորդ պրազամին և տ. Գրիգոր ավագ քնն. Անանյանի շահթերով, գովելի աշխատանք է տանում իր գեղեցիկ և ներդաշնակ երգեցողությամբ՝ ի պայծառություն եկեղեցու և ի միմիշարություն հավատացյաների:

Սպահի 5-ին, Աշխարհանատրան կիրակին, Մայր տաճարը հորդում էր հավատացյաներով: Ս. պատարագին ներկա էին՝ Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը և բազմաթիվ արտասահմանյան ովաստավորներ: Պատարագի երգեցողությունը կատարեց Բաքվի երգչախումբը՝ շնորհալի դեկավանիանին: Ս. պատարագ մատուցեց Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ա-

վագերեց արժ. տ. Գրիգոր քնն. Անանյանը: «Հայր մեր»-ից առաջ գեղեցիկ ու հոգելիս քարոզ խունեց տ. Հովհաննես Ասամուրյանը՝ «Որ հաստատեցեր բանի գելեղեցի ք Քրիստոս» քնարանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդեց Վեհարանի հանդիսավորանց դասինը, որ և ըստունեց Բաքվի հայոց թեմի առաջնորդին և եկեղեցու երգեցիկ խմբին: Վեհափառ Հայրապետը իր բարձր գոհունակությունը հայտնեց ս. պատարագի երգեցողության շնորհալի կատարման համար և օրինեց երգչախմբի անդամների անձնվեր աշխատանքը՝ հայ շարականի և երգի տարածման համար: Հայոց Հայրապետը նորանոր հաջողություններ մաղթեց երգեցիկ խմբի անդամներին և դեկավանին: Երգչախմբի անդամներն աշահամբուլով ստացան օրինությունը Վեհափառ Հայրապետի:

Սպահի 10—13-ը երգչախումբը եղավ Հայրապետի տարբեր վանքերում և տեսար-



Բարիկ հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արքացրկ բունըքը Մայր տաճարում


Ժան վայրերում, ծանրթացավ հայ մշակութային կյանքին:

Սպարհի 11-ի երեխոյան երգչախոսմբը Ա. Սպենդիարյանի ամվան պետական ակադեմիական թատրոնի դահլիճում ներկա գտնվեց «Անոնց» օպերայի ներկայացմանը: Հյուրերը եղան էրերունիոն, Գեղարդում, Աշտարակում և Սարդարապատում, որ ծանրթացան հայ ժողովրդի պատմական անցյալին և դիտեցին աննկուն հավատքի ու հարատևման մեջ կորուները:

Սպարհի 14-ի առավոտյան երգչախոսմբը, հրաժեշտ առնելով Մայր Աթոռից, վերադարձ Բարու՝ լավագույն տպափորություններով և հուշերով թե՛ ս. Էջմիածնից և թե՛ քաղաքամայր Երևանից:

Հանուն «Էջմիածնի» ամսագրի խմբագրության, շնորհավորում ենք Բարիկ հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախոս Խմբին, նրա գեղարվեստական դեկանարին և մայթում նորանոր հաջողորդուներ՝ ի փառ հայ հոգևոր երգի զարգացման:





**ՀԱՆԳԻՍ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՇԱՎԱՐԾ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՅՉՈՒՄՁՅԱՆԻ
(1908—1970)**



Սովորական պատճենի ապրիլի 20-ին Մոհնութեալիքի բաղադրում (Հայութային Ամերիկա), իր հարազատների հարկի ներքո, 62 տարեկան

հասակում վախճանվեց Մայր Աթոռոյի միաբան տ. Շավարշ եպո. Գոյցումճյանը:

Լուսահոգի տ. Շավարշ սրբազնը (ավագանի անունով Մատթեոս) ծնվել է 1908 թվականին Կիլիկիայի Հաճըն քաղաքում: Դեռևս փոքր հասակից նա ականատես է եղել և իր մարմնի վրա գգացել համաշխարհային առաջին պատերազմի ծանր արհավիրքները, տեսել է հայրենի Հաճըն քաղաքի ավերն ու կոտորածը: Նա իր ծնողների՝ Գալոսան Գոյցումճյանի և Երանուի Քյոշկերյանի, ինչպես նաև իրենց ողջ ընտանիքի հետ դեգերել է գաղթի ու աքտորի ճանապարհներում, տեսել Դեյր Էլ-Զորը, ապա, բախտի բերմամբ մասից ազատված, բազմաթիվ հայ գաղթականների հետ միասին ընակություն հաստատել Դամակուսում: Այսուղ իր առաջին կրթությունն է ստանում Մատթեոսը, ապա ստվորում նաև տեղի անգիտական կողեզրում:

1924 թվականին նա մեկնում է Երուսաղեմ և ընդունվում տեղի Ժառանգավորաց վարժարանը, որտեղ աշակերտում է երջանկանիշատակ տ. Եղիշե արքեպ. Դուրյանին և նոգելոյս տ. Բարգեն եպո. Կյուլեսերյանին: 1930 թվականին ավարտում է ընծայարանի սարանական բաժինը և ձեռնադրվում կուսակրոն քահանա:

1931 թվականին երիտասարդ Շավարշ վարդապետը Կյույգենլյան հիմնադրամով, վանքի ղեկավարության որոշումով մեկնում

Է Լոնդոն և Բելստոն Կինգգ կոլեջի կրոնական դասընթացներին: 1933 թվականին նա վերադառնում է Երևանում և նվիրվում վահական և կրթական աշխատանքների: Երկար տարիներ նա ձեռնիստորեն վարում է բոգուր հովվությունը Հայֆայի հայ համայնքի:

1949 թվականին լուսահոգի Տ. Գարեգին Վեհի համաձայնությամբ նա հշանակվել է Դամասկոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ: Նա հոգլոր-ազգային մեծ աշխատացում է առաջ բերում Դամասկոսի ինչպես Եկեղեցական-հասարակական, այնպես էլ կրթական ու մշակութային կյանքում, վայելում իր ժողովրդի մերն ու համակրաքը և ապա թեմի պատգամավորական ժողովի կողմից ընտրվում Դամասկոսի թեմի առաջնորդ:

Ծավարշ վարդապետը ստացին անգամ մայր հայրենիքում և ս. Էջմիածնում լինում է 1954 թվականին՝ Նորին Ս. Օծություն Տ. Գևորգ Զ.-ի մահվան առթիվ: Խոկ երկրորդ անգամ հայրենիք է այցելում հաջորդ՝ 1955 թվականի հոկտեմբերին, որպես իր թեմի պատգամավոր՝ մասնակցելու ազգային-Եկեղեցական ժողովի և Տ. Տ. Վազգեն Ակադությունի ընտրությանը:

Նոյն թվականի հոկտեմբերի 23-ին Հայոց

Հայրապետը, բարձր գնահատելով տ. Ծավարշ վարդապետի ազգային-Եկեղեցական գործունեությունը, նրան ձեռնադրում է Եպիսկոպոս՝ միջնորդությամբ և խնդրանքով իր թեմի ազգային-Եկեղեցական մարմինների:

Ծավարշ սրբազնը երկար տարիներ ձեռնիստորեն և մեծ արդյունավորությամբ պաշտօնավարում է Դամասկոսի թեմում, սերտ համագործակցությամբ և սիրով իր ժողովրդի և ազգային մարմինների: Սակայն վերջին տարիներս արդեն քայլավել էր նրա առողջությունը: Այդ իսկ պատճառով 1968 թվականի ամռանը մեկնում է Մոնտեվիդեո, իր հարազանների մոտ, որտեղ և կնքում է իր մահկանացուն:

Հանգույցալ սրբազնը եղել է նաև գիտության մարդ, որի գոշին են պատկանում մի շարք կրոնագիտական, պատմական, բանահրական և այլ բնույթի արժեքավոր ուսումնասիրություններ:

Ավելի քան 40 տարի է, ինչ Ծավարշ սրբազնը անհամանչ սիրով և մեծ հավատարմությամբ ծառայել է հայ Եկեղեցուն, Մայր Աթոռ ս. Էջմիածնին, հայ ժողովրդին, հայոց հայրենիքին:

«Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի»:





թանգարական պատճենությունների համար առաջին մասը ուղարկվել է Սահմանադրության կողմանց նույնագույն պահպանության տակ և առաջին մասը՝ ուղարկած ըստ պահպանության առաջին մասի գործադրության վեհական գործադրության համար պահպան կատարության մեջ ըստ պահպանության առաջին մասի պահպանության առաջին մասի գործադրության վեհական գործադրության մեջ պահպան կատարության մեջ:

O. Ա. ԵԳԱՆՅԱՆ

ԵՐԵԶԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց ձեռագրական հայքարածոնի բաղադրությունում մասերից մեկն է նաև Երեշակի ս. Կարապետի վանքի հայերեն ձեռագրերի հավաքածուն, որը սկզբնավորվել է ԺԴ դարի ութունական թվականներին՝ վանքի հիմնադրման հետ միաժամանակ:

Թե ինչպիսի ձեռագրեր է բովանդակել հավաքածուն և քանակական ինչպիսի փոփոխություններ է կրել իր ավելի քան հինգհարյուրամյա գոլության ընթացքում, դժվար է ասել, որովհետև չեն եղել կամ չեն պահպանվել համապատասխան ցանկեր ու ցուցակներ:

Վանքի ձեռագրերի բովանդակության և թվաքանակի մասին այսօր գտաղիքար կարող ենք կազմել միայն Արհստակեն Սեղրակյանի և Մեսրոպ Սմբատյանից կազմած ցանկերի միջոցով, որոնց և անդրադառնություններ ստորև:

1. Արհստակեն վրդ. Սեղրակյան, ՀՅՈՒԹԻՆՔ հայրենեաց ի գաւառին Երեշակա, Վաղարշապատ, 1872.—Ս. Սեղրակյանը իր սույն աշխատության մեջ՝ «Ձեռագիր մատենական վանից» ենթախտագրի տակ (Եջ

26—33) անդրադառնապով վանքի գրատանը եղած ձեռագրերին, գրում է. «Չիք տարակոյս, որ այս մենատանն պիտի հարուստ գրադարան ունեցած լինի... Դժբախտաբար... այժմու ունեցածներն միայն քանի մի հատ ձեռագիր Սատկածաշունչ և Ավետարան են...»: Այնուհետև Ս. Սեղրակյանը Ս.—Թ թվահամարների ներք համառոտ նկարագրությամբ տալիս է եղած գրչագրերից 9-ի պատկերը՝ 4 «Աւետարան» (№№ Ա—Դ), 3 «Աստուածաշունչ» (№№ Ե—Հ), 1 «Նարեկ» (№ Լ) և 1 «Մաշտոց» (№ Թ):

Արձանագրված այդ 9 ձեռագրերից 8-ը (№№ Ա, Գ—Թ) այսօր որոշակիորեն գրտելիքում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս տախտակ Ա): Բացակայում է № Բ ձեռագիրը, որի նկարագրությունը անփոփոխ կերպով բերում ենք ստորև.

№ Բ. «Աւետարան փոքրադիր, ամբողջ գելազարդ պատկերօր, ընտիր գրչագիր՝ գրեալ ի մագաղաթի: Ունի ի վերջին լիշտակարան ստացողին-Ծոոթեցի Խօշենց Մկրտչի որդի Մահստափ Հայրապետին, այլ՝ անբուական»:

Ա. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԵՐՆՁԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ
ԶԵՐԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՍՄԱՐՆԵՐԻ
(Ըստ Ա. Սեղրակյանի 1872 թ. ցուցակի)

1872թ.	Մատենադարան		1872թ.	Մատենադարան	
	«Գևորգյան»	Արդի		«Գևորգյան»	Արդի
Ա	—	4276	Զ	784	2732
Բ	—	—	Է	18	2587
Գ	789	3393	Ը	—	4272
Դ	785	5033	Թ	794	3035
Ե	17	2669			

2. Արխատակէս վրդ. Սեղրակյան, Ցուցակ զարդում Ս. Կարապետի վանից Երնջակայ, 1892 (տես Մ. Սմբատյանցի «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շըքակայից նորա», Տփիմիս, 1904, էջ 115).— Այս անժիական գույքացուցակը կազմված է 1892 թվականի նոյեմբերի 28-ին՝ ս. Կարապետի վանքի եկեղեցական սրբությունները հշմիածին տեղափոխելու կապացությամբ: Այդ ցուցակում № 117-ի տակ արձանագրված է 1 «Աստուճաշունչ», № 119-ի տակ՝ 2 «Աւետարան» (պարմանականորեն №№ 119ա, 119բ), № 129-ի տակ՝ 1 «Գիրք զանազան պատմութեանց», № 135-ի տակ՝ 1 «Ժողովածու» և № 156-ի տակ՝ 1 «Մաշտոց», ընդամենը թվով 6 ձեռագիր, որոնցից 2-ը (№№ 117, 156) արձանագրված են «Հնութիւնը հայրենեաց»-ի մեջ (№№ Զ, Թ), իսկ մնացած 4-ը (№№ 119ա, 119բ, 129, 135)՝ ոչ: Այդ 6 ձեռագրերն ել այսօր առկա են Մաշտոցի անվան Մատենադարանում (տես՝ տախտակ Բ):

Բ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԵՐՆՁԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ
ԶԵՐԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՍՄԱՐՆԵՐԻ
(Ըստ Ա. Սեղրակյանի 1892 թ. «Ցուցակ զարդում»-ի)

Ա. Սեղ- րակյան	Մատենա- դարան		Ա. Սեղ- րակյան	Մատենա- դարան	
	«Գևորգյ- յան»	Արդի		«Գև- որգյ- յան»	Արդի
1898	1872		1892	1872	
117	Զ	784	2732	129	—
119ա	—	786	3328	135	—
119բ	—	787	3529	156	Թ

Այսպիսով, Արխատակէս վրդ. Սեղրակյանը իր 1872 և 1892 թթ. գույգ ցուցակներում միասին արձանագրել է 13 ձեռագիր, որոնցից Մաշտոցի անվան Մատենադարանում են գտնվում 12-ը:

3. Մերուու արքեպոս. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շըքակայից նորա, Տփիմիս, 1904.—Մ. Սմբատյանցը իր սույն գրքում «Աղքատ մատենադարան Սուրբ Կարապետի վանից» ենթախորագիր տակ (էջ 112—118) խուլու վանքի գրատան մասին, ասում է. «...շատ աղքատ է վանքին գրադարանը և հազիվ 4 ձեռագիր գիրք է մնացել...»: Այսուհետև Ա.—Դ թվահամարների ներքո նկարագրում է այդ 4 ձեռագրերը՝ 1 «Աւետարան» (№ Ա), 1 «Յայսմատուրք» (№ Բ), 1 «Նարեկ» (№ Գ) և 1 «Գիրք բնաբանից քարոզիչ վարդապետաց...» (№ Դ): Այս 4 ձեռագրերից 2-ը (№№ Ա, Գ) նկարագրված է Սեղրակյանի «Հնութիւնը հայրենեաց»-ի մեջ (№№ Ա, Ը), իսկ մյուս 2-ը (№№ Բ, Դ)՝ ոչ: Նկարագրված 4 ձեռագրերից 3-ը (№№ Ա, Գ, Դ) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տես՝ տախտակ Գ, Ի պյունակ): Բացակայում է № Բ ձեռագիրը, որի նկարագրությունը բերում ենք ստորև.

№ Բ. «Յայսմատուրք գրչեայ, կիսամաշ, որոյ ստացողն է Տեր Հապիկ քահանայն և Խաւայ Յիսակին, որը և ՌՃԿԵ (1716) թուին գելել է Մահլազանցի տիրացու Գեորգին»:

Վերոհիշյալ 4 ձեռագրերը կրկին աճամաւ Մ. Սմբատյանցը արձանագրել է «Սուրբ Կարապետի վանքի այժմեան եկեղեցական գիւղանքն են» ենթախորագիր տակ (էջ 165—168), որ դրանք գրադացնում են 2, 6, 20 և 23 թվահամարները (տես՝ տախտակ Գ, Ի պյունակ): Այստեղ նկատենք, որ այս ցանկում № 6-ի տակ՝ «Գիրք բնաբանից քարոզիչ վարդապետաց»-ի փոխարեն, որը կիսամապատասխաներ նախորդ ցանկի № Դ-ին, հշված է «Գիրք զանազան պատմութեանց», մի բան, որ բացարձակ թյուրիմացնում է, քանի որ այն (տես՝ Ա. Սեղրակյանի «Ցուցակ զարդում», № 129), հենց իր՝ Մ. Սմբատյանցի վկայությամբ 1892 թվականին տարվել էր հշմիածին:

Նոյն 4 ձեռագրերից 3-ը (տես՝ տախտակ Գ, պյունակ Ի Ա, Գ, Դ) երրորդ աճամաւ Մ. Սմբատյանցը արձանագրել է «Յիշատակարանը յիշեալ ձեռագրաց...» ենթախորանում (էջ 174—316), առանց ենթական թվահամարների: Այդ 3 ձեռագրերը պարմանականորեն նշանակում ենք [Ա], [Բ], [Գ], [Ա]—էջ 191, [Բ]—էջ 192, [Գ]—էջ

192—193. տե՛ս տախտակ Գ, III պունակ):

Նոյն 4 ձեռագրերը չորրորդ անգամը լինելով, Մ. Սմբատյանցը արձանագրել է «Ցուցակ լիշտակարանաց ձեռագիր մատենից...» ընդհանուր տախտակի մեջ (տե՛ս 316—317 էջերի միջև եղած ներդիրը՝ 11, 92, 169 և 184 թվահամարների հերքու (տե՛ս տախտակ Գ, IV պունակ):

Բացի այս 4 ձեռագրերից, որոնք 1897 թվականին գտնվում էին ա. Կարապետի վանքի գրասանը, նոյն տեղում № 71-ի տակ Մ. Սմբատյանցը արձանագրել է ևս 1 «Անտարան», որը չի նշված Սեղրակյանի զույգ ցուցակներում (արդի № 3145): Այդ ձեռագիրը 1898 թվականին նվիրագրելիքած է Խորհման Հայրիկին՝ նրա օճաման հանդեսի ժամանակ մեծ հավանականությամբ հենց վանահայր Սեղրակյանի ձեռքով (տե՛ս տախտակ Գ, IV պունակ):

Այս բոլորից դուրս, Մ. Սմբատյանցը իր գրքում խոսում է նաև Երնջակի և Կարապետի վանքի Յ Աստվածաշնչերի մասին: Այսպես:

— Էջ 115-ում տարբ Ա. Սեղրակյանի կողմից 1893 թվականին ըստ «Ցուցակ զարդուց»-ի էջմիածին փոխադրված 6 ձեռագրերի ցանկը (տե՛ս տախտակ Բ) և № 117 ձեռագիրը (արդի № 2732) համարելով առաջին Աստվածաշունչը, գրում է. «Այս վանքից մի ձեռագիր Աստվածաշունչ ևս տարել են էջմիածին՝ հրամանավ... Գերոգ կաթողիկոսի 1876 թվին...»: Նշված Աստվածաշունչը Ա. Սեղրակյանի «Հնոյթինք հայրենեաց»-ի № Ե ձեռագիրը է (արդի № 2669): Այս նոյն Աստվածաշնչի մասին Մ. Սմբատյանցը խոսում է նաև գրքի 339-րդ էջում (№ Բ) և 347—348 էջերում՝ առանց թվահամարների հիշտակման:

— Էջ 117-ում Մ. Սմբատյանցը անդրադառնալով Ա. Սեղրակյանի «Հնոյթինք հայրենեաց»-ի № 2 ձեռագրին, այն համարում է երրորդ Աստվածաշունչը և ապելացնում. «Քայլ այս երրորդ Աստվածաշունչը չերևի ի միջի...»: Սմբատյանցը լոյորիմացության մեջ է, որովհետև № 2 ձեռագիրը «Ցուցակ զարդուց»-ի նոյն № 117 ձեռագիրը է (արդի № 2732): Իրականում թվով երրորդ Աստվածաշունչը «Հնոյթինք հայրենեաց»-ի № Ե ձեռագիրն է (արդի 2587), որը նոյնպես 1876 թվականին էջմիածին տարվան լինելով, չի մտել և չեր կարող մտնել «Ցուցակ զարդուց»-ի մեջ:

Նշված երեք Աստվածաշնչերը՝ նին և նոր թվահամարների մեր կազմած համեմատական տախտակում լոյորությամբ արտահայտելու համար (տե՛ս տախտակ Գ, V պունակ), պայմանականորեն նշանակում ենք

[Ա], [Բ], [Գ] թվահամարներով ([Ա]—2669, [Բ]—2732, [Գ]—2587):

Այսպիսով, Մ. Սմբատյանցը Երնջակի և Կարապետի վանքի գրասան ձեռագրերից իր գրքում արձանագրել է 8-ը, որոնցից 4-ը (տե՛ս տախտակ Գ, պունակ I, II, III և IV) 1897 թվականին գտնվում էին տեղում, իսկ մնացած 4-ը՝ էջմիածնում: Այդ 8 ձեռագրերից 5-ը արձանագրված են Ա. Սեղրակյանի գույգ ցուցակներում, իսկ մնացած 3-ը՝ ոչ:

Գ. ՀԱՄԵՐԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԵՐՆՋԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ
ԶԵՐԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ
(Հայ Մ. Սմբատյանցի «Երնջակ»-ի)

«ԵՐՆՋԱԿ»	ՄԵՂՐԱԿ- ՀԱՆ	ՄԱՏԵՆԱԴ- ՐԱՆ	Արդի	
			ՀԱՅ 112—118	ՀԱՅ 165—168
Հ. 20 [Ա]	11	—	Հ. 20 [Ա]	169
Բ. 23 [Բ]	184	—	Բ. 23 [Բ]	191—193
Գ. 6 [Գ]	92	—	Գ. 6 [Գ]	316—317
—	71	—	—	ՀԱՅՐԱԳՐ
—	—	[Ա]	Հ. 115, 117	339, 347
—	—	Բ.	1872	1892
—	—	Չ.	—	—
—	—	Զ.	852	3145
—	—	Դ.	17	2669
—	—	Ղ.	784	2732
—	—	Ա.	18	2587

Այսպիսով, Ա. Սեղրակյանն ու Մ. Սմբատյանցը միասին Երնջակի և Կարապետի վանքում տեսել և արձանագրել են ընդհամեն 16 ձեռագիր, որոնցից 14-ը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս տախտակ Դ), իսկ մնացած 2-ի որը լինելով առաջմ մեզ հայտնի չէ: Ամփոփելու դեպքում կունենանք հետևյալ պատկերը.

Ն.Հ. Ը/Կ	Բառ ցուցակի	Քանակ	Առկա	Բացա- կա
1.	Բառ «Հնոյթինք հայրենեաց»-ի բնականաց»-ի	9	8	1
2.	Հավելյալ «Ցուցակ զարդուց»-ում	4	4	—
3.	Հավելյալ «ԵՐՆՋԱԿ»-ում	3	2	1
Բնդամենը		16	14	2

Սույա 14 ձեռագրերը (տե՛ս տախտակ Դ)

Մատենադարան են մոտք գործն 1876—

1910 թվականների ընթացքում, այդ թվում

2-ը (№№ 2587, 2669)՝ 1876-ին Գևորգ Դ-ի

կարգադրությամբ, 6-ը (№№ 2732, 3035,

3037, 3528, 3529, 3531)՝ 1893-ին ըստ 1892

թվականին կազմված «Յուղակ զարդուց»-ի,

2-ը (№№ 3033, 3145)՝ նույնպես 1893-ին,

բայց «Յուղակ զարդուց»-ից անկախ, իսկ

մնացած 3-ը (№№ 4272, 4276, 4421)՝

1910-ին Մ. Միքատյանցի միջոցով:

Ստորև բերվող տախտակը ամփոփում է

ոլոշ շարադրանքը (տե՛ս տախտակ Դ):

Դ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԵՐԵԶԱԿԻ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ
ԶԵՐԱԳՐԵՐԻ ՀԵԿ ԵՎ ԿՈՐ
ԹՎԱՀԱՍՄԱՐԵՐԻ

Մատենադարանուն	Մեղքական	Մժբառոյանց - «Երնջակ»
Արդի	«Կերպարան» Հայութանձու	«Հնորին թիւն» Հայութանցք
2587	18	կ
2669	17	կ
2732	784	2 117
3033	785	կ
3035	794	թ 156
3037	797	135
3145	852	—
3393	789	կ
3528	786	119ա
3529	787	119թ
3531	792	129
4272	—	թ
4276	—	կ
4421	—	թ
—	—	թ

Լզ 112—117 Լ 163—168 Լ 191—193 ԼV 316—317 Լ 115, 117, 348

Լզ 112—117 Լ 163—168 Լ 191—193 ԼV 316—317 Լ 115, 117, 348





ՅՈՒԹԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ

№ 247

ԸՆՐԱԿՆՈՑ

Թերթերը՝ 36:—Պրակները՝ 11, բոլորը պակասավոր են և զանազան չափսի: Պրակները քաղկացած են նետսկայ թերթերից, Բ՝ 4, ԺԱ՝ 6, Դ և Զ՝ 7, Ա, Ե, Ը և Ծ՝ 3, Գ, Է և Թ՝ 10 թերթից:—**Մեծությունը՝** 14,5×12×3,7 սմ:—**Նյութը՝** դեղնած և խունացած ցեցակեր թուլլթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, քայլաված, կազմի կոճակի կաշին պոլիմեր է, իսկ բռնիշներն ել ընկեր են:—**Պահպանակները՝** սկզբում կա մի թերթ դեղնած, խունացած և պատուած մագաղաթ, Ը—Թդարերի:—**Գիրը՝** երկաթագիր:—**Տեքստը՝** Ավելարանից: Վերջում կամ երկու թերթ դեղնած մագաղաթ, պահմանեստ:—**Նախնական գիրը՝** երկաթագիր:—**Ժամանակը՝** Ը—Ժ դարերի, նետագայում շնչված և տերսաղ սրբված է: Սույն մագաղաթի մի էջում միայն կա գրություն: ԺԶ դարից, տեքստը շարակնոցից: Սույն էջը հանդիսանում է շարակնոցի վերջին էջը, որի վերջին հինգ տողերը ներկայացնում են այդ ձեռնադրի (ԺԶ դարի) նիշատակարանը, որն նետսկալն է:—«Կազմեցա շարակնոց ձեռամբ որնայմել և մնուեա նոգոյ նրբիանու հեղիս ի կրօնատրաց, ով սուրբ ընթերցողը յիման արժանի առնելք զիս և Աստուած զնեա յիշեա, ամէն. թվ. ԶՀ» (1522 թ.):—**Վիճակը՝** անբավարար, ամենուրեք պակաս թերթեր կան, սկզբից և վերջից թերթի:—**Գրությունը՝** միասպոտու:—**Պատարկ թթերի՝** չկան:—**Տողերը՝** 31:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** մանր բոլորգիր:—**Զարդարությունը՝** ներարկած է հասարակ ոճով: Զե-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից և 1970 թվականի № Դ-ից:

ուգիրն ունի մի հատ խորան (թ. 44ա), երկու հատ գլխազարդ (թ. թ. 33ա և 77ա), ինչպես նաև բազմաթիվ թոշնագրեր և զարդագրեր, ծառեր և թոշուներ, լուսանցազարդին և գմբեթներ: Զեռագիրն ունի նաև մի հատ խաչ (թ. 80ա), մի հատ զոյտ առաքալներ (թ. 9ա), մի հատ մարդկային դիմագծով զարդագրեր (թ. թ. 17թ և 63թ):—**Գրիշը՝** Ասորել Եսիսկոպոս:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Մաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԷ—ԺԸ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Մանություն՝** սույն ձեռագիրն ստացված է նվեր արտասահմանից Վեհափառ Հայրապետի միջոցով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 32թ.—Զանարծան ծրողս զԱսորել Եսիսկոպոս վաս սիրոյն Քրիստոսի յաղաթս յիշեցէք և Աստուած զնեա յիշէ:

Թ. 43ա.—...քարեխաւաստիթեամբ ողորմեայ անարծան գրչիս Ասորել Եսիսկոպոսի և հոգնոր մար իմոյ՝ Մինրոր ապաշխարողի ի Քրիստոս միս անգամ գալստեանն ամէն:

Թ. 84ա.—Կասըն սիրոյ Քրիստոսի զԱսորել Եսիսկոպոսս զգագագրող տափս և մայրն իմ զօանիթիք ի Քրիստոս յաղաթս յիշեցէք:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 43թ.—Այսար բան Աստուած ի երկրից իշեալ ի Վաղարշարար քաղաքէն տաճար հաստատեաց: Իշատակ է տիրացու Օվանէսին:

Թ. 51ա.—(Կա մի փորբիկ կնիք, որ անընթելի է):

Թ. 52թ.—Դանիէլ:

Թ. 53ա.—Գեորգ, Դանիէլ, Գեորգ, Գեոր:

№ 248
ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Թերթերը՝ 170:—Պրակմերը՝ 15, լուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ ժեւ պրակը, որ 2 թերթից է միայն:—Մեծությունը՝ $14,2 \times 11,5 \times 2,7$ սմ:—Նյութը՝ դեղնած, դիմացկուն թուղթ:—Կազմը՝ լաթակազմ ստվարաթուղթ:—Պահպանակները՝ վերջում կա մի թերթ հասարակ թուղթ:—Վիճակը՝ շատ լավ:—Գրությունը՝ միապղու:—Քատարկ թղթերը՝ 1:—Տողերը՝ 20:—Գծումները՝ ճշշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Զարդարություն՝ ամբողջ ձեռագրում կա միայն մեկական հասարակ գլխազարդ, լուսանցազարդ և թոշնագիր (թ. 3ա):—Գրիչը՝ Մեծատոր դպիր:—Պատվիրատուն՝ անհայտ:—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1688 թ.:—Վայրը՝ Սրբութավաստանի Խորձունք համանգի Կելի (Քղի) զյուլաքաղաք:—Մանոթություն՝ Մայր Աթոռու Շեռագրատունը ստացել է նվեր արտասահմանից Վեհափառ Հայրապետի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.—Ամենազօր թագաւորին մերոյ Յիսուսի Քրիստոսի:...
Թ. 6ա.—Սուածին կանոն վասն հաւատոյ:—
Թ. 11բ.—Խրատ վասն մկրտութեան:—
Թ. 16բ.—Վասն բարիոք սնուցանել զմանուն:—
Թ. 19ա.—Յաղագ պասկի և խրատ վասն ամսունութեան:

Թ. 26ա.—Յաղագ շնորթեան պոռնկութեան:—
Թ. 29բ.—Յաղագ գողորթեան:—
Թ. 31բ.—Վասն երդման կանոն:—
Թ. 34ա.—Վասն սոստ ասելոյ և վկանելոյ:—
Թ. 36բ.—Կանոն վասն լիշրնցաց և նախողութեան:—
Թ. 41ա.—Կանոն վասն ատելութեան:—
Թ. 44բ.—Կանոն վասն սիրյոյ:—
Թ. 48բ.—Կանոն վասն աղօրից մարդկան:—
Թ. 54բ.—Կանոն վասն խոստվանութեան:—
Թ. 58բ.—Կանոն վասն հաղորդութեան:—
Թ. 61բ.—Կանոն վասն ողորմութեան:—
Թ. 65բ.—Վասն պահոց:—
Թ. 68բ.—Վասն շուանելոյ գուսան ի կնունքն:—
Թ. 70ա.—Վասն անդարձ առնելոյ:—
Թ. 70բ.—Վասն ոչ առնելոյ սորք սիրելնաց ի վերայ մեռելոց:—
Թ. 72բ.—Վասն խոստվանութեան:—

Թ. 80ա.—Հարցմունք տիեզերալոյն վարդապետին ստացեալ պարզ բանի լաղագ համբերութեան:—
Թ. 85բ.—Կիրակէին պատմութին:—
Թ. 88բ.—Վասն մկրտութեան:—
Թ. 92ա.—Հարցմունք Սորք Աստուածածին և պատասխանիք Միքայէլ հրեշտակին:—
Թ. 105ա.—Հարցմունք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ կանգնեցաւ յերկինց յերկինս ի տաճարն:—
Թ. 113բ.—Հարցմունք երանելոյ Եբրեմի ասացեալ վասն պահելոյ կիրակէին:—
Թ. 119ա.—Քարոզ ի բան Սոլոմոնի որ ասէ որ ուղրմի աղքատին փոխ տայ Աստուծոյ:

Թ. 135ր.—Քարոզ ի բան օրինացն որ ասէ պատեայ զմայր բռ և զմայր զի թեզ քարի եղիցի երկիր:—
Թ. 142ա.—Կանոնը Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի:—
Թ. 155ա.—Վասն գալատեան Ներին Սրբոյն Ներսէս Բայրոց:

Թ. 162ա.—Մահմանը կանոնիս Սորք Հարցն:—
Թ. 162բ.—Ցունեն կանոնաց:—
Թ. 164ա.—Ցունանու Մամդավունոյ կանոնըն է:—
Թ. 164բ.—Խրատը արարաց Պատարագի:

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒՍՆԵՐ

Թ. 2ա.—Օրինակ Հայր Սորք Աստուած ճշմարիտ. հան յաւարտ ողորմած Աստուած, զգործըս ձեռաց իմոց ուղիղ արա ի մեզ Տէր, զգործս ձեռաց իմոց յաջողեան ի մեզ:

Թ. 79բ.—Քրիստոս Աստուած բռ Սորքը ծնողին բարեխօսութեամբ ողորմեա ստացողի գրոցս սուտ անուն որ չեմ լիշման:

Թ. 170ր.—Գրեցա կանոնագիրս երկիրն Կելի որ Խորձիւնի ասի, ի թվին ՈՌԵՒ (1688 թ.) ամին, ձեռամբ յոցնամեղ և անպիտան մեղսաւէր Մեծատոր դպիրն որ անունս ունիմ և գործս ոչ: Ով եղբայրը մի մեղադրէր յայսմ տառիս տղամանաց, զի օրինակն եղծեալ և ապականեալ եր զի հազի և ուժով սակաւ կարացար բանն ի բանէն մեկնել, մեք այլ մտաց սակաւ էաք, վերջումն եղև տառիս յայս, ամէն: Հայր մեր:

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԽՅՈՒՆԵՐ

(Սկզբի կազմի կոնակում).

Ճռա Ածո ձա.

Թ. 1ա.—ԱԲ այբն Աստուծոյ է օրինակու:—
Թորոս շահրոտն:

№ 249
ԸԱՐԱԿՈՒՑ

Թերթերը՝ 269:—Պրակմերը՝ 25, լուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ նետկալ պրակները. լ՝ 7, ջ և իջ՝ 8, է, լ, ժԱ, ժԱ, ժԹ, ժԶ, ի և իԱ՝ 10, ժէ և իԻ՝ 11 թերթից են:—Մեծությունը՝ $13,1 \times 9,2 \times 5,5$ սմ:—Նյութը՝ դեղնած և խոնաց թուղթ:—
Կազմը՝ չունի:—Պահպանակները՝ չունի:—Վիճակը՝ քայլաված և որոշ թերթեր պոկված, իսկ որիշներ պատոված: Ակրից ուղիղ հինգ պրակ պակասունէ, իսկ միջից և վերջից եւ թերթ է:—Գրությունը՝ միապղու:—Քատարկ թղթերը՝ չկան: Տողերը՝ 22:—
Գծումները՝ ճշշումով:—Գիրը՝ բոլորգիր:—Զարդարություն՝ ձեռագրին ունի հասարակ ոճով նկարված մի հատ կիսախորան (թ. 53բ), վեց հատ գլխազարդ և բազմաթիվ լուսանցազարդեր, գմբեթներ և խաչեր, ծառեր և թոշուններ, զարդագրեր և թոշնագրեր:—Գրիչը՝ Հովհաննես արելա:—Պատվիրատուն՝ անհայտ:—Մաղկողը՝ անհայտ:—Ժամանակը՝ 1503 թ.:—Վայրը՝ Սպեր գալափոհ Գանձագրակ անապատի ս. Աստվածածին վաճր:—Մանոթություն՝ սոյն ձե-

ուազիրն ստացված է նվեր Ամերիկայի Միացյալ Նահանգներից Վեհափառ Հայրապետի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Սույն շաբակնոցը ամբողջությամբ գրված է հայկական հին խազերով):

Թ. թ. 1ա—248ր.—Շաբակնոց:

Թ. թ. 250ա—269ր.—Տանացոյց, և աւճացոյց, և հազգնացոյց, և գրահանք զոր արարեալ Սրբուն Սահմակա:

ՀԻԾԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 230ա.—Զմեղաւոր ծրողս Յովիաննէս ստուանց արելաւս մի մոռանայք:

Թ. 249ա.—Փառք ամենասուր Երրորդութեանն և մի սասուածոյթեանն Հայր և Որդոյ և Հոգոյն արքոյ, այժմ և միշտ և յափտեանս: Հոգոյն Սըրբոյ պարգևողի զայս երգահանութեան յանուն նորին տուեալ որդոյ ադամածնի, որ ցանկացաւ եղան այս երգարանի, (այսուղ երկու և կես տող բաց է թողնը ված պատվիրատուի անունը գրելու հետագայում, սակայն ոչինչ չի գրված):

Գրել զայս մեջամած գրչի որ Յոհաննէս ստուանց արելա կոչի, որ ես զանուն միայն առի գործաւը ի լի եմ աղտեղի խոցեալ նետիր ստուանայի:

Գրեցա գիրքս որ շաբակնոց կոչի, ի երկիրս Սպերի, ի յանապատս որ Գանձագրակ կոչի, ի դրան Սուրբ Աստուածածնի, ի թվին ԶԾԱ (1503 թ.), ի լաւ և ընդիր արինակէ է, խազն որիշ արինակէ է, ո գիրն որիշ, խազն աղեկ արինակ է, լուր և զամէնն խազն արինակն եմ փոխել թէ աւելի է եղել քե(թ. 249թ)րել եմ կամ կետել, թէ ցեղոցեղ է եղել, զերկուս այլ եմ գրել, մինչև ի Խաչին այն ձմեռն գրեցի որ վրացին զԱպեր եզարկ, ո զՍոփին կոտորեց, ո զբերդն էան, ամեն ար գ հետ կու փախչէի ո յետ գայի գրեի, զայն մէկալ ամառն եմ գրել, Ա մինչ սլալանցու որ ի սմա կա մի մեջադրեք, զի կար մեր այս է և հշան մալէք է ո յուշ խազեցի ո կապեցի ձեռքէ ձեռք շատ անցաւ լարա եղաւ, մի մեջադրեք:

ՀԻԾԱՏԱԿԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 87ա.—Զանուն մի զունձի:

Թ. 94ր.—Յուսէփին լուսաւորեմ եր սր:

Թ. 111ր.—Ես գ, ես գրեցա թ թվին ՌԾԱ (1652 թ.) գիրս ձեռամբ:

Թ. 112ա.—(տիր) տիրացու Եփրանույին:

Թ. 117ր.—Տանեսցոր ըստուգու:

Թ. 118ր.—Ես գրեմ գիոգիրտուեկցի:

Թ. թ. 119ր և 122ա.—(Գրչափորձ):

Թ. 156ր.—Հրեդինաց, նրեր:

Թ. 160ր.—Օվի:

Թ. 161ր.—Որանապ:

Թ. 171ր.—Զարդարդն:

Թ. 182ր.—Գիրս գրեցա ձեռամբ (թ. 183ա) տրացու Եփրանոսին:

Թ. 185ր.—Գրեցա գրիս ձեռամբ ուուկը Տէր Մանէսին (թ. 186ա) որդի տրացու Եփրանույին թվին ՌԾՀ (1723 թ.):

Թ. 215ր.—Որ փոխանակի:

Թ. 231ր.—Վ, վաղան:

Թ. 251ր.—Վարդան:

№ 250

ԱՂՕԹԱԳԻՐԸ

ԹԵՐԹԵՐԸ 300:—Պրակները՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց աղալ հետևկալ պրակներից.—իջ 4, Ա՛ 9, ԺԴ 10, Բ՛ 11 և ԺԵ 14 թերթ են:—ՄԵԴՈՒՐՅՈՒՅՔ՝ 13,1×10,1×6,5 սմ:—**Նյութը՝** դեղնած և խոնացած ողորկ դիմացկուն բույժը:—**Կազմը՝** կաշևաստ տախտակ, որի երկու երեսին զարդեր են նկարված: Ժամանակին եղել են երկու բնիշներ, որոնք հետագայում ընկել են: Կազմի երկու երեսների կոնակրում կացված է կանաչավուն մետարս մի կտոր, իսկ բնտագայում կազմի վերջում կացված է նաև կապույտ գծանոր սպիտակ, հասարակ, բամբակյա մի կտոր: Զեռագիրը դրված է հաստ և դիմացկուն ստվարաթյուից շինված մի տուփի մեջ, սրճագոյն գույնի, որի չափերը են 15,7×12×8 սմ: Կրան գրված է Յ բիվը:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար, միայն սկզբից և միջին մի քանի թերթ պակասում է:—**Գրույրումը՝** միայնուն:—**Պատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 17: **Գծումները՝** ճշշումնվ:—**Գիրը՝** բուրգիր:—**Զարդագրույրում՝** ձեռագիրն ունի միջակ գեղեցկությամբ մի հատ թոշնագիր (թ. 197ա) և 11 հատ բարդադիր, 3 հատ թոշուններ և ծաղիկներ (թ. թ. 113թ, 167ա և 209թ), և 9 հատ լուսանցագրիր: Վերենագրերը գրված են կարմիր թանաքով, իսկ գըլխատակերը՝ մեկ կարմիր, և ապա սրճագոյն թանաքով:—**Գրիշը՝** Ստեփանոս կրոնավիրո:—**Պատվիրատում՝** անհայտ:—**Տաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1363 թ.:—**Վայրը՝** Ավագ վանք (հավանաբար Թաղենու Սուրբեան վանք, Դարանալյաց գավառում, Սեպուհ լեռան վրա): Այժմ Կամախու գյուղ):—**Տանրույրում՝** սոյն ձեռագիրը ստացված է նվեր Կամիրեի տաշնորդարանից Վեհափառ Հայրապետի միջոցավ 1963 թ. նոյեմբեր ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 113թ.—Ցիշատակարան երգողին բանիս:

Թ. 118թ.—Տեառն Ներսէսի Սրբոյ և տիեզերական վարդապետի և Կաթողիկոսի հայոց, յաղաս երկնի և զարդուց նորայ ի դիմաց նորին. բարտանաբար ի չափ երկուսանիցն պարզեալ ուժից ի խնդրոյ առն բժշկականի և սատղագիտի Միսիքար կոչեցեալ:

Թ. 127թ.—Նորին ի խնդրոյ անուան նախագիծ տաղիս տանց ասացեալ:

Թ. 130թ.—Նորին բան ներտաղական ի խրառ գոց համայնից ի դիմաց մերոյին տանից տանց յիւրաքանչիրս բա...:

Թ. 140թ.—Նորին բան հաւատոյ վասն աներին և եղելոց բարտանաբար ի դիմաց հայկական տանից չափաբերմաբ ոգեալ ի Ներսիսէ:

Թ. 146ր.—Նորին Տեառն Ներսէսի ասացեալ, բան ի խրատանկանց տառմնասիրաց ի դիմաց պարութից տառից ուղանափր չափով պրբ:

Թ. 152ա.—Նախադրութիւնը խրատանկան յաղաց աղաթիցն զոր ասացեալ ի Տեառն Ներսէսի եղանակ Գրիգորիսի հարց վերադիտողի:

Թ. 159ա.—Տեառն Ներսէսի բան խրատանկան ընդհետ այբուրենին:

Թ. 167ա.—Կըշտամբանք և յանդիմանութիւն անձին եղկելոյ և ամենայն յանցաւորի զոր մեջօրս. Վարդան յարմ. գր. լեմիփիռ. Աստուծոյ:

Թ. 176ա.—Բանք միմթարականք և ի խորոց սրտեալ աղերս մաղթանաց եղկելոյ Վ. առ միաժին Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս և ամենայն յանցաւորի ի տեղի հր/թ. 176ր/աշից տնաւրիկանաց ուր կատարեաց մարմնով զգրեալս:

Թ. 188ա.—Դարձեալ աղերս մաղթանաց ողորման լուս Վարդան ի խորոց սրտեալ և ամենայն մեղաւորի աղածին որդին Աստուծոյ:

Թ. 196ր.—Բանք լուսադրականք և ի խորոց սրտեալ աղերս մաղթանաց առ ամենանայրն բարի եղկելոյ Վարդան և ի նման մեղաւորի ուռանաւոր բանի:

Թ. 202ա.—Սղերս մաղթանաց ի խորոց սրտեալ սուրբ կոյս Մարիամ Աստուծածին:

Թ. 205ր.—Բանք վասն անագին և սուլկաի գալլստանն և դատաստանի Որդոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի կշտամբանք և յանդիմանութիւն անձին եղկելոյ Վարդան և ամենայն յանցաւորի:

Թ. 214ր.—Խրատը ոգէշան ասաց. Յովաննէս Գալեցին:

Թ. 224ա.—Նորին վասն ցայգապաշտութեան կիրակի խրատ:

Թ. 227ա.—Նորին խրատ վասն աղօթից և ոգէշանութեան:

Թ. 228ա.—Նորին աղ. Յովաննէսի Գալեցիոյ ասացեալ ի վերայ գրոյ անուան իրոյ, աղ. մի երորդ կիրակի:

Թ. 229ա.—Նորին աղ. Բ. շաբաթի աւորն:

Թ. 230ա.—Սղաւաթք Գ. շաբաթի աւորն:

Թ. 231ա.—Սղաւաթք չորեքշաբաթի աւորն:

Թ. 231ր.—Սղաւաթք հինգշաբաթի աւորն:

Թ. 232ր.—Սղաւաթք որրաթի աւորն:

Թ. 233ր.—Սղաւաթք ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շաբաթ աւորն:

Թ. 234ր.—Սրբոյն Առանիաի վարդապետին ասացեալ:

Թ. 241ր.—Երանելոյն Սրբոյն Եփրեմի ասացեալ բանք աստուծացինք և զոշական և պիտանի ամենայն կրօնաւորի:

Թ. 282ա.—Նորին աբբա Եփրեմի աղօթք:

Թ. 293ր.—Աղօթք և պաղտանք ի մամ սուլկաի պատ:

Թ. 297ր.—Աղօթք Մեսորվայ վարդապետին ասացեալ առ Սուրբ Աստուծածին:

ՀԻԾՍԱՄԱՐԱԾԱՆԵՐ

Թ. 171ր.—Տէր Աստուծոյ ողորմեա գծողի սորս և լիշողաց:

Թ. 176ա.—Տէր Աստուծոյ ողորմեա գծողի սուս և լիշողի ամէն:

Թ. 195ր.—Ասպա ընդ մեծ երախտաց հայցեմ ի ձենչ ով մանկունք նոր Միովնի միջն ի լրումն աշխարհի, և դոր յաղաս Աստուծոյ կատարեցէք (թ. 196ա) զոր խնդրեմ ի ճշմարին ծառայից Աստուծոյ հողացեալ ուկերաւը ի գերեզմանէ իմմէ, զի ձեզ կարի դիրին է ինձ անրա շամ և ագուտ. բահանաց որ անուամք լիշուց զորորմեիս Վարդան և գեղկելի գծողու Սուտիւնուն ի սոր և ի մելարաքահի անձախեկի գենման և սուլկաի պատարագին Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և մարդ որ վասն Աստուծոյ տա ի խելս և լուրասոս սալս մի ողորմութիւն յանուն մերոյ որպէսի մի կրիցեմք զամապօն անագին ի սուլկաի աշխարհածովով մեծ հրապարակին, և մի եղիցուք բոցակզ յանշէց գեմննն, և ի ժամիս անրուն որդանցն վասն չար (թ. 196ր) և անարէն զարեկի գործոց մերոց զոր մեղար սուաչի Աստուծոյ յամենայն ժամանակս մեր բոլոր անձամք մերով, ամենանայրն բարի, չարշանաւոր և արեամք և յարութեամք միաժին որդոյն իրոյ Յիսուսի Քրիստոսի, չնշեսց զմեսու նորս և ծնաւղա նորս, և փըրկեսց զնա ի չար աշխարհին, բարեկասութեամք ամենայն սրբոց, և համագոյ սրբոյ Երորդութեան վայելէ ամենայն արքնութիւն և բարերանութիւն և երկրպագորիւն այժմ և միշտ:

Թ. 202ա.—Զգծողու լիշեա:

Թ. 205ա.—Տէր Աստուծոյ ողորմեա սուացողի և գծողի, և բարեմիս ընթերցողի ամէն:

Թ. 209ա.—Զգծողու լիշեա:

Թ. 214ա.—Արդ ո՞վ պատուական եղբարք որք աւկտիք և արինակի ի սմանէ, լիշեսչիք յաղաւոս ձեր զգծողու զՍուտիւնուն և զգնողան իմ և Աստուծո զգեալ լիշեսց:

Թ. 223ր.—...որք կարդայք և առնէք ողջ Երութ հոգով ի սէրն Աստուծոյ որում փառք յախտեան:

Թ. 282ա.—Արդ աղաչն զքիստուսամէր ընթերցողս և որ լսէք զլուսաւոր և զհոգիանիրաց ալօրս, զեղկելի և զքազմանեց գծողու զՍուտիւնուն լիշեսչիք յաղաւոս ձեր, նայն զգնաւոս իմ և զամենայն ազգայինն, և Աստուծո զգեալ լիշէ, ամէն:

Թ. 300ր.—Յամի Պէմ (1363 թ.) յամենան յունիութիք Գ եղև զրա գրչութեան աղաթական բանից Սրբոյն Ներսէսի Կայեցոյն և Սրբոյն Վարդան և Եփրեմի Խորին ասորյ, ի Սուրբ և հողաւալու անապասու որ կոչի Աւագ վանք, ընդ հովանաւ Սուրբ Սուտերելոց և կենսակիր Սուրբ նըշանաց և այլ բազմանաւոր սոր նշարացու որ աստ կան:

(Շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


	Էջ
ԱՄԵՆԱՁՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Սուաբել վարդապետ Դավիթ ծեցու մահվան երեքրարյուրամյակի առթիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Սուաբել վարդապետ Դավիթծեցի	6
Հանգիստ Նորին Մրություն Մոսկվայի և համայն Ռուսիայի Տ. Ալեքսի պատրիարքի ԼԵՇ—Սուաբել վարդապետ Դավիթծեցի	8
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՑԱՆ—Սուաբել վարդապետ Դավիթծեցի	12
Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ—Սուաբել Դավիթծեցի	15
ԱՐԹՈՒՐ ՀԱՏԻՏՅԱՆ—Յաղագս նորոգութեան լուսակառոյց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ—Հատվածներ «Պատմութիւն Սուաբել վարդապետի Դավիթ- ծեցոյ» գրքից, աշխարհաբար թարգմանությամբ	22
ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ—Սուաբել վարդապետ Դավիթծեցու «Պատմության» երեք հրատարակությունները	36
ԱՐԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ—Պատմագիր Սուաբել վարդապետ Դավիթծեցու հուշարձանի շինության հարցը «Արարատ»-ի Էջերում	40
Սուաբել վարդապետ Դավիթծեցու մահվան 300-ամյակին նվիրված հանդիսություն Մայր Աթոռում	45
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	48
Բարձի հայոց Ա. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախոմքը Մայր Աթոռում	51
Հանգիստ գերաշնորհ Թ. Չափարչ եպիսկոպոս Գոյզումճյանի	52
Օ. Ս. ԵԿԱԿՅԱՆ—Երմակի Ա. Կուրապետի վանքի հայերեն ձեռագրերի հավաքածուն Ցուցակ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	54
Ց Ա Յ Ա Կ Ա Ն Ս Ս Հ, Է Զ Մ Ի Ա Շ Ի Ն «Էջմիածն» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ,	56
Հանձնված է արտադրության 29/IV 1970 թ.: Մտորագրված է տպագրության 8/VI 1970 թ., տպագրական 4 մամուլ թուղթ 60×84 ^{1/8} , պատվեր 349	60

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷԶՄԻԱՇԻՆ

«Էջմիածն» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ,

Արմենական Հանրապետություն
Հանգիստ գերաշնորհ Թ. Չափարչ եպիսկոպոս Գոյզումճյանի
Հանգիստ գերաշնորհ Ա. Կուրապետի վանքի հայերեն ձեռագրերի հավաքածուն
Ցուցակ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի



Հանձնված է արտադրության 29/IV 1970 թ.: Մտորագրված է տպագրության 8/VI 1970 թ.,
տպագրական 4 մամուլ թուղթ 60×84^{1/8}, պատվեր 349

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1970 թ.